



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

١٤٦  
2266

1999

ՕՍՍԻԱՆԱՅ

ՍԿՈՎՏԻԱՅԻ ՔԵՐԹՈՂԻՆ

Գ. ԴԱՐՈՒՆ

ՔԵՐԹՈՒԱԾՔ

ԹՎԱԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻՍԿԱՆԷՆ

ՊԵՏՐԱՍ Ե. ԱՏԻՎԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏԵՏԵՍԵԱՆ

ՊԱՆԺԷ ԳԱՐՈՒ ԷՍԱՏ ԷՅԷՆՏԻ ԽԱՆ ԹԻԻ 13

1876

43204-4. 7

# ՀՕՍՍԻԱՆԱՅ

ՍԿՈՎՏԻԱՅԻ ՔԵՐԹՈՂԻՆ

Գ. ԴԱՐՈՒՆ

ՔԵՐԹՈՒԱԾՔ



1642.

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԵՆ

ՊԵՏՐՈՍ Յ. ԱՏՐԱՒՆԻ



28041-62

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ՊԱՆՃԷ ԳԱՐՈՒ ԷՍԱՏ ԷՃԷՆՏԻ ԻԱՆ ԹԻԻ 15

1876

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Օսիան այն քերթողներէն է զորս Հիւլօ « վայրի հանճար » է կոչած : Նորա քերթուածոցը մէջ չկան ո՛չ քաղցրադայլայլ սոխակ , ո՛չ հեղակարկալ վտակ , ո՛չ անուշաբոյր ծաղիկ , ո՛չ կանաչազարդ մարգեր և ոչինչ այն բաներէն՝ որոցմով մեր բանաստեղծներն իւրեանց գրուածները կը պճնեն : Օսիան՝ ամպերու , շանթերու , մրրիկներու , մէգերու , ամպրոպներու , մէտէորայներու , մրկածիններու , վերջապէս իւր կլիմային սեպհական իրերու վրայ կը խօսի մեզ . և երբ կարդալէ յետոյ փակենք գայնն չենք զգար թէ կարդացինք , այլ այնպէս կը թուի մեզ թէ կրթուեցինք : Վերջապէս Օսիան , իւր պակասութեամբն հանդերձ սքանչելի քերթող մ'է :

Երբ ասկից մի քանի տարի յՅունի կէօթէի վերթերին հայերէն թարգմանութիւնը ծանօթացաւ ազգին , գրեթէ նոյն այն օրէն սկսեալ Օսիանու գործերուն ալ ծանօթանալու փափագ մը ծնաւ 'ի նա : Խիստ սակաւթիւ անձինք , այսինքն միայն անգղիարէն գիտցողները կրնային կարդալ զանոնք , և դժբաղդաբար ալ ցարդ այն անգղիագէտներէն ոչ մին ձեռնարկած էր թարգմանութեամբ 'ի լոյս ընծայել այն քերթողին քերթուածները , որու համար նոյն ինքն Կէօթէ ըսած է քիչ մը չափազանցութեամբ թէ « դեր 'ի վեր է քան զՀոմեր » : Բարեբաղդ առթիւ մը Օսիանու գործոց Գաղղիարէն մէկ թարգմանութիւնը , տպեալ 1805ին , ձեռուընիս անցնելով՝ ձեռնարկեցինք թարգմանելու զայն :

42266-60

27 2969

## Ե Ր Գ Ե Ր Ե Կ Ո Յ Ի Ն

ԽՍԻՍՐ աղջամղջին դեռ նոր պատեց զերկնից երես :  
Ահա՛ մթացեալ փառք հին հինօրեայ ժամանակաց ,  
իրբեւ պատկեր մի ներկայ մրտացըս մէջ գան դրողմին ,  
Եւ ներլընչեն յիս եղերերգս արժանաւոր իմ նախահարց :  
Ահա՛ ամեն ինչ լուռ , հանդարտ . . . յորմոց ի վայր կախեալ շարժին  
Բաղմաղի քընարք երգչաց , գողցես խոնջեալ ի յերգելոյ :  
Ձիս , զարդիս մի դիւցազին զոր փառք և եթ բարձրացուցին ,  
Ձիս իմ քայլք դողդոջազնացք առեալ տանին ի Սէլմա : (1)  
Ո՛վ Սէլմա , դու արքունիք պերճ արքայից , և ապաստան  
Յաղթողաց , Ֆէնկալ ալ եւս չտար հրաւէր ի քոյ խնջոյս .  
Քու որմերն հսկայաչէն՝ արդ մամուապատ կիսակործան ,  
Արձագանգ չեն տար ձայնից նուազաւոր հանդէսներու :  
Քանզի ահա՛ մինչ իսկ Ֆէնկալ անյաղթելին ընկաւ պարտեալ ,  
Ամեն ննջէ իմ բոլորտիք ի քուն ահեղ դամբանական . . .  
Ո՛հ , չկարեմ ես մեռանիլ , աղեկըտուր և իմ հէգ ձայն  
Ապագայ պատմէ դարուց որ ինչ անցեալ մեր պերճութիւն ,  
Գիշերոյ դշխոյն մինչդեռ չեւ եւս ելեալ նաղի յերկինս ,  
Մինչ ծաղիկն ընդ մթութեամբ կորուսանէ զերփն իւր անոյշ .  
Մինչդեռ շողիք երեկոյեան իրբեւ ամպ ինչ թանձրախիտ ,  
Անտառներն , լճերն , լեռներն չըջապատեն բովանդակի .  
Ահա՛ հողւոյս մարած ջահը նորէն վառի յեռանդ ,  
Երգելու ծախէ պիտոյք սիրտն ու մարմինն իմ բովանդակ .  
Գորովակին ինձ Մալվինայ , հրապոյր մարմնոյս ծերացեալ ,  
Տայ ինձ տուն ի շունչ անոյշ և օգնէ ինձ հզօր բազկաւ .  
Առաջնորդէ զհէգ Օսիան առ ոտս վայրի ժայռին որ աստ .  
Ձօսիան , որ գայ նստել ընդ ոստախիտ հսկայ կաղնեաւ .

Յայնժամ անդուծ նահատաւորին իմ մեղմանայ դաւանութիւն .  
 Ձիմ զսիրտ զարթուցանել զայ զօրաւոր մի ձայն աղիւս ,  
 Եւ այս ձայնն է անցելոյնն . . . յիշատակաց արժանի դարք ,  
 Դիւցաղնութեամբ ծածկեալ համակ դան իմ աչաց առաջի .  
 Եւ ես զանոնք ժողովեմ, և յիմ նուագս հայրենասէր ,  
 Հազար և մի քաջաց պետաց անմահացնեմ ըզյիշատակ :  
 Ա՛յ, այս երգերն չեն նման , ո՛չ երբէք վտակին ճախճախուս .  
 Այս երգերն՝ ողբ Լեւոնի յիշեցընեն պերճ հանդէսներ .  
 Քաղցր , եղերածայն , մինչ իսկ զօղս յապուչ կրթեն :  
 Ա՛հ դու երկիրդ Լիւթաի , ո՛րքան սիրեմ քու եղերքներն .  
 Օսքարի յորժամ այրին ի սայր մատանց թափառական ,  
 Ոգեւորէ ըզրազմաղի քընար փողով ծածկեալ համակ :  
 Դաշնակութիւնքըն տարփատենչ մինչ իսկ լերանց տան կայթուել :  
 Ա՛հ դու սիրունդ իմ Մալվինա , զոր հէգ ձայնիւ ողբայ քընարս .  
 Տո՛ւր, ո՛հ պաղատիմ, աու՛ր իմ տխուր ձայնին ականջ .  
 Ա՛վ դու դուստր չքնաղագեղ, Ե՛կ, Ե՛կ, անդրէն արծարծել  
 Ընդ բեռամբ տկարացեալ տարեաց հոգւոյս ըզխանդ՝ ւ աւիւն :

### Օ Ի Ն Ա

Տակաւին ամբ չէին ձնչեր զիս ընդ բեռանցըն ծանրութեամբ .  
 Յէնկալ զինեց զիմ բազուկ , հրամայեց ինձ , և մէկէն  
 Արագասահ իմ նաւերն , անամպ ու պարզ երկնքի մ՛տակ ,  
 Ի ջինջ լոյս թաթլէնի (2) զուղի կալան դէպ յիւն-Քօր :  
 Ծերունազարդ Մ-ւը հիգին պիտ՝ ցուէի շիտթութիւն .  
 Գոռ պատերազմ մանչիք անդ յեզերս հրգօր հեղեղաց .  
 Մտերմութիւն քաղցրագորով, զոր յարգէին ամբ , ժամանակ ,  
 Չգէնս նորա կրցէին հօրըս զինուցն սոսկավիթխար :  
 Հասայ , ու ճանչցաւ նա զղիւցազանց ըզզըրօջ .  
 Եւ իւր ձեռքը ձգելով ինձ , զայս օրինակ խօսեցաւ .  
 « Թագաւորին Մօրվէնի ս՛ւտար , այն ի՛նչ ոչ ի առաջնորդեց  
 « Զբեկ ինոց վերայ բրոց դաւարապատ ակնապարար :  
 « Տիւնթարն , պետ ի յիւնի (3) և մերձակայ դաշտավայրաց .  
 « Տիւնթարն էր ասորիւսու պեղեցիութեան իմում գտեղ ,  
 « Չկարոցի սալ սակցն զայն ի ձեռս նորա , քանզի դիտես  
 « Թէ նախնիք իմ, նախնիք նորա ընդ միմեանս էին սորս :

« Սակայն ահա՛ տասն հազար պատերազմիկ , յիւր հրաման ,  
 « Յերկիրն մեր ամենուրեք սփռեն ըզքէն իւրեանց վրիժուց .  
 « Եւ ես անոք անօղնական բարեկամացըս դիմեցի .  
 « Նրբա ամենք փակին զականջ առ իմ աղբս և խնդիր .  
 — « Գիտե՛մ, գիտե՛մ որ ինչ քեզ ցաւ . ահա՛ եկի քեզ սփոխել ,  
 « Եւ յիմ բազուկ պաշտպանել զփառաւոր քոյին զերկիր .  
 « Մի՛ կարծեր թէ Օսիան ստուեր մ՛ ըլլայ խաբեպատիր ,  
 « Որ խոյս տայ և անհետի , յորժամ վտանգ կայ առաջի .  
 « Խոտացայ ես առ Յէնկալ զլսոյդ վերայ կենալ պաշտպան .  
 « Գինս եւս յիչէ նա դեռ զայն օր , յորում մերիկ շղթայաղերծ  
 « Առեալ ձեզեց զնա յափուս , քում պերճութեան տկանատես :  
 « Այլ օգնութիւնքդ և նուէրներ սփոխեցին զնորին վիշտ .  
 « Եւ դու առեր շնա ընդ քեզ և ի սեղանն և ի խնջոյս .  
 « Սակայն որքան արի է նա , այնքան նաեւ երախտապարտ :  
 « Տեսանես յիմում ձեռին փայլատակի թընծարի սուր .  
 « Եւ թէ ես իմ եռանդեանն արդարացի եմ վատահեալ ,  
 « Քոյդ , ո՛ Մալօր , մի՛ ելցէ յոյսն ի դերեւ որպէս երաղ :  
 — « Մօրվէնի մարտիկներուն ծանօթ է ինձ արիութիւն  
 « Եւ որդի վեհ արքային , և իւր նեցուկ տկարութեան  
 « Փայլատակես յիմում սրտի նշոյլ յուսոյ անուշակ ,  
 « Եւ քու ձայն փտահարար զիմ տխրութիւն մխիթարէ :  
 « Զայս օրինակ մեզ բարբառի մերկային Քրիւթլօտա , (4)  
 « Յորժամ չուրջանակի մէտ՛որական պատեալ հրովք ,  
 « Իւր անոյշ ձայնն զժորժորս թնդացնել զայ Լօթայն  
 « Եւ ի վերայ Ինիթօրի (5) ժայռից լուել տայ հոգւոց :  
 « Սակայն արծիւ բարձրաթռիչ ահա՛ թողու զօդոց պարոյր .  
 « Ահա գլխեր յողնատխուր , լոխի մնջիկ և քողապատ ,  
 « Մկրի զիւրն ըթթանալ աստղօք պճնեալ զիւրն ասպարէղ .  
 « Իկո՛ւր , յիմ աշտարակս հանգչել , աշնիւ որդիդ նուագաց : »  
 Եմ ես այո՛ , որդի նուագաց : Տեսի յայնժամ ես զՅինա ,  
 Նկարեցաւ դիմաց վերայ մի թուրութիւն աղետաբեր ,  
 Եւ բազմաղի քնար նորին ընդ մատամբն հըլու , հանդարտ ,  
 Եղիւնի հառաչանքներ արձակէր զուարթ երգոց փոխան :  
 Աչերն նորա ծաւի՛ւ աղու , զոր մըթին ամպ մի պատեր ,  
 Գալարէին լցեալ սիրով, և տխրութեամբ և արտասուօք ,  
 Արպէս երկու երեկոյեան աստղ փայլին ի տերեւս .  
 Եւ կամ որպէս մեք տեսանեմք , վայրի ժայռին աստ յըստօրոտ  
 Զարտասուս աւաւտեան , թրթուալ սիրուն ծաղկանց վերայ :

Արքայն լուսոյ և տուրնջեան մերձ էր ելնել յերկնից կամար ,  
 Եւ սիրուէ զճերմութիւն ամենուրեք գեղածիծաղ .  
 Եւ դեռ եւս լէի ես ըզձայն կուսին տարրատենչիկ :  
 Յանկարծ արմկոյոյզ ձայներ հասին ցմեր ականջ .  
 Պատերազմ սորսափ ու մահ որտայսին յամենուստեք .  
 Յիւնթայսն մեծատարած դաշտէն ի մեզ յառաջանայր .  
 Թաւա և յիմ յաչաց , որ բոցավառ ատելութեամբ ,  
 Փայլակ , շանթ ու կայծակ միանգամայն արձակէի :  
 Ի զոր այնքան մարտիկք ընդ երկաթեայ մի պատնիչիւ ,  
 Զանաղին ըզպետն իւրեանց պատսպարել . զի անկաւ նա .  
 Ընդ քարչ ածեալ տարի ըզնա առ տարարողըն Մալօր .  
 Եւ ծերունին սերաիւ սիրով իւր բաղկաց մէջ գրկեց զիս .  
 « Օտիան , ըսաւ նա ինձ , պէտք չէ երթաս դու այս տեղէս  
 « Առանց ընդ քեզ տանելու զվարձ քոյին վրսեմ արիւթեան .  
 « Դուստր իմ հատուսցէ քեզ որ ինչ ըրիր դու մեզ համար .  
 « Գեղեցկութիւն , ու շնորհքներ , և կուսական անմեղութիւնն  
 « Իւր ամուսնոյն հոգին ի խինդ պիտի բերկրեն ճշմարիտ :  
 « Քեզ կու տամ դայն . . . և երբոր գայ վարդամասն արշալոյս  
 « Թող ընդ քեզ առեալ երթայ մրրկալից ծովուն վրայ :  
 « Եւ ալ եւս ինչով կրնամ ընել ըզքեզ ես երջանիկ .  
 « Ընդունէ՛ զթանկագինն , գեղեցկագոյնն իմ գանձերուն : »  
 Յերկրորդ նուազ մթին դիշեր այն սառնապատ դաշտին վերայ  
 Իջաւ տարածեցաւ բերելով հետն և ցուրտ դեղեամ .  
 Այլ քուն փախաւ յիմ աչերէն . . . և ցաւագին հառաչանքներ  
 Բաղիւնն զականջս իմ ուշադիր . Օինա էր տարաբաղդիկ ,  
 Ըն մինակուկ մթութեան մէջ նստած ողբայր զիւրն սէր :  
 « Ի՛վ իմ սիրոյս և արտասուացս դու առարկայ մէկ հատիկ  
 « Թերեւս հիմայ քու մենաւոր ժայռին վերայ տիրադին  
 « Հստած , աչերդ յերկինս , ըզդարձ արշալուսոյն ըսպասես ,  
 « Հեռի ինձմէ քու աչերէն արտասունքներ թափելով :  
 « Աւա՛ղ , սակայն աւելորդ են փափուկ սրտին քո մաղթանք ,  
 « Չի պիտի գայ 'նդ հուպ արշալոյս առաւել եւրս գեղեցիկ .  
 « Այլ ճառագայթք իւր նորածին չպիտի գտնեն զիս ալ եւս  
 « Ի հայրենին բնակարան ուր այսքան ամբ անցին հանդարտ :  
 « Ի՛վ լերինք դուք սեպացեալք , և մըթագին բարձր անտառք ,  
 « Մենաւոր ձո՛րք և ծործորք , դուք սեւ ժայռեր , զով հովանիք .  
 « Ալ չըսիտի տեսնէք դուք զիս , հալածել զվայրի այժեամն :  
 « Եւ դու ընարդ իմ քաղցրաձայն , որ քանիցս հանդարտեցիր

« Յուզեալ հոգւոյս զդառըն վիշտս , հանգի՛ր ալ եւս լուռ ու տխուր  
 « Արքայից ի բնակարան . և թո՛ղ փոչիք ծածկեն ըզքեզ : »  
 Ալ լուեց նա : Եւ ես յանկարծ ի մթութեան առ նա ընթացայ .  
 « Ի՛վ Օինա չքնադադեղ՛ , ըսի իրեն , դադրի՛ն ցաւերդ .  
 « Իմ է բաժին սրբել զարտ՛սուս զոր տայ հեղուլ սէր անարժան .  
 « Վորվէնի ի դիւցազանց հեռի՛ հաճոյքս բարբարոսաց  
 « Սեղմելու յիւրեանց ի գիրկս կուսան երկնոտ և աղբերկ :  
 « Դո՛ւստր արքայից , գեղեցկութիւնդ յափշտակիչ արդարեւ ,  
 « Վայրիկ մի զարթոյց տենչանս յիմու՛մ ի սիրտ . այլ սակայն  
 « Լուսոյ ձայն մի արդարադատ որ դոչէր ինձ խստօրէն ,  
 « Օտիան , պէտք է յարգել թշուառութիւնն . դիւցազնորդի՛դ ,  
 « Արժանի՛ եղիր քու հօրդ , խղճէ քու սէրն որ անիրաւ :  
 « Արտասուք քո , ո՛վ Օինա , մի՛ այլ եւրս հեղցին առասա .  
 « Տիւնթալմոնի թողում յաւէտ զիմ իրաւունս և երթամ : »  
 Յայնժամ սիրահարին խորտակեցի ձեռին զերկաթս :  
 Զիս՞որդ , ըսի Մալօրի , կամիք սիրոյ կապերն խըզել .  
 Չի Տիւնթալմոն իրր յաղթական զիւր աղեղըն վայլեցոյց .  
 Եթէ նախնիք ձեր խղեցին ըզկապըս մեծ մշտերմութեան .  
 Արդ աւասիկ ոչ եւս նոքա որս են դառն ատելութեան .  
 Եւ զրաժակ ուրախութեան նոքա ի ձեռս կախալ ըմպեն  
 Յօթեւանան այերական , ուր որ հանդարտ են բնաւին :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՕՒՆԱԻ

- (1) Ալմա , Ֆէնկալի պալատին անունն էր :
- (2) Բաթլէն , երեկոցեան աստեղ անունն հին Սկովտիացւոց լեզուաւ :
- (3) Լիւթէրի՛ իրլանտայի մէկ մասին նախկին անունն է :
- (4) Քրիւթլօտա , Մալօրի նախնեացը մին :
- (5) Ինիսթօր , Օրկաթեան կղզեաց մին :

# ԵՐԳ ՖԷՆԿԱԼԻ

## Ի ՎԵՐԱՅ ԱՆԵՐՄԱՆ ՊԱՆՈՒԹԱՅԻ

Ոչ սա է այն գերագոյն քաղաքըն պերճ մեծապայծառ  
 Որում փառք ընդին միշտ զանչէն վայրս և զանապատս :  
 Աշտարակացն իւր կատարք յօդս և յամպս ծրարէին :  
 Եւ արդ խտտոց ներքեւ ոչնչացեալ կայ և անհետ :  
 Սուգ , անյուսութիւն , և հառաչանք պատեն ըզնա :  
 Ես ինքն տեսի զնորին նշխարս . ամենուրեք աճի մահուս :  
 Ամենուրեք յՅթանաց շունչ թօշնին ծաղկուէր , չորանան ծառք :  
 Դեռ եւս կաղնիք ոմանք ձգեն հովանի մի մահասարուս :  
 Սեաւ հեղեղաց , որք զահալէժ անկանին վայր , փրփրոց վերայ :  
 Առէ՛ք , բարձրք , եղերերգակ ըզքնարըս ձեր , և երգեցէ՛ք  
 Զերգըս մահու . և ողբացէ՛ք ըզտխրալի ճակատագիր  
 Մեռեալ քաջաց , սփոփեցէ՛ք նոցին զուրուս տարարաղդիկ :  
 Անկան նոքա . և մեր անկցուք նոցա նման թշուառութեամբ :  
 Ո՛հ , որպիսի՞ վրէպ ըզքեզ քարչէ , ո՛վ մարդ արկար և սին :  
 Դամանակ , ընթանալով միշտ անստոյգ , սու ոտն կոխէ  
 Քոյդ խընամբներ և իղձեր : Այսօր , ուրախ և բերկրալի ,  
 Ի բարձանց դիտարանացդ քոյին հայեաց մինչ ցհեռակայս  
 Տարածի , և ըզսահմանս անհուն դաշտին գրկէ համայն :  
 Այլ վաղիւ ընդ վերմակաւ մըթին ամաց ծածկեալ քնիցես :  
 Եւ յայն լքեալ ի դիտարանս շնչեսցէ հողմն անապատին :

Ո՛ր են ձեր հարք , արի մարտիկք . ասողունք էին նոքա ի մարտս :  
 Սակայն արդ , սին սառուերներ , ճակատնին զուրկ ի պերճութեանց :  
 Անոնց համբաւն միայն մեզի հաստատէ թէ ապրեցան :  
 Սակայն փառք նոցին աստ անդ ամենուրեք է զրոյմեալ ,  
 Արիական իւրեանց բազուկ քանգի յաղթեաց թշնամոյն միշտ :  
 Եւ զի ուրեմն պարտ է ընկճիլ , թողցուք անուն հոչակաւոր :  
 Քայլենք և յետ մահուն ի փայլ անմահութեան լուսալիր :  
 Ինչպէս , ասող սուրնջեան , թէ եւ ծածկի ի քօղ սեաւ  
 Յարեւմուտ կոյս , սակայն թողու հետք լուսաւոր ճառագայթից :

Կեանքս զահալէժ միշտ ընթանայ դէպ իւր վախճանն , և իմ բազուկ  
 Ընդ հարուածօք այսքան ամաց տկարացաւ անհնարին :  
 Այլ չանկայց ես , ո՛հ , ո՛չ , չանկայց ի խաւար անդըր մոռացման :  
 Նախնիքս առ իս խոնարհին յօթեանէն իւրեանց չարժուն . . .  
 Ո՛վ Հայր իմ . ո՛վ դու Քօճակ . ընդ հուպ քեզի պիտո՛ միանամ :

Ահա՛ այսպէս երգէր Ֆէնկալ : Եւ մեր խորին ինչ լուսութեամբ  
 Խոնարհեալ մեր քնարից վերայ ձայնին ականջէաք :  
 Այսքան անոյշ չէ որսորդին՝ անտառներու բարեկամին՝  
 Զեփեռին շունչ , որ յայերց զով ու անոյշ փչէ յերկիր :  
 Ֆէնկալ , ժպտէիր դու որպէս յաւուրն հարսանեկան :  
 Ո՛րքան ամբիժ էր քոյ ճակատ . և ո՛րքան ձայնդ էր մեծարոյ :  
 Այլ , հայր իմ , ոչ ոք երբէք իշխեաց լինել ընդ քեզ ոսոխ :  
 Ընդ քեզ , որդիդ Քօճակի , հղօր արքայդ Մօրվէնացուց :



# ՀՐԱԺԵՇՏՔ

## ՕՍՔԱՐԻ ԵՒ ՄԱԼՎԻՆԱԻ

### ՕՍՔԱՐ

Անտառաց մէջ հնչէ շեփոր  
Ֆէնկալ կոչէ անդ դիւր բանակ .  
Պէտք է մեկնիմ, սիրոյս հատոր ,  
Երթամ փառաց առնում պրսակ :  
Ո՛հ , դառնապէս մի՛ լար ատանկ .  
Հապա ա՛ն քու քնարըն փառաց ,  
Քիչ ատենէն մեք պիտի գամք ,  
Ի յաղթութեան թեւըս բազմած :

Երկնից կապոյտն աչացդ մէջ է ,  
Քու շունչ նոյնն է ընդ զեփեռոխն .  
Եւ քու ժըպիտն ալ անոյշ է  
Քան զարեւուն շողն առաջին :  
Քու փախուկ ծոցն է ըսպիտակ ,  
Քան ըզփետուրս սէգ կարապին .  
Կը թողում քեզ այրի մինակ ,  
Ես , տարփածուդ և ամուսին . . .

Ըզգիւցազունս , լուր , կոչէ մարտ .  
Մընաս բարեա՛ւ , իմ սիրական .  
Ահա՛ թողում վիճակ հանդարտ ,  
Վատութենէ ալ խոյս պիտ՛ տամ :  
Ալ եւս մի՛ լար դու իմ վերայ ,  
Գիշերէն վերջ՝ գոյ արշալոյս .  
Արարս միշտ քովդ պիտի ըլլայ ,  
Չեմ թողուր քեզ , հատոր հոգւոյս :

Այլ անգութ բաղդ թէ դիս պատրէ ,  
Եթէ մեռնիմ , արտասուելով  
Յայնժամ շիրիմ մը ինձ կանգնէ՛  
Փըրփրահոսան հեղեղին քով :  
Երբ երկորին մըթին շողիք  
Մեր եզերքներն ողջոյն պատեն ,  
Պիտի իջնեմ ես քու քովիկ ,  
Ամպոց շարժուն օթեւանէն :

### ՄԱԼՎԻՆԱ

Օսքա՛ր , աղջիկ եմ դիւցազանց .  
Ճառանգ իւրեանց եմ արութեան .  
Եւ որսալով զհիւրս անտառաց  
Նետըս սովոր եղեւ մահուան :  
Չանոյշ հաճոյս հանգըստութեան ,  
Ահա՛ դո՛հեմ վասն հրոշակին .  
Եւ նետըս որ վարժ է արեան ,  
Պիտի դանէ սիրտ դիւցազին :

### ՄԵԿՏԵՂ

Բարեա՛ւ մնայք , Մօ՛րվէնի անտառք , վայրի դուք ծայրեր ,  
Դուք՝ սեա՛ւ հեղեղք , դուք՝ լու՛ւռ ձորք , և դուք՝ յստա՛կ դետակներ .  
Օսքար և իւրն Մալվինա ահա՛ ալ եւրս երթան  
Բնտուելու երկորին կամ փառք և կամ զերեղման :

ԵՐԳ ԱՌ ԱՐԵԳՆ

Արքայդ լուսոյ և աշխարհի, ո՛վ դու մարտիկ սուկեհեր,  
 Ո՞ր ձեռն արդեօք տուաւ քեզի զայդ քոյին զրահ բոցավառ,  
 Թողուց տարածութիւնն որ անոր մէջ թռչիս, սահիս,  
 Եւ որոշեց ի կապուտակ յերկնից կամար ըզքոյդ շաւիղ:  
 Ոչ մէկ աստղ բառնայ առ քեզ ճակատ յոխորտ հակառակորդ.  
 Եւ աղջկունք մութ գիշերոյն ի քոյին լոյս դալկանան.  
 Եւ լուսնկայն քու առջեւէն փութանակի խուսափի,  
 Ճառագայթք նորա երթան յալեաց ի ծոց լինին անհետ.  
 Ընդ հարուածիւք միացեալ բազում ամաց և Օթանաց,  
 Բարձրադիտակ եղեւնին անկանի գլուխ ծերացեալ.  
 Մինչ իսկ լերինք, հսկայ լերինք, զորս ժամանակ տըկարացոյց,  
 Զախջախեն ըզձորավայրս ընդ ծանրութեամբ բեկորացն.  
 Այլ նախանձոտ անգութ դարք խնայեն քոյին գեղեցկութեան.  
 Իջիես դու միահեծան իբր թագաւոր, համայն երկնից,  
 Եւ ընդ քեզ ընկերանան միշտ յարածամ ուխտք սիրայինք.  
 Յորժամ պայթի մրրրիկ, և մրռնչէ յօղոց պարոյր,  
 Յորժամ հողմունք ի միջոյ փայլատականց սահեցընեն,  
 Զայն ըզկառսն որոտընդօտ որ պարփակէ ըզկոյծակ,  
 Երնւիս, փայլիս, ծարիս, երկիր ամբողջ մըխիթարի:  
 Բարէ՛. ո՛րքան ատեն է այս որ լուսաւոր քու ճառագայթք  
 Զեն բաղխեր այս իմ աչացս որոնք զուրկ են տեսութենէ:  
 Այլ եւս չպիտ' տեսնեմ զքեզ, մինչ իսկ եթէ յասպարիզէդ  
 Ո՛վկիանոս մ'հրոյ, լուսոյ, հեղուս յաշխարհ յընդհանուր.  
 Մինչ իսկ եթէ գէպ յարեւմուտս, խումբ ըստուերաց պարառիկ  
 Եկնացեն ընդ քեզ, և կամ աղջամիջին մըթին ալիք  
 Մածիկ սցեն ըզքեզ ի ծոց անդրր խոնաւ մի զնդանի:  
 Այլ դուցէ՛, ո՛վ արեգակ, մի եղանակ գոյ և եթ քեզ.  
 Թերեւս ընդ ծանրութեամբ բեռին ամաց նուաղելով,  
 Յաւոր միում և քոյդ բաժին լիցի մեր բաղդ առհասարակ.  
 Անդգայ թերեւս ըլլաս տուաւտեան առ քեզ ձայնին,  
 Եւ ննջես հանդարտօրէն և խաղաղիկ ի մէջ ամսոց:

ԼԱԹՄՕՆ

Ն Ի Ի Թ

Լաթմօն՝ Հիւսթի որդին, Պրըթօն թագաւորը, Ֆէնկալի Կրլան-  
 տա երթալէն օգտելով՝ ուզեց Մօրվէն արշաւել: Մինչեւ Սէլմա  
 պալատին դիմացը եկաւ. բայց երբ զանի պաշարելու պիտի սկսէր,  
 Ֆէնկալ հասաւ: Լաթմօն բլրոյ մը վրայ քաջուեցաւ, ուր գիշերը  
 բռնուեցաւ, և Օստիանի ու Կօշի՝ Մօրնի որդւոյն գերին եղաւ:  
 Դիւցազներգութիւնը կ'սկսի, Ֆէնկալի՝ լերան վրայ երեւցած  
 վայրկեանէն:

=====

Որմերուդ մէջ, ո՛վ Սէլմա, ի՞նչ խաղաղութիւն մահասարուս:  
 Եւ ոչ մէկ ձայն վրդովէ քոյդ անտառաց ըզլուութիւն.  
 Ընդ հեռաւոր կլիմայիւք Ֆէնկալ լարէ զաղեզն ուժգին,  
 Եւ երկիւղ և սուգ պատեն աստ հոյսիապ գիւր աջքունիք.  
 Զքնաղ դստերք Մօրվէնացւոց քան զարշալոյս կանխեցին,  
 Եւ աչք խրեանց արտասուածութեամբ ի վերայ ջուրց տառանին...  
 Այլ դեռ ոչ եւս Քօմալի արի որդին գայ աստանոր  
 Զի մունչէ հիւսիոց հողմն և արգելու ըզտորմիզն:

Ի՞նչ այս հեղեղ սեւաթորմին որ իջանէ ի լերանց  
 Եւ մեծամայն գալարէ աղմկայոց զալիսն ի վայր:  
 Լաթմօն է և իւր բանակ ըզգաչոտ մեր լնու ահա,  
 Եւ ի Սէլմա յանդգնաքայլ յառաջէ նա գիւր ուզին.  
 Արքշիւս ի յոյս խաբէպատիր՝ զինի՛ կոխել ընդ ստամբ  
 Հպարտութիւնն այս պալատին, համայն ազգաց իսկ ծանօթ.  
 Արիք բացակայ են. և միթէ այս գուռ վաչտաց գէ՛մ  
 Սէլմայի երկչոտ կուսա՞նք պիտի երթան մարտնչի:  
 Այլ փախի՛ր, սէզըդ օտար, փախի՛ր...  
 Որ պարզին մեր առագաստք ի հեռաւոր ծովուն չի մտնի:  
 Ֆէնկալ, յաղթող ալեաց, յաղթող հողմոյ, յաղթող բաղդի,  
 Ածէ անդրէն ի մեր յաշխարհ գիւրեան արի ըզմարտիկս:



1642  
29-2082

Մրտանք ի ծովածոց . և Օսիան անգուպելին  
 Բիրոյն ելաւ վերայ , և իւր աշկուճք տեսին անդէն  
 Ի դաշտի ամբոխ մարդկան և գարշելի և մարդասպան .  
 Երիցս անգամ ասպար նորա արձակեաց ձայն մարտագրդիւ .  
 Եւ յայս ձայն անակնկալ թեթեւ եղնիկն ահարեկեալ ,  
 Խուսէ արագաքայլ առ իւր որջն անկիւնածածկ :  
 Թշնամին իմ դէմն ելաւ , և իմ տեսիլ օրհասական  
 Եղեւ նմա նշանակ ինչ այն աղետից որոց մնար .  
 Աշաց նորա թուեցայ իրբեւ միին և թանձր ամպ ,  
 Որ ծանրանայ օդոց վերայ և պարտիակէ զմըրբրիկ :  
 Մօրնի նստեալ յայնժամ մօտ հեզեղի մ' փրփրադէզ ,  
 Եւ ճակատը կոթնցուցած՝ գաւազանի մը ի վերայ ,  
 Զհինօրեայ պատմէր արեաց ըզպատերազմս նշանաւոր :  
 Կօլ՝ որդին ականջ տայր պատմութեանցս դիւցազնական ,  
 Որք յարգանաց և արութեան ի նոր խառնուրդ դիւցազնական  
 Իւր ականջը փաղաքչին և ընուն զիւր արի սիրտ .  
 Երբեմն ի յոյզս իւր արութեան որ դեռատի և անփորձ ,  
 Կանդնէր յոտին , և իւր ձեռներն ըզտերեւներս շարժէին :  
 Այլ ձերունւոյն հասաւ յականջ ձայնն ասպարին Օսիանայ . . .  
 Հոգին ծանեաւ զայս նշանակ պատերազմի և մահու .  
 « Ո՛րդեակ իմ , ասէ՛ ցլօլ , ահա՛ ի վեր ելանէ մարտ ,  
 « Ահա՛ մահու աղաղակք բաղխեն զականջըս ձերունւոյս :  
 « Ֆէնկալ վերադարձաւ . վագէ՛ , գնա՛ , բե՛ր իմ զէնքերն ,  
 « Այն զէնքերն , որոնք երբեմն ամեն ուրեք սիւռէին ահ ,  
 « Այն զէնքերն , որոնք կոթող են իմ հզօր ժամանակաց .  
 « Եւ դու , դու որդեակ՛ի իմ երիտասարդ , իմ յոյս միակ ,  
 « Գու որ անուանն հայրենի պիտի պահես փայլն բովանդակ ,  
 « Ա՛ս մէկ գրահ , թըւր՛ր , գնա՛ յայս առաջին ի քում մարտ :  
 « Մօրնի՛ եղեւ մարտկաց և փառք պարծանք և օրինակ .  
 « Եւ տեսանես թէ՛ յօրպիսի ակըն դիտէ՛ զիս իմ սերունդ :  
 « Մերունւոյ իմ քայլք դողողով պատուին մինչ իսկ յօտար երկիրս .  
 « Հառաչեմ , և բովանդակ մեր դիւցազունք երիտասարդք  
 « Լցեալ սիրով մեծարանօք գան ժողովին իմ բոլորտիք .  
 « Իւ իմ ձերմակ մագերուն նուիրելով նոքա յարգանք ,  
 « Սպասեն՝ հօրդ աչեէէն զէթ մի նայուած շնորհաց : »  
 Կօլ հեռացաւ , եկաւ անդրէն . և ձերունին կորաքամակ  
 Ի պողպատ էր զգեցեալ . սակայն նորին ձեռք դողողուն  
 Անկանէր ընդ ծանրութեամբ արիցին իւրոյ հսկայական .

Յառաջ խաղայ դէպ ի Ֆէնկալ . կօլ իւր բազուկըն տայ անոր  
 Եւ հօրն քայլիցն անհաստատ՝ առաջնորդէ ուշադրութեամբ :  
 Հայրըս երբ որ տեսաւ զնա ուրախութեամբ ձգեց ձայն .  
 « Ազնիւ պետդ Աթրիւմնի , ինչո՞ւ զքեզ կը տեսնեմ՝  
 « Սպառնալից մարտիկի մը հանդերձներուն ներքեւ ծռած :  
 « Երբեմն փայլէիր դու իբր նորածին շողողուն աստղ ,  
 « Որ փարատէ բլրոց վերայ տարածուած մէգըն թանձրագին ,  
 « Եւ ի լոյս հրաշալի ոսկեզօծէ զմտակայ վայրս :  
 « Հասաւ սակայն քեզի համար ալ ժամանակ հանգստութեան .  
 « Քոյդ ժողովուրդ օրհնէ ըզքեզ . պահէ՛ անոր իւր թագաւորն .  
 « Եւ սակայն , ո՛վ ձերունիդ , շնորհակալ եմ եռանդեանդ .  
 « Ֆէնկալ բաւէ առանձնակի պատուհասել զասպատակն .  
 — « Ո՛վ թագաւորդ Մօրվէնի , կորոյս բազուկն իմ զարութիւն .  
 « Եթէ երբեմն ի միտս ածեալ ըզքաջութիւնն իմ հինօրեայ ,  
 « Ուզեմ զիմ սուրն իւր պատեանէն մերկացընել , քաշել , հանել ,  
 « Աւա՛ղ , սակայն կը դիմադրէ խարէպատիր իմ զօրութեան .  
 « Բայց Ֆէնկալ , նա յայսմ աւուր սակըս որդւոյն իմում փայլի .  
 « Նմա պարտ է մի նեցուկ յայս յառաջինն իւր պատերազմ .  
 « Նայեցայ որ վառէր նա յորժամ լսէր փառացն իմ վէպ .  
 « Ա՛հ , թո՛ղ կորնչի Մօրնւոյ անուանց մեծ յիշատակ .  
 « Եւ թշնամին տեսնելով զիս՝ չփոթելով կարողանայ  
 « Ըսել . Ահա՛ , ահա՛ կօլին համբաւաւոր ձերունի հայրն :  
 — « Ո՛վ արքայդ Աթրիւմնի , որդիդ արժան է իմ սիրոյն ,  
 « Ֆէնկալ զարին նորատի դեռ յիւր յասպար պիտի ծածկէ :  
 « Իսկ դու ե՛կ ի Մէլմա , հեռի՛ մարտից արենակաթ ,  
 « Ճաշակել զայն ըզհանգիստ գոր պահանջեն ի քէն տարիք .  
 « Եւ իմ բարդք , դաշնակաւոր ի ձայն քնարից ուղմականայ ,  
 « Հիացուցեն ըզքոյդ հոգի որ ազնիւ է և վեհազուն : »  
 Մտան նոքա : Եւ մթին իջաւ գիշեր Մօրվէնի վրայ .  
 Թագաւորք նստան կաղնոյ մի բոլորտիք . կաղնին վառէր .  
 Իւլէն երգէր . և նորա ձայն , որ խնջոյից մերոց էր փառք ,  
 Հօրն Ֆէնկալի հոշակէր ըզյայլթանակս և մեծութիւն :  
 Յանկարծ դողայ Մօրնի , և իւր աշկուճք զայրուցալիր ,  
 Չգեն նայուած մի տոսկալի վերայ բարդին ահարեկ : (1)  
 Դադարի երգ . ասէ Ֆէնկալ , « Ո՛րպիսի սեաւ տխրութիւն  
 « Երանաւէտ վայրկեաններուս գօյ զհեշտութիւնըն խանդարել .  
 « Եթէ երբեմն ատելութիւն զմեր նախնիս բաժանեաց ,  
 « Արդ նոքա հրամայեն ի միասին անզուսպ հողմոց :

« Մոռանաք, ո՛վ դու Մօրնի, զնոցին նախնի զատեւութիւնս .  
 « Հանդարտութիւն սերտիւ միացուց ըզսիրտս մեր . պահէ դու զայն :  
 — « Այո՛ , ըսաւ ծերունին , արի արանց էր քոյին հայր .  
 « Քանիցս անգամ տեսայ որ իւր քաջութիւնն հրաբորբօր ,  
 « Իբրեւ հուր մի աւերիչ , զիմ գումարտական վառէր , ծախէր :  
 « Այն դիւցազն որ ոչ եւս է , ապրի նորէն գովեստից մէջ ,  
 « Մինչ իսկ ես զարասր հեղի երբ իմացայ թէ մեռաւ նա :  
 « Այլ սակայն սէգ Ղաթմօնի հանենք ըզճիգն ի դերեւ .  
 « Օսիան , և դու ո՛վ կօլ , դացէ՛ք , ելէ՛ք բլրոյն գագաթ ,  
 « Եւ օգնութեամբ գիշերոյն լաւ դիտեցէ՛ք նորին ըզքայլս .  
 « Չափաւոր պահեցէ՛ք միշտ ձերում սրտին ըզքէն վրիժուց .  
 « Զի մանկութիւն եռանդուն է , և մուրի նա դիւրաւ : »

Լուսեց . ճամբայ ելանք , և տակաւին մի դողդոջ լոյս  
 Յերկնից կամար փայլի պլպլայ , և այս լոյս է լոյս ճարխտտին .  
 Արդէն լռէինք մեք ըզթշնամոյն ոտիցն ըզտրօտի ,  
 Յորժամ կօլ , որ արկեալ էր ըզձեռն ի սուրն իւր երկայրի ,  
 Ասէ ցիս , նոյն յայն եռանդ , որ վառէ զնա միշտ յարաժամ .  
 « Ինչօ՞ւ , որդի՞ք դու Յէնկալի՛ , արդեօք հոգւոյս ըզգամ վառել :  
 « Ո՛ւսկից արդեօք ծընին յիս այս անձանօթ յոյզք և բորբօք .  
 « Յաւօք քայլերս աւաղին մէջ իբրեւ գամուած կան մնան ,  
 « Զգամ իմ սիրտս բաբախէ , և գորութիւնքս տկարանան ,  
 « Եւ նախանձոտ քօղ սեւագոյն մթնցընէ զիմ ըզհայեաց :  
 « Ոսէ ինձ , ո՛վ Օսիան , միթէ ստոյգ վրտանդի մ՛ դէմ  
 « Քաջին սիրտ դողայ՝ այսպէս բաբախելով իւր ծոցոյն մէջ :  
 « Ո՛հ , ի՞նչ փառք մեզի համար , և Յէնկալի և հօրս համար ,  
 « Եթէ օտարն պարտեալ դառնայ . . . ո՛րքան սիրեմ զայն եռանդ .  
 « Ո՛վ բարեկամ . մեր հոգին ի խորոս իւր , տե՛ս , խանգարի .  
 « Եթէ քու յանդգնութիւն լիցի հաւ՝սար յաջողութեան ,  
 « Երկրքին անմահ փառօք մենք ծածկուելնք պիտի այսօր .  
 « Եւ եթէ մեր եռանդեան լիցի փոխան դժնդակ մահ ,  
 « Հաքք երկոցունցս պիտի հեղուն դառն արտասուս ի վերայ մեր .  
 « Այս գաղտնի հպարտութիւն պիտի ընու նոցին ըզսիրտս .  
 « Պիտի ըսեն . Եթէ որքէ՛ք մեր ընդ ձեռնս ննջեն խաղաղ ,  
 « Այլ նոցին Մերձեացի անուն զերկին հալախեցի .  
 « Է՛հ , ուրեմն ինչօ՞ւ արդէն գերեզմանաց խորհմք վերայ :  
 « Մահ՝ սիրէ ըզմահ և երկնչի հարկանել զայն .  
 « Վատն անտի ի զուր խուսէ . զի նա թռչի իւր ետեւէն ,  
 « Եւ յիւր բազուկս արիւնաթուրմ չըջապատէ զնա յիւր փախչելն : »

Յայս ի բանս սըրացայ էս . և կօլ կալաւ զիմ ըզհետս .  
 Հեղեղ մի , որում եզերք մառախլապատ են բովանդակ ,  
 Շուրջ բանակին թշնամոյն գնայր օձապըտոյս և գալարէր .  
 Հանդարտ և անպաշտպան ի քուն ննջէր մըլիկ մըլիկ ,  
 Եւ ճամբարին նորա կրակ , այլ եւս անգօր և անջերմ ,  
 Պլպլար և դալուկ լոյս մ՛ և եթ կարէր արձակել .  
 Ես իմ տիգին հաւատարիմ հաստատապէս յենուի ,  
 Անցնելու համար նդ հեղեղն որ բաժանէր զիս բանակէն .  
 Մէկ մ՛ալ երիտասարդն ասէ . « Օսիան , ի՞նչ այդ գործ .  
 « Մի՛ այդպէս , քո զարութիւն իբրեւ ըզվատս մի՛ գործածեր .  
 « Հնչէ՛ քու ասպարին ըզձայնն ուժգին մարտագրգիւ ,  
 « Որով զարթնու թշնամին , կարողանայ զանձն պաշտպանել : »  
 Հաճեցայ ազաչանացն . և տղապատին մարդախօշոյ  
 Չայնն ահեղ թնդեցաւ յօդս . և ամենայն յանկարծուստ  
 Միանգամայն զարթեաւ , դողաց , և իբր ալիս յուզեցաւ .  
 Օտարականն ընթանայր , գահավիժէր ըստ դիպաց ,  
 Եւ կը կարծէր նա ի սոսկմանն թէ Մօրվէնցիք հասին վերայ .  
 Խորհրդակցէր , մուրէր : Մեք զաղաղակ էինք բարձեալ .  
 Հարկանէինք : Հարուածոցս տակ սէգ Քրէմօր երերար ,  
 Հէրմի անկաւ , կորսուեցաւ ի մթութեան մտատեւ .  
 Եւ դու որդի՞ք Մօրնիի , քու բազուկն ալ չէր բնաւ անգործ .  
 Հարկանէիր Տօնթ՛հօրմօր՝ տկար երկչոտ այն մարտկին ,  
 Որ ի զուր տալու համար խոյս քու արդար բարկութենէն՝  
 Հինօրեայ և հաստաբուն կաղնոց մ՛ վըրայ մագըցէր .  
 Քու նիզակ հալածէր զայն , ընդ հուպ մըտաւ այն նորա կող ,  
 Եւ հինաւորց ծառին կոճղ յարեան փրփուր կարմըրացաւ :  
 Այլ ծագէր արշալոյս . և ի նորին լոյս կենսաբեր  
 Օտարականք միացան , և ցրուեցին զիւրեանց զերկիւղ .  
 Լաթմօն տեսաւ ըզմեզ , և դեղնեցաւ բարկութենէն .  
 « Հէ՞ , այսպէս երկու պատերազմիկ սիւռեցին ահ ,  
 « Եւ իւրեանց ձեռք մեր արեան մէջ եզն համակ կարմըրագոյն .  
 « Շողացընն՝ մտասն հազար սուր՝ ժպիրճ անձանցս այս ի դէմ՝ ,  
 « Եւ , զի անոք անօդնական իւրեանց բազուկն յաղթեաց մեզ ,  
 « Հրամայե՞մ զօրականացս որ անոնց կեանքն լմնցընեն .  
 « Ո՛չ , առանձին պիտի կռուիմ . զի Օսիան յանդգնասիրտ ,  
 « Օսիան արքայորդին իւրում ցեղին արժանաւոր .  
 « Դու Միւլմաթ , գընա՛ , զըսիր զինքն ու ըսէ՛ թէ Ղաթմօն  
 « Ի վաղուց ճանաչէ գիտառս և զգերասպանն նորին զանուն ,

« Թէ ի ժամու պատերազմի և ոչ մէկ ահարգելու զիս .  
 « Ի դաշտավայրն ըսպասեմ, և իմ նիզակ կազմ ու պատրաստ : »  
 Բզճրաւէրն ընկալայ . սկսեցինք կռուիլ . կայծակ  
 Ոչ այնքան սուղ է յերկինս՝ որքան երկաթն մեր ձեռաց մէջ .  
 Կրկնակի հարուածոց տակ հառաչէին պողպատ զորահը .  
 Ի պղնձեայ սաղաւարտից ելանէին բազում բոցք .  
 Զոր ինչ կարէ ճարպիկութիւն, և մանկութիւն և եռանդ  
 Եւ բազկին մեր արութիւն, և ժպըրհութիւն սրտից մերոց,  
 Զայն ըրինք . և ան ատեն մեր նիզակաց փայլ լուսաւոր  
 Արդէն ամենուրեք ընդ զանտառ հաւամրգեաց .  
 Ինչպէս երկու ողիք իւրեանց շարժուն գահուն վրայէն  
 Արձակեն ըզմրրիկ և ըզկայծակ և ըզհողմունս,  
 Այսպէս տայինք մեք ըզհարուածս մինըն միւսին ետեւէն,  
 Եւ երկիրն ներկեալ համակ էր յարիւնէն մերմէ խառնեալ .  
 Հուսկ ուրեմն լաթմոն՝ մահուն պէտք է երթար ի բաժին,  
 Զի մի բեկոր յիմ նիզակէն զքայլս նորա շիրթեաց .  
 Ընկաւ նա . և անդէն սուրս գլխուն վերայ բարձրացեալ էր  
 Երբ Մօրնի որդւոյն հզօր բազուկը զիս արգիլեց .  
 Լաթմոն գորովալիր նետեց ակնարկ մի մեր վերայ,  
 Եւ մեր ձեռքէն բռնելով՝ ըսաւ մեզի . « Ո՛վ դուք աղնիւ  
 « Եւ սիրեցեալ երիտասարդք, անցաւ թողում ձեզ զյաղթանակ .  
 « Ո՛վ կարող է ջնջել արդեօք ըզձեր փառացըն զարժանիս .  
 « Խնայէ՛ք՝ հէգ ու պարտեալ մարտիկներու արեան, փա՛ռք ձեզ .  
 « Եւ դուք որքան արի՛ այնքան և էք առաքինի :  
 — « Եկո՛ւր, ըսի անոր, Ֆէնկալ կոչէ զմեզ ի Մէլմա,  
 « Անոր հետ կապէ՛ կապեր երկարատեւ խաղաղութեան .  
 « Հոսած արեան վերայ՝ գիտեմ հառաչէ նա ի ծածուկ,  
 « Եւ իւր որդիք միշտ յաղթեցին անյօժար և ցաւ ի սիրտ : »

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Լ Ա Թ Մ Օ Ն Ի

(1) Իւլէն՝ գէշ ընտրած էր իւր նիւթը . Մօրնի կը վախէր որ  
 բարտը Քօմհալի յաղթութիւններն երգելով՝ Ֆէնկալի հոգւոյն  
 մէջ կը զարթուցանէ իրենց՝ ժամանակաւ ունեցած կռիւններուն  
 յիշատակը :

Ծովուց մօտիկ մի մենաւոր  
 Ժայռի վրայէն համր ու տըլուր,  
 Մինվան՝ նայուածն իւր կարեվէր  
 Ալեաց վերայ չըրջեցընէր .  
 Մեր մարտիկներն տեսաւ բոլոր  
 Մածկեալ իւրեանց փայլուն զինուք,  
 Որք թըռչէին ի մարտից գոռ  
 Առ սիրուհիսն իւրեանց փափուկ :  
 Սակայն Ռինօ անոնց հետ չէ,  
 Ռինօ, զորն որ պաշտէ Մինվան,  
 Արցունք աչերն մըլթացընէ,  
 Ճերմակ սըրտին, ո՛հ, զարնէ ան .  
 Եւ իւր ձայնիւն զերկինս յուզէ .  
 « Արդեօք կանաչ մարգին վերայ  
 « Նընջ՞ անյաղթ իմ սիրական,  
 « Եւ բազուկն որ վարկաւ ըզնա  
 « Ուրեմն հըգօ՞ր էր, ո՛հ, այդքան :  
 « Ոչ եւս է նա՛ զոր պաշտեմ ես,  
 « Ռինօ, ըզձայնն արշալոյստուն  
 « Այլ եւս բընաւ չպիտի լըգես,  
 « Բսել, Գէշերն էնաց էր զոր  
 « Տէ՛ս, հորէնն է լուսադար  
 « Զորնի՛ր սուրն, որորդ զուարթ .  
 « Ա՛ռ քոս աղեղն, սըգո՛ւ՛ սոսիտմ,  
 « Այս անտառաց ժէջ լուսաթորմ :  
 « Գուստրըդ լուսոյ, քու լոյսն քաչէ՛,  
 « Աէրն Մինվանի կը յաղթուի .  
 « Գերեզմանին վերայ ցաթկէ  
 « Եղնիկն, աղեղն ալ կոխկըստուի :  
 « Դիւցաղն, քընէ՛ դու ապահով,  
 « Պիտի յարգուի քու անոյշ քուն,  
 « Պիտի սպասեմ ես քուկին թով՝  
 « Խորհըրդաւոր ի լըռութիւն :  
 « Վաղն իմ ընկերք երբ որ պարեն  
 « Լերանց ճերմակ զըլխուն վերայ,  
 « Արձագանաց զիս պիտ՛ հարցնեն,  
 « Մինվան մեռած պիտի ըլլայ .  
 « Պիտի նընջեմ Ռինօի քով  
 « Յօթ եւանին իւր անվըրդով : »



# Մ Օ Ր Ն Ի

Ե Ի

## Ք Օ Ր Մ Ա Լ Ի Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ը

### Մ Օ Ր Ն Ի

Ո՛վ պատուհաս դու վահանաց, և բնակիչըդ մըրըրկաց,  
 Դու որ զանթն արձակես, և ըզըթայս լուծես հողմոց:  
 Ընդդէմ սէգին Տիւնսքորի՝ կազմ պատրաստ է իմ գումարտակ:  
 Բարձի՞ց արդեօք զարքայս ի կենդանեաց և յարխարհէս:  
 Ո՛վ դու հայրըդ Մօրնիի, դու ի ծոցոյ քուս մըրըրկաց  
 Հաճէ՛ լուսել ըզձայն յոյժ սիրելի քոյին որդւոյ:  
 Մի՛ ալ եւս զուարճանար այս տխրարնակ եզերոց վերայ:  
 Արիւնահոս պատերազմ՝ շուրջ բոլորէ՛ ահա զանտառս:  
 Այլ արծիւն Արվէնի, տե՛ս, թուչի ահա յօգոց պարոյր:  
 Տապալեցաւ ահա կաղնին, ահա՛ յերկինս փայլի փայտակ...  
 Յափշտակէ զիս մերձեցումսդ, ահարեկէ միանգամայն:  
 Ա՛րքայդ սեւ մառախլոց, գա՛ս զիմ ըզիղձըս կատարել:

### Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ն

Ո՞ր այս ձայն զարթուցանէ զիս ի ծոց անդ իմոյ ամպին:

### Մ Օ Ր Ն Ի

Ձայն քոյին որդւոյ: Ձի թշնամի որ նախանձոտ  
 Մինչ ցայս վայր իշխէ, ո՛վ հայր, արհամարհել զիմ զօրութիւն:  
 Ո՛վ արի պետըդ Քլօրայ, օգնէ՛ արդար իմ բարկութեան:  
 Հրամայէ՛, զամեն կրնաս:

### Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ն

Ձի՞ կամիս դու:

### Մ Օ Ր Ն Ի

Գրոյդ սուսեր:  
 Կամիմ՞ փայլի այն վասն իմ յորժամ վտանդ կայ ի վերայ:  
 Իմ ձեռք հեղեալ արեանց յորդահոսան հեղեղի մ՛ մէջ,  
 Այն քո սուր վանէ գոսկուս այն տեղերէն ուր ծնար դու:  
 Եւ երբ այն ամենայն քաջք, յաղթութենէ սրարտուելով  
 Հառաչեն՝ զիրենք յայս վայր առաջնորդող սրբութեան վրայ:  
 Երդնում՝ ի նոյն այն սուր, որ իմ փառաց լիցի գործի,  
 Գերեզմանիդ տալ նորէն զայն:

### Ո Ի Ր Ո Ի Ա Կ Ա Ն Ն

Ա՛ն, մարտնչէ՛, ու կործանէ՛:

## Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն Ի Մ Ա Հ Ը

Յարըունեացն Մօրվհնացոց մինչեւ ի մահ տարազիր՝  
 Հիտալան՝ իբր մով, աչկունք տխուր և հերարձակ,  
 Հեղեղներն, հսկայ ժայռերն, թանկ թաւուտներն անցնելով  
 Մտախորհ, լուռ, իւր նախնեացըն հասանէր ի բնակարան:  
 Երեք օր ամբողջ լեռանց վրայ յածեցաւ իբր մուրեալ,  
 Եւ ահա յորժամ արեւ ճառագայթիւքըն պըսակեալ  
 Ի գոյն ոսկի և ծիրանի փայլեցընէր տարածութիւնն,  
 Աչաց նորա ներկայացան աշտարակացն Պէլլախ ծայրք:  
 Հայր նորա, յայնքմ՝ պահու, մի մերձաւոր կաղնւոյ վերայ՝  
 Մըծէր առաւօտեան զօրըն մաքուր և զզօրութիւն:  
 Իւր աչերն տարիներէն էր քօղարկուած, ո՛հ, շատ յառաջ:  
 Վտակին յեզերս մինակ, յանապատին իւր վայրենի,  
 Խորհէր յորդին իւր միամօր, յոյս ծերութեանն՝ և անզօրութեան,  
 Եւ մրմնջէր անցեալ դարուց ըզնուագըս հինօրեայս:  
 Յանկարծ շրջով մի աղմուկ եհաս յականջ հէգ ծերունւոյն:  
 Հէգ ծերունւոյն ուշադիր, որ և լրուէ, և սարսըսայ,  
 Եւ սիրեցեալ իւր որդեկին ըզգայ կանխաւ ըզվերադարձ:

### Լ Ա Մ Օ Ռ

Միթէ՞ սա Հիտալանի սովորական քայլիցն չէ՞ ձայն:  
 Ա՛հ, չըլլայ թափառական և թըռուցիկ ստուեր մ՛ ըլլայ,  
 Որ իմ քովին ըզկայ առած ափանց վերայ հեծեծէ:  
 Որդեակ իմ, կորսուեցա՞ր դու Քարթօնի եզերոց վերայ:  
 Եւ քու փառք՝ և անուն մնան թշուառ քու հօրըն միմիայն:  
 Այլ թէ ողջ ես տակաւին, ըսէ՛ ո՞ր են մեր մարտիկներ:  
 Արդեօք մեռան, թէ՛, բարէ՛, ըզգերութեան կրբեն ըզլուծ:  
 Երբեմն հանդարտօրէն դարձ արարեալ քոյդ յօթեւան՝  
 Ձանոնք բերէիր ինձ ի ձայն սուսերոց և աստարաց:

Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն

Հայր իմ, այն դիւցազունք որք սիրելի են քեզ այսքան,  
 Այո՛ որչ քն կռուող համար, և ծածկուին նորա փառօք . . .  
 փառք . . . չկան ալ եւս որդւոյդ համար տարաբաղդիկ .  
 Ճակատագիր դատաստարտէ զիս թուլանալ այս վայրաց մէջ .  
 Մինչդեռ, հեռի յինէն, քան ըզկայծակն մահահարուած,  
 Սուրբն թռչի, զոր տանին պատերազմին թեւքըն ուժգին :

Լ Ա Մ Օ Ռ

Ա՛հ, յորժամ վտանգ հրաւիրէին զգիւցազունս,  
 Քու նախնիք հանգստութեան մեղկութեանց դէմ՝ բարկանային .  
 Դիտէ՛ զայս գերեզման ուր հօրս հանգչին, ա՛հ, ցուրտ նշխարք .  
 Նա զասպարէզն իւր աւարտեց ի ծերութեան և փառածածկ .  
 Չե՞ս լսեր նորին ըզձայն որ գոչէ ինձ, « Ո՛վ որդեակ իմ,  
 « Ձի՛նչ առնես ինձմէ հեռի . ճակատագիրդ կատարեցաւ .  
 « Եկուր խառնէ ոսկերտեացն իմ յարգելի և ըզքոյսդ » :  
 Ո՛վ գերեզման ժէրմալօնի՛, ո՛վ գերեզման յարգելի,  
 Կարե՞ս դու յայսըմհետէ ընդունել զիս քոյին ի ծոց :  
 Հիտալլան, հպարտութեամբս մատնեցի ես առ նա զիմ պարտս :

Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն

Ո՛վ արքայդ մութ Պէլվայի, սիրտս տխրութեամբ մի՛ համակեր .  
 Ա՛հ, նոյն զօրութիւն ողբերոյէ զիս և վառէ .  
 Մի՛ յանդիմաներ զիս վասն իմ մեղի, վատ թուլութեան .  
 Յէ՛նկալ, արտասուելով ըզդառըն մահ քօմալայի,  
 Ո՛հ, այս մահուամբ բեռնաւորէ զհակառակորդ իմ ըզսէր :  
 Պաշտպանեց նա զիմ ըզփառըս, և ի մարտից ծածկեաց, այո՛,  
 ի հրաման նախանձայոյդ և զիմ բազուկ և զմանկութիւնս :  
 « Գարձի՛ր, ըսաւ նա ինձ, գարձի՛ր անդէն քու դաշտաց մէջ .  
 « Գընա՛, վաղէ՛, չորցիր յեղերս աղբերոցք քաղցրակարկաջ .  
 « Ձերթ եղեւինն հինօրեայ, զորոյ բազխեն ըզլերի գըլուխ  
 « Եւ զկողս կմախային՝ յամառ հողմունք անաստելիք : »

Լ Ա Մ Օ Ռ

Երբ աչկունքս արտասուաթուրմ, ի դագաթանց դէզ դէզ ամպոց  
 Անկանիցին յայս եղերս, որք վիսյ են նախատանացս,  
 Ծնեցէ՛ք թանձրր մէզ եր, ո՛վ դուք որդիք աղջտակըլին,  
 Եւ ծածկեցէ՛ք զՀիտիլլան հօրն զայրացեալ ի անսութեանն :

Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն

Ո՛հ, մեղքըցի՛ր դու իմ վերայ զի իմ պետըս զիս անպատուէ :  
 Բայց ըսէ՛, դեռ ի՛նչ կրնամ, որպէս զի դու մխիթարուիս .  
 Կամի՞ս, աղեղս տանիմ մինչ նորանոր յօտար կլիմայս,  
 Եթէ՛ այս լերանց վերայ, որք մտնջեան պատեալ, ի մէջ,  
 Հալածեմ այծեամն ու եղն, արագոտըն թեթեւաքայլ,  
 Եթէ՛ Պրանն ու Լիւաթ՝ իմ անվեհեր երկու գամիւ  
 Բռնադատուին իւր որջին մէջ մինչեւ ի դուրս հանեն ըզկինձ .  
 Պիտի ժպտի՞ս, ըսէ՛ հայր իմ, այս զուարճութեանց դու ի վերայ,  
 Եւ քու դողդոջ ձեռներով պիտի բռնե՞ս, ըսէ՛, զիմ որս :

Լ Ա Մ Օ Ռ

Իմ նախնեացս այս կանգնած պերճ պալատին որմոց վերայ,  
 Ժէրմալօնի պիտի տեսնես ըզսուրն հատու կախեալ ի վայր :  
 Ա՛ռ, որդեակ իմ, ա՛ռ զայն սուսեր : Եւ բեր քոյին ծերունի հօր :  
 Հիտալլան հնազանդի : Եւ ծերունին ասէ անդէն .  
 « Այդ յստակ գետակին քով, և սա թանձր կաղնիին տակ,  
 « Քու մեծ հայրն քընէ լըռիկ յիւրում յանձուկ յօթեւանի .  
 Ըսաւ . « Ո՛վ դու, ում ամպամած աչքն ի վերայ հսկէ երկրի,  
 « Հռչակաւորդ ժէրմալօր, ո՛հ, ի բարձանց հաստատութեան  
 « Դիտէ՛ քոյին ընտանիք, ում վերջին ժամն հասած է ալ .  
 « Որպէս ամօթն, նոյնպէս, բարէ՛, ծայրայեղ են և վիշտք սրտին : »  
 Ըսաւ . զարկաւ զորդին, յետոյ զարկաւ նաեւ ինքզինք :



# ԵՐԳՔ ՍԷԼՄԱՅԻ

Ն Ի Ի Թ

Բարութեան ամեն տարի իրենց մեծաւորին պալատը կը հաւաքուէին ,  
և իրենց զիւցերգութիւններն կը կրօնցէին : Թագաւորն կը կրօն-  
ընէր թէ ո՞րը արժանի կը դատէր սրահուելու , և զանոնք ուշադ-  
րութեամբ տղայոց կը սովորեցընէին , ապագայ սերնդեան աւան-  
դելու համար զանոնք : Այս տեսակ հանդէս մ' էր սոյն այս երգին  
նիւթն ընծայողն Օստիանայ :



Ո՛վ ընկերրդ գիշերոյ , աստղ փայլուն լուսաճաճանջ ,  
Որ ի կապոյտ հաստառութեան դրօշմես քայլիցդ ըզպատկեր ,  
Չի՛նչ զիտես այժմիկ դու ի դաշտիս , ո՛վ լուսատուդ .  
Հատր է քամին . և հեռաւոր ջրվէժ մերնչէ ոչ սաստկօրէն .  
Երեկոյեան հազիւ ճճիք հանեն տխուր և խուլ բզզանք :  
Իւ քո լոյսըն նուազի հորիզոնին անդիի ծայրն .  
Իջանես ի ծոց անդր Ո՛վկէանու մրմրապին .  
Սեժգին ալիք խաղան վէտ վէտ , և հերացող թանան զոսկին .  
Այլ քո յետին ճառագայթ թաւուտին վրայ փայլեցաւ .  
Աստղ չքնաղ , մնաս բարեաւ : Թող իմ մարած հողին վառի ,  
Վառի , և յաջորդէ քու մեղրակաթ պայծառ լուսոյն .  
Չգամ թէ վերածնի այն նախնական իւր զօրութեամբ .  
Ի հարուածոց դժբաղդութեան զերծ յաշխարհի նա է միայն :  
Տեսանեմ անոր լուսով դեռ որ միմեանց քով հաւաքին ,  
Ազնիւ ընկերք աշխատանացս , երիտասարդ առոյգ տիոց :  
Ի վերայ Մօրաի , զոր լուսաւորէ մէտէորայ մ' ,  
Երեւի Ֆէնկալ ահա՛ , զոր շուրջ պատեն բարաք՝ ախոյեանքս :  
Ի լուր ձայնին նորս փութան հասանել մերձ առ նովաւ՝  
Դաշնակաւորըն Ռինօ , և վիճարան արին իւլէն .  
Մթաբարբառըն Քարիլ , և եռանդնոտ աշխոյժ Ալլէն ,  
Իւ Մինօնա , որ փափկախօսն է , և ում ձայն եղերական :  
Ո՛վ բարեկամք , այս քանի՞ փոփոխութիւն կրեցին ձեր դէմք  
Փառաց երջանկութեան գեղածիժաղ յաւուրոց ի վեր ,  
Յորրս Մէլմա ընդ իւր որմօք տեսնէր ըզմեզ հովանացեալ ,  
Իւ երգօք և քնարիւ վասն յաղթութեան վիճիլ մրցիլ .  
Դման հովտի զեփիւռներուն որք զյըստակ ջուրս թուին գգուել ,  
Իւ մի ընդ մի , յանոյլ մրմուռնջ , յուզել ըշմարդքս նորածին :

Այս առ յաւէտ յիշելի աւուրց մին կը որ Մինօնա՛  
Սալկարի և Քօլմայի երգեց զոհերն տարաբաղդիկ :  
Սալկար խոստացած կը հաւատարիմ իւր Քօլմային ,  
Նախ քան զարփուոյն ի մուտս երթալ՝ գալ միանալ առ սիրելին .  
Արդէն ստուեր իջաւ համակ , և ոչ զարծաւ դեռ Սալկար .  
Քօլմա՛ ի մէջ յուսոյ , երկբայութեան և երկիւղի ,  
Քօլմա՛ բլրոյն վերայ , և առանձին իւր ձայնին հետ ,  
Եղկելի հառաչանօք զանտառս , հովիտս թընդացընէր :  
Ականջ տանք մեք ուշադիր՝ գորովալի եղերերգին :

# ԵՐԳ ՄԻՆՕՆԱՅԻ

ՔՕԼՄԱ

Հեռի յինէն Սալկար յածի ,  
Ամեն ուրեք տիրէ գիշեր .  
Ոտիցս ներքեւ հեղեղ հօսի ,  
Գըլխուս վերեւ գոռան շանթեր :  
Ինձ ապաստան տեղ մը չը կայ ,  
Ամեն թողու զիս , լըքանէ .  
Առանձին եմ ժայռիս վերայ ,  
Չոր մութ ծովը չըրջ ապատէ :

Լուսին , ելի՛ր լերանց ծայրէն .  
Ելէ՛ք , աստղուք գիշերային ,  
Ելէ՛ք , և ձեր անոյ լուսէն ,  
Լըռիկ քայլերս լուսաւորուին :  
Առ սիրահարն իմ տարէ՛ք զիս ,  
Թող լըսէ ձայնս եղերական .  
Սալկա՛ր , երդումդ բե՛ր ի քա միտս ,  
Եկո՛ւր , գըտի՛ր քո սիրական :

Այս ժայռն , այս ծառ , այս գետն ահա՛  
Քու երդմանը վրկայներն են .  
Քեզ ըստատեմ բլրոյն վերայ ,  
Տըխրութիւնըս աւելցընեմ :  
Բաժնուեցան մերին նախնիք ,  
Բացց մենք , ո՛վ սէրդ դու իմ հոգւոյն ,  
Մենք իրարու չեմք թըճամիք ,  
Չը կայ մեզի ատելութիւն :

Ա՛հ, վերջապէս ելնէ լուսին .  
 Բայց, ո՛հ, ի փայլ լուսոյն նորա  
 Ի՞նչ տեսանեմ քիչ մը անդին,  
 Ի՞նչ տեսանեմ թաւուտին վրայ .  
 Արիւնաներկ երկու քաջեր,  
 Անոնց աչերն գոցեր է մահ .  
 Սուրն կողերնուն դեռ չէ ելեր,  
 Մին Սալկար, միւսն եղբայրս է, ա՛հ :

Ո՛հ, սիրելիքս, ինձի ըսէ՛ք,  
 Ի՞նչ ըրիք երբ չէի ձեր քովս .  
 Խօսեցէ՛ք և ահս ցրրուեցէ՛ք,  
 Ո՛հ, լռէք դուք . . . անգութ լուսթիւն .  
 Աչերս լրցան արտասուքով,  
 Սալկար, եղբայրս, ասելութեամբ  
 Ինչո՞ւ մեռաք միմեանց սըրով,  
 Ինչո՞ւ նընջէք խաղաղութեամբ :

Ո՛րքան զերկուսդ ալ սիրէի,  
 Չերկուսդ մէկէն կորսնցուցի .  
 Լըսեցէ՛ք իմ ձայնն աղեկէզ,  
 Մէկ գերեզման ծածկէ՛ ըզմեզ .  
 Անոր մէջը պահուիլ կ'ուզեմ,  
 Ո՛վ Սալկար, և ո՛վ իմ եղբայր,  
 Պիտի լռէք որ հառաչեմ  
 Գետակին քով և մերձ ի ժայռ :

Երբ որ շարժուն ամպերուն ծոց  
 Իւր մըթութիւնն հեղու գիշեր,  
 Ես պիտի դամ, ի թեւս հողմոց,  
 Սեւ բըլուրը արխրեցընել :  
 Չայնըս անոյշ պիտի ըլլայ,  
 Երբ ձեր վերայ եղերերդ է,  
 Ապշած որսորդը դանիկայ  
 Մըթութեան մէջ պիտի լռէ :

Չայսօրինակ ահա՛ երգէր Մինօնա գորովագութ,  
 Փափուկ մի շիկութիւն համակ պատէր զիւր չքնաղ դէմս .  
 Եւ մեր արտասուք հոսէին երբ խօսէինք Քօլմայի վրայ :  
 Իւլէն նաեւ երգեց . և իւր տիոցը զօրութեամբն՝  
 Իւլէն այրէր զմեզ յիւր քնարին ի սաստիկ հուր :  
 Երեկոյ մի, յորժամ յորսոյ վերադառնայր լուաւ նա,  
 Չձայն ծերունւոյն Ալլէնի, հռչակաւոր երգչին մեռ' լոց .  
 Ռինօ, որոյ ի զուր աչերն ըզմեր խնդրեն ըզհետս,  
 Յայնժամ նա այն ծերունւոյն էր քով . նորա արտասուէին  
 Չանկուճն աչեղ Մօրարի : Եւ Մինօնա քոյրն էր նորա .  
 Եւ յորժամ եղերական քնարն իւլէնի մատերուն տակ,  
 Ռինօի գանգատները և Ալլէնի անյուսութիւնն,  
 Նման լուսնոյն ահարեկ որ դուչակէ ըզմըրըրիկ  
 Եւ ծածկէ զիւր լուսաւոր գլուխըն թանձըր մառախլոց մէջ,  
 Երգէր մեզ, և Մինօնա, լուռ թախծազին, տրտմահայեաց  
 Յաւալի ձգեց ակնարկ իւլէնի վրայ, և մեկնեցաւ :

### ԵՐԳ ԻԻԼԼԵՆԻ

#### Ռ Ի Ն Օ

Յստակ, մաքուր են երկինք, և օդ պայծառ ու հանդարտիկ .  
 Ամպք տարածին յերկնից կապոյտ որպէս ըզցանցըս լուսալիս .  
 Եւ արեգակ իւր լուսաւոր կառքէն երաշտ դաշտին վերայ  
 Ճառագայթներ արձակէ, իրրեւ նետըս հրաբորրոք .  
 Խոռոչներու մէջտեղէն հեղեղն զալիս հոսեցընէ,  
 Աւելի եւրս մաքուր, և ոչ այնքան խիտտ, բռնազին :  
 Ո՛վ հեղեղ, սիրելի է ինձ քու անուշ կարկաջիւն .  
 Այլ լաւ եւս ունիմ զհեղիկ ըզփափուկ ձայն Ալլէնի .  
 Յառաջէ նա . և իւր վարսք իբր ըզգնտակըս ձիւնեղէն  
 Աստ և անդ ծոցոյն վերայ ահա՛ անկեալ տարածանին .  
 Գլուխ նորին կորացեալ է ընդ ծանրութեամբ այնքան ամաց .  
 Եւ իւր աչկունք գոգաւոր ալ շիկներ են արտասուքով .  
 Ի լըլիանս և ի վիշտս հոգին թուի ընկողմանեալ :  
 Արքայդ քնարից, ինչո՞ւ այդպէս մառախլապատ լերան վերայ  
 Ճառագչես իրրեւ զալին զայն որ թրջէ ըզծո՞վափունս,  
 Եւ կամ իրրեւ զանոյշ զեփիւռ որում հազագ տարփատենչիկ  
 Խաղայ տերեւոց հետ և անոնց մէջը մեռանի :

### ԱԼՊԷՆ

Մենեւոց համար լամ ես, և դու ո՛վ սէգ ու մարտասէր  
 Երիտասարդ, գեղեցկագոյնդ ի տըղայոց դաշտավայրին,  
 Դու յաղթես այսօր, սահայն գուցէ վաղիւ ի մարտանոց  
 Պիտի գայ մահ քու աչերն յաւիտենից փակել ի քուն .  
 Մօրար եւս քեզի պէս հոչակաւոր էր, զօրաւոր .  
 Ոչ եւս է նա . և ի սնարս անոր մահճին դամբանական  
 Օտարականն արտասուելից աչօք, տխուր և լուռ նստի :  
 Մօրա՛ր, արի որսորդ, առաւել եւս արի մարտիկ,  
 Անտառաց մերոց եղնիկն չեղեւ քեզ չափ թեթեւագնաց .  
 Զայրուցալիւր մըրըրիկ, և հրատապ մէտէորայն  
 Ի կլիմայս մեր անապատ ոչ սիւռէին այնքան սոսկում .  
 Քս սուրն ի մարտ առաւել եւս փայլէր ի ձեռդ քան շանթ յերկինս .  
 Եւ դու մարտակըք զիրուցան քո առջեւէն տային խոյս .  
 Այլ երբ քոյնն զինուց սուսնորդէր պերճ յաղթութիւն .  
 Ո՛րքան դուարթ էիր . զարտասու դու սրբէիր սպարակոց .  
 Զէ այնքան պայծառ արեգն որ ելանէ յԱրեւելից,  
 Զէ այնքան անոյշ աստղն զիշերային՝ յորժամ անքօղ  
 Յարժաթեայ յիւրոց կառաց ցուցանէ մեզ զիւր ըզնորհս .  
 Արդ հրապոյրքդ թաղեալ ննջեն ի խոր մթին օթեւանին :  
 Դու, որ երբեմն էիր այնքան մեծ և հըզօր,  
 Երկու քայլիւ չափեմ ահա՛ քեզ պարփակող անձուկ ըզվայրդ .  
 Ծառ մի, որն որ չունի իսկ մի տերեւ դողդըղացող,  
 Այս վտակին եզերքը կանգնուած չորս վէմ՝ անարուեստ,  
 Իւր մահամերձ բունին վերայ սարսըռացող մի դաւարիք  
 Մօրարի ցուցնեն անշուք գերեզմանը՝ որսորդներուն :  
 Բայց ո՛վ է սա ծերունին որ յառաջէ՛ դանդաղաքայլ .  
 Սորա դէմը կարծես թօշնած են ի տարեաց և յաղեանց,  
 Երբեմն լուռ մընաց նա, իրրեւ անխօս վիմէ արձան,  
 Եւ երբեմն իւր բերանէն ելնեն տկար աղաղակներ .  
 Քու հայրն է սա, ո՛վ Մօրար, զոր քաջութեան իւր մեծ հոչակ  
 Իւր կենացը ծերութեան մէջ սիւռէր քանի մի ծաղիկ,  
 Աւա՛ղ, նա չը կարաց տեսնել ըզփայլ քում նիղակին,  
 Եւ ոչ զայն նեւտ անագորոյն որ քու ծոցը պատառեց :  
 Արտասուէ՛, և հառաչէ՛ դիւցազնիս վրայ, հայր տարարադդ .  
 Մօրար ա՛լ քրնացաւ ի խորանինձ քուն դարեւոր :

Լոյս տարփատենչիկ ճառագայթից առաւօտեան՝  
 Գերեզմանին մէջ իւր մարտիկ աչերն բանալ չափտի երթայ .  
 Ալ մի՛ վախեր, երկչոտ այծեամ, աղեղն լուծուած է որսորդին .  
 Մնաս բարեաւ, յաղթող անվախ դիւցազն մանուկ, զոր կորուսինք,  
 Եւ եղերական իմ երգերովս սըրտագըրաւ  
 Ապագայ դարք պիտի լսեն ճակատագիրն Մօրարի :

Յերգս իւլէնի վիշտ մի ծածուկ զարթեաւ ի խորս մերոց սրտից .  
 Այլ խնձոյից ներկայ յանձանց, որք զՄօրար ճանաչէին,  
 Արտասուեց միայն Արմէն հայր դիւցազնն՝ և ազատորդուցն,  
 Իւր միտքն եկաւ երիտասարդ մեռած որդուցն անոյշ պատկեր :  
 « Ինչո՞ւ, ըսաւ Քալմօր, ում սիրտ շարժեալ նորա տխրութենէն,  
 « Ինչո՞ւ այդպէս քու վշտերով ամենուրեք համակուխս :  
 « Ա՛րմէն, մեր երգերուն անոյշ անոյշ դաշնակուլութիւն՝  
 « Թող ըլլայ հոգուցն համար քո թաղծագին, այն սուրբ շոգին,  
 « Որ լճէն ելնէ ի դուրս, մարգին վերայ տարածանի,  
 « Եւ թառամեալ շուշանին թարմութիւնը վերականգնէ : »

### ԱՐՄԷՆ

Մ՛հ, ես զորդին իմ և զաղջիկ միանգամայն արտասուեմ .  
 Երանի՛ քեզ, ո՛վ Քալմօր որ ամեն օր կրնաս տեսնել  
 Քու ընտանեաց ընծիւղներուն նոր ի նորոյ բողբոջիլն :  
 Իսկ որդիք Արմէնի անմխիթար թողին զնա :  
 Ո՛վ սիրելիդ իմ Տօրա . ցուրտ ու մթին մահճի մ՛ վերայ,  
 Ի՞նչ քունով քնանաս դու : Գալարեցէ՛ք, հզօր հեղեղք .  
 Ելէք, օ՛ն, աշնան հողմունք, մըռնչեցէ՛ք մթութեան մէջ,  
 Անտա՛ռք, լեցուեցէ՛ք դուք թափառական ուրուսներով .  
 Լուսին, անջրպետիւք կաթէ՛՛ քու լոյսն աղօտ դալուկ .  
 Յիշեցուցէ՛ք այն գիշերն, աղէտներով լի այն գիշերն,  
 Այն գիշերն, որու պատկերն ամենուրեք գտնեն իմ աչք .  
 Յորում իմս Արէնտալ անկաւ ծովուն ափանց վերայ,  
 Յորում իմըս Տօրա մարեց իւր կեանքն արասուաց մէջ :  
 Ալմար, պատերազմիկ երիտասարդ, արի, ճարտար,  
 Տօրայի դստերն իմում խնդրէր՝ փափուկ սէրն ու գօրով .  
 Ընդունեցաւ . և արդէն մերձ էր այն օրը ցանկալի,  
 Յորում ամուսնութիւն պիտի անոնց սէրն պըսակէր,  
 Յորժամ Երաթ՝ առ ի վրէժ արեան եղբօրն հարազատի,

Որ երբեմն ընդ հարուածիւք քաջ Ալմարի կորսուած էր ,  
 Սոսկալի առնէ խորհուրդ . առնու գգեստըս ծեր նաւաստւոյ մ' .  
 Չնաւըն թողու յալիս , և գայ առ դուստրըն իմ , առէ ցընա .  
 « Ո՛վ չքնաղըդ դու Տօրա , ո՛վ սիրեցեալ դուստր Արմէնի ,  
 « Ոչինչ հեռի աստի կայ ի ծովու անդ ժայռ բարձրայծն ,  
 « Յորում աճի ծառ բազմաճիւղ բեռնաւորեալ համով պողոք ,  
 « Անդ սպասէ քոյդ Ալմար զայն զոր սիրես սերտիւ սիրով : »  
 Գիւրահաւանըն Տօրա երթայ իւր հետ , ո՛հ , անվարան .  
 Հասանին մէկ մ'ալ յանկարծ վատըն Երաթ փախչի անկից ,  
 Եւ իմ դուստրըս տեսանէ նորին ըզդէմս սեւաթուրմին ,  
 Որ արկանէր ճիչ ծագրանաց , որով թնդայր եղերըն ողջոյն :  
 Տօրա աղաղակէ . մառախլապատ վիմուտ ժայռին  
 Արձագանգ՝ իւր ցաւագին թղաղակացն տայ պատասխան .  
 Ձայնը բարձրացընէ , և զիւր եղբայրն , հայրն , ամուսին  
 Կոչէ , կարդայ . « Եթէ սիրէք դուք ճշմարտիւ ըզՏօրա ,  
 « Ո՛հ , եկէ՛ք , ազատեցէ՛ք օրհասական այս ժայռէն զիս : »  
 Հեծեծագին նորին ձայն հասաւ յականջ Արէնտալի ,  
 Յորժամ վերադառնայր ի հեռաւոր յորսորդութեան .  
 Հինգ գամիւս ընդ հետս նորա վազէն վարգին հագագասպառ :  
 Աղեղ նորա լուծեալ է . մէկ մ'ալ Երաթ զուարթագին ,  
 Արդէն հասած ի ծովափունս՝ որդւոյս աչացը երեւի .  
 Արէնտալ ձանչէ ըզնա , յերկիր զարնէ , ընդ քարչ ածէ ,  
 Հարիւրաւոր յօդերով կաղնւոյ մ' կոճղին կապէ անքակ .  
 Բնթանայ անտի՝ մակոյկ և ըզձեռօքն կալեալ ըզթին՝  
 Մինչ ցբոյրն բանայ յալիս մըրըրկալից ձանապարհ :  
 Ալմար յայնըմ պահուն առ ծովափին դընայր յառաջ ,  
 Լսեր էր իւր սիրելւոյն պաղատական ձայնին հնչիւն ,  
 Տեսաւ զորդիս , և զանիկայ յափշտակիչ մի կարծեց . . .  
 Ո՛վ սիրելիդ իմ Արէնտալ , նետ մը պատուեց քոյն զծոց . . .  
 Անկաւ նա , գալարեցաւ , փչեաց զողին . . . և լի ցասմամբ  
 Ալմար տեսաւ անոր անկանիլը , 'ւ ի լուղ եկեալ ,  
 Յիւր բազուկս կաշըմբուուն ձեղքէր զալիս մառախլապատ :  
 Յանկարծ ուրականին շունչ ահռելի և ծովայոյզ  
 Հնչեց յօդոց պարոյր , և խորագոյն ծովին վերայ .  
 Տօրա տեսաւ ըզսիրահարն որ ալեաց դէմ մարտնչէր ,  
 Ձեռքը ձգեց թշուառին . . . աւաղ , սակայն աչացն առջեւ  
 Անդնդասոյզ եղեւ Ալմար , և ոչ եւս երեւեցաւ :  
 Եւ իմ դուստրս առանձնակի կայ ծովապատ ժայռին վերայ ,

Տայ զանձըն անյուսուցեան և արտասուաց և հծծանաց .  
 Հայր նորա լէր զնա . ամբողջ զիչերն արտասուելով՝  
 Մովափին կեցաւ վերայ , իւր վշտացը ըլլալով որս .  
 Որոտար երկինք ուժգին . փայլակ սաստիկ արագասահ  
 Ալեաց վերայ տարածէր լոյծ ու դալուկ աղօտ մի լոյս .  
 Այն ատեն նշմարէի ըզհէգ Տօրա որ դողդղար .  
 Այլ իւր ձայնը նուաղեցաւ . և վերջապէս փչեց զողին :  
 Առաւօտեան առաջին ճառագայթն՝ իմ ցուցուց աչաց  
 Իւր դիակը դեղնած՝ ժայռին վերայ տխուր տարածուած :  
 Այն գիչերէն ի վեր , ամեն անգամ որ հողմք կ'իջնեն սաստիկ  
 Մռնչելով ալեաց վերայ , որք ընդ միմեանս բաղխեն , փչըին ,  
 Ամեն անգամ որ փայլակ այնպէս հերձնու զամպըս մթին ,  
 Տխուր և մտախորհ երթամ նստիմ ի ծովափունս ,  
 Եւ հառաչեմ ի տեսիլ օրհասաբեր վիմուտ ժայռին .  
 Տեսանեմ որ մօտենան իմ հէգ որդւոյս ուրուականներն .  
 Արտասուք թափեն անոնք , իւրեանց հօրն իսկ չը նայելով :  
 Ո՛վ դուստր իմ , և դու ո՛րդի . դուք՝ զորս ի զուր կոչէ իմ ձայն ,  
 Ո՛չ երբէք պիտի գըթաք ձեր տարաբաղդ հօրը վերայ :

Այսպէս ահա ի մեր խնջոյս լու լինէին ներդաշնակ երգք ,  
 երգըք որ նեցուկ էին մեր բանակաց , և փառք մեր հարց .  
 Ամեն ինչ այն ժամանակ զՕսիանայ հուշակէր միտըն ,  
 Ներդաշնակ նորա քնարըն , և անուշակ փափուկ իւր ձայն .  
 Իւր երգոցը կու գային և մեծամեծք և թագաւորք :  
 Հիմա լեզուս սառեր է , հոգիս չունի ալ եւս եռանդ ,  
 Դարուց անհեռ պատկեր և կործանեալ և տըխուր  
 Շփոթ կերպիւ փայլի յիմ միտս , ընդ վշտերու քօղով ծածկեալ .  
 Գաղտնի մի ձայն ի խոր հոգւոյս դոչէ , « Օ՛սիան , լուէ՛ ալ եւս .  
 « Ո՛վ դու բարտըդ զառամեալ , զքեզ կոչէ , լու՛ւր , գերեզման .  
 « Քեզ սպասեն քու հայր , ընկերք գորովալիք , ' մահու՞ն պալատ :

# ԻՆԻՍԹՐՈՆԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

## Գ Ի Ի Յ Ե Ր Գ

Ինիսթօնայի թագաւորին Նօրմալի փեսայն Գօրմալո՝ իւր աներոջը դէմ ապստամբեր էր, և կ'ուզէր զանի գահէն վար ձգել: Յէնկալ՝ Նօրմալի օգնութեան դրկեց իւր թոռը Օսքար: Քօրմալօ ինկաւ Մօրվէնի դիւցազանց հարուածոցը տակ: Օսիսան առաւել եւս փայլեցընելու համար իւր սիրելի Օսքարին քաջութիւնը, այնպէս կը դնէ թէ նոյն իսկ ինքն Օսքար ուզած է մեկնիլ Ենիսթօնա:

Կէս գիշեր է՝ . . . ամեն հանգչի, ամեն լըռէ և ննջէ . . .  
 Բուն միայն աղետաւոր հանէ ճչեր եղերական,  
 Եւ մահու մէտէորայն լռիկ ալեաց վերայ դողայ .  
 Ճանապարհորդն կասկածալից աչօք խնդրէ զհիւրընկալ վայրն,  
 Եւ այծեամն՝ իւր որջին մէջ հաւամբդի մահճին վերայ  
 Լսելով մրրկալից հովուն ուժգին ձայնը՝ դողայ:  
 Ո՛հ, իջի՛ր քընարըդ իմ, ի կամարէն քում մարտկական,  
 Եւ ընդ մատամբ ալէղարդին թրթռա՛ . և հօր մը վշտերուն  
 Եւ իղձերուն տո՛ւր պատասխան . Օսքարի վրայ պիտի խօսիմ:  
 Արդին իմ վերադառնայր յորսորդութեան, յորժամ լսէ  
 Ըղներբող թագաւորին (1), և արութիւնն կրկնապատկի .  
 « Ո՛վ պետրդ դու դիւցազանց, ասէ, Յէ՛նկալ, և դու ո՛վ հայր,  
 « Գու որ անկից ետք առաջին ես, ո՛վ արքայդ իմ երգչաց .  
 « Չեր երկոցունց համբաւ հոչակ յապագային կացցեն մնացեն .  
 « Բայց Օսքար առանց թողոյ ամենափոքր մի յիշատակ  
 « Իբրեւ նուրբ անցցէ ըստուեր ի Մօրվէնէ, և լիցի չիք:  
 « Ո՛վ փառածածկ դուք դիւցազունք, պիտի ժուժա՞ք որ ձեր որդին,  
 « Աշխարհի աղտեղութիւն և աւելորդ բեռ անօգուտ,  
 « Առանց պատուոյ ձեր քովիկ սպասէ ըզմահն և զիւր հարուած,

« Ինիսթօնա պատերազմի բեռին ներքեւ քիչ քիչ ընկճի .  
 « Թողէ՛ք մեկնի Օսքար . երթայ նա և ձեզմէ հեռի,  
 « Ազնիւ ազնիւ աշխատութեամբք առ իւր փառսըն բանայ ճամբայ .  
 « Այլ թէ սակայն ընկճիմ, թէ նախանձոտ և անզուժ բաղդ  
 « Մերժէ առ իմ տրկար և անզօր ձեռս զյաղթութիւնն,  
 « Գոնէ անկմանս նախատական ազմուկ մինչ հոս հտտանելով  
 « Չը պիտի գայ ձեր մարտնաէր վայրկեանները շիտթելու:  
 « Բարտըն, տեսանելով զիմ գերեզմանըն՝ մեռաւոր,  
 « Իւր երգօքն մի վշտագին ողջոյն պիտի տայ կրմալոքիս,  
 « Եւ թերեւս երեկոյին, խորհրդաւոր յայս ժամուն,  
 « Նորատի դուստրը կաթիլ մ'արցունը թափէ ինձի համար:  
 — « Ո՛վ ժառանգըդ իմ արեան և այն անուան յոր հիանաս,  
 « Ճամբայ ե՛լ, ըսաւ Յէնկալ, և թող նաւերն իմ բազմաթիւ  
 « Իւրեանց կողից մէջ ընդունեն արի ու քաջ մարտկաց բանակ մ',  
 « Եւ ի ձայն Օսքարի պատուեն ջուրերն, յառաջանան: »

Արդէն հողմն շնչէ մռընչէ, ի ծոց պարզեալ առագաստից .  
 Այլք ուժգին մռընչեն քաջ Օսքարի նաւուն ներքեւ,  
 Եւ անոնց ճերմակ փրփուրը երթան զարնել ժայռերուն դէմ .  
 Եւ ոչ մէկ ամպ թանձրախիտ կայ ի կապոյտ յերկնից կամար .  
 Վերջապէս, յետ ընդ երկար ճամբորդութեան որդիս Օսքար  
 Մառախլապատ ծովու մէջէն Ինիսթօնայ տեսնէ զեզերս:  
 Քիչ մը վերջը հասանի նա անդր յարքունիս Նօրմալի,  
 Սուրն ի ձեռս տայ արքային, և ինքը լուռ մնայ այնպէս:  
 Ծերունին ըզՅէնկալի ծանեաւ սուսերն միշտ յաղթական,  
 Եւ արտասուք այտերէն վար առատութեամբ սկսան հեզուլ .  
 Անոյչ արտասուք ուրախութեան, և երջանիկ յիշատակաց  
 Այս դիւցազըն և իմ հայր, երբեմն փառօք համակ պատեալ  
 Յաղթութենէ վերադարձնուն ի մի խնջոյս բազմէին:  
 « Օտարական, ասէ Նօրմալ, ամբ զիմ բազուկն ըրին տկար .  
 « Յաւէ՛, ցաւէ ծերի մ'վըրայ, որուն ձեռքն անհաստատ՝  
 « Հագիւ իմն կարէ բառնալ պատերազմաց ըլնիզակ:  
 « Իմ սուսերն շատ ատենէ ի վեր որմէն կախուած, ննջէ:  
 « Երեք որդի ունէի . աւա՛ղ, անոնց մըխիթարիչ  
 « Եւ անոյչ ձայն չի թրթռար ալ եւս ծերուկ ականջիս .  
 « Անըզգայ ցուրտ քարին ներքեւ ննջեն երեքն ալ:  
 « Մերձակայ նահանգներու պետին, սէգին Քօրմալօի  
 « Տուի աղջիկս, որ ծերունի իմ օրերուս փառքն էր միայն:

« Իսկ մատնիչն ժողովեր է ըսպառնալից իւր մարտիկներ ,  
 « Եւ Լանօյի եղբրքներէն յայս դաշտավայրն խաղայր յառաջ :  
 « Ո՛վ դուք , ոյց քաջութիւն եղեւ հաւսար իմ յաղթութեան ,  
 « Ո՛վ որդեակք իմ , այդպէս անձուկ ապաստանի մը խորը ,  
 « Լսէք դուք եղիկելի հօր մ'եղբրական ձայնին հնչիւն :  
 « Միթէ ձեր ձայնն է , աւա՛ղ , զոր մերթ ընդ մերթ լսեմ ծերուկս ,  
 « Որ հառաչէ ու հծծայ մէջէն շարժուն տերեւներու :  
 — « Նօրմալ , ասէ Օսքար , ի՞նչպէս անկան այդ դիւցազունք .  
 « Որք ասպարք էին ձետիդ հոչակաւոր , և մեծանուն :  
 « Ի՞նչպէս ծածկուեցան քու աչերէն ու նայուածքէն  
 « Որով հողմոց վերայ ելլեն , ու գալարին միջոցին մէջ :  
 « Նոքա մարտիկք՝ արդ բնակիչ ամպոց , ի լոյս մէտորական  
 « Իւրեանց նետք այերական հալածեն դեռ հոն ի բարձունս  
 « Ըղիսարբուզն մտացածին , և զայծեամն առասպելեալ : (2)  
 — « Քօրմալօ , պատասխանի ետ ծերունին արտասուածութում ,  
 « Յաւուր միում յիմ արքունիս եղեւ հաղորդ պերճ խնջոյից .  
 « Գեռ ոչինչ այն ժամանակ աղարա բերէր պայծառ ճակտին .  
 « Եւ ինքն էառ զարժանեաց ըզվարճ այն խաղս զորս հնարեաց  
 « Խաղաղութիւն , զի մի՛ արիք երբէք փառաց չէննեն ի վէգ .  
 « Իմ մարտիկք իւրում բազկին թողին համայն ըզյաղթութիւն .  
 « Եւ իմ դուստր առ նորին գեղ յանձնեց զիւր սիրտըն թարմագոյն :  
 « Բացակայ էին որդիքս : Եւ դառնալով իրենց որսէն  
 « Երբ իմացան թէ օտար մը յաղթեց ամբողջ Մօրվէնացւոց ,  
 « Աչերնուն եկան արտուք նախանձութեան և վըրիժուց :  
 « Արգոն և Քօրմալօ , տիգախաղով եկան ի վէգ :  
 « Ո՛րք կարէր դիմադրել իմ որդւոցը մեծագունին :  
 « Քօրմալօ տապաստ անկեալ թէեւ ծածկեց իւր սեւ վըշտերն ,  
 « Սակայն սրտին մէջ սընոյց ճիւղաղային վըրիժուց քէն :  
 « Օր մը վեհազն իմ որդիք ընկերացեալ էին անոր  
 « Վազկատուն եղնիկներու բնակարան անտառիմ՝ մէջ :  
 « Անոր նետերն հերձուրն զօղ . . . և այս մըթին անտառաց խոր  
 « Չգեցին այն որդիներն , զորս արտասուէ արդ իմ գորով :  
 « Անզգամն վերադարձաւ , յափշտակեց նաեւ զիմ դուստր ,  
 « Եւ առաւ տարաւ զանի մինչ հեռաւոր յիւր հայրենիս .  
 « Եւ Նօրմալ զուրկ յընտանեացն իւր բովանդակ , աղէխորով  
 « Հիւժանի յիւր արքունիս , սեաւ բաղդին եղեալ մի խաղ :  
 « Սակայն գիշեր փարատեցաւ . և յաջորդոյն անոր ցերեկ  
 « Աներեւոյթ եղաւ նաեւ , և իմ աչկունք արտասուալիցք ,

« Ա՛հ , խնդրէին , սակայն ի զուր , զորդիս իմ ես կորուսի :  
 « Աւա՛ղ , ոչինչ սփոփէր ըզդառըն վիշտ որ վկէր զիս :  
 « Տիւնարօ յանկարծակի եկաւ մըտաւ յիմ արքունիս ,  
 « Տիւնարօ , շուն թեթեւոտն , ցայտող , կայթռող , հաւատարիմ ,  
 « Որ ի վերայ ամայի լերանց և ի թանձրը անտառս ,  
 « Բնաւ երբէք չանսաստեց քաջ որսորդին ըզհրամանս .  
 « Հրատոչոր կոկորդէն ծարաւ լեզուն դուրս էր ինկած .  
 « Ինձ նայեցաւ , և ապա գնաց տխրադին բնակարանէս .  
 « Մեծաւ յուզմամբ իւր ետեւէն սկսայ վազել անմիջապէս .  
 « Եւ հաչելով առաջնորդեց զիս մինչ ի խորս անտառին :  
 « Ո՛հ անյուսուածեանս , արիւնաներկ հողին վերայ .  
 « Նօրմալ ետես զորդիսն ի մահացու նետը խոցեալ . . .  
 « Եւ յայս տասպան , զոր թանան գետոյս ալիք կարկաջահոսք ,  
 « Յայս տապան նընջեն անոնք երեքն ի քուն յաւիտենից :

— « Իրվէ՛ն , և դու Քօ՛նօր զօրավարք հօրս և արքայիս ,  
 « Գոչէ Օսքար , օ՛ն անդըր ի մարտ ընդդէմ Քօրմալօյի :  
 « Ժողովեցէք իմ առջեւէն մարտիկներու մէկ ընտիր խումբ .  
 « Այսօրինակ պիտի երթամք մեր Լանօի ամբանց վերայ : »  
 Մէկէն ձամբայ ելան չոր , տօթակէղ անապատէն .  
 Հրաբորդը ամպոց նման որք կը դիմեն դէպ յարեւմուտս ,  
 Որոց խաւարչըտին ծոցէն ելնէ լոյս մի աղօտ ,  
 Եւ որոց կողերուն մէջ ուժգին գոռան խուլ որոտումնք :

Արդէն երկայն հնչումնք շեփորներու թնդան մարտկաց .  
 Խոր անտառաց արձագանք ձայն տան , ' և ալիք Լօնայ եռան .  
 Եւ նոյն ինքըն Քօրմալօ դողաց վախէն պալատին մէջ :  
 Մէն մի բանակ խաղայ յառաջ զօրապետին իւր ձայնովն .  
 Վատն ու զապիրն Քօրմալօ մեռնի ' նդ նետիւք Օսքարի .  
 Որդեակն իմ ածէ անդրէն առ Նօրմալ զիւր դուստր սիրելի ,  
 Եւ ի Մօրվէն վերադառնայ ծերունիէն օրհնուելով :

Ո՛հ , ի՛նչ եղաւ Օսիանայ զարմացումն ու ուրախութիւն ,  
 երբ հեռաւոր , ձերմակ փրփուր մեծատարած ծովուն վերայ  
 իւր որդւոյն նաւուն թիերն տեսաւ ալեաց կը բազկէին .  
 Յորժամ գիշեր խաւարչըտին թանձրը օդով ծածկէ լեռներն ,  
 Երբոր մեռեալք կիսաբաց վիմուտներէն դուրս ելնելով ,  
 երկայնհաւաչ ձրգեն ձայն մահասարսուռ , դամբանական ,

Ճանապարհորդըն ոչ այնքան ուրախութեամբ աննէ փայլել  
 Օդոց մէջ առաւօտեան մի ճառագայթ լուսավարամ :  
 Զօքար տարինք մեծահանդէս ի պալատըն Մօրվէնի .  
 Բոլոր մարտիկք փութանակի շուրջ պատեցին ըզնովաւ .  
 Եւ ես , ամուսնութեանս միակ պըտուղ այս դիւցազին  
 Հեղի վերան քանի մ'արտօսը ուրախութեան և գորովայ :

Ո՛վ դուք , որ տակաւին կարէք տեսնել ըզոյս երկինց  
 Տարէ՛ք զնէգ Օսիան դալարագեղ բըլրոց վերայ .  
 Նստիմ ժայռին ոտքը , և մերձաւոր ընդ հովանիս  
 Ոստախիտ հսկայ կաղնւոյն , և կամ կնձնւոյն ուռձատարած :  
 Ո՛վ սիրելիդ իմ Մալվինա , զերեկորին երգէ՛ դու զերդ .  
 Եկո՛ւր փորձէ անոյշ քոյին ձայնին զիշխանութիւն ,  
 Եւ ծերութեանն իմում զաղէտս քոյդ քընարիւն մըխիթարել .  
 Քու ձայնովն , աչացս վերայ իջած քունն անուշիկ  
 Թո՛ղ տիրէ թշուառ հոգւոյս , զարտեւանունս փակէ անդրէն .  
 Ո՛վ երազք երիտասարդ տիոցս , երա՛զք երանաւէտք .  
 Զեր անոյշ հաճոյքներովն զգացումներըս պատեցէք . . .  
 Ահա՛ երթամ բոլոր նախնեացըս հետ տեսակցելու :

**Ե Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Ք**

- (1) Ֆէնկալ :
- (2) Ասիկայ համաձայն է հին Սիրովտիացոց զիւցարանական այն կարծեացը թէ պատերազմիկներն մեռնելնուն ետեւ օդոց մէջ մտացածին որսորդութեան մը կու տային ինքզինքնին :

**Օ Ս Ս Ի Ա Ն Ա Թ Ս Ի Ի Լ Մ Ա Լ Ա**

Եկո՛ւր , տասըջ Լիւմօնի , երեւի՛ր քու զեղեցկութեամբ ,  
 Քու մթին մենարանէն դուրս ելնելու ժամն է հիմայ :  
 Մըրրիկը դադարեցաւ , և հովիտին անոյշ գեփիւռ՝  
 Մօրվէնի կաղնիներուն դալարիներն յուզէ , խռովէ :  
 Ճանաչեմ ըզքոյդ վաւեր . և մի՛ կարծեր թէ՛ դարմանամ  
 Երբ տեսանեմ արատուաց ամպն որ դաշերըդ մըթնցընէ :  
 Բայց օր մի գայ յորում արիք տկարներու պէս կորսուին .  
 Ֆէնկալ , նոյն իսկ Ֆէնկալ՝ մահուն պարտի հնազանդիլ ,  
 Եւ լերինք մառախլոց պէս պիտի ցրուին , անհետանան :  
 Քու սիրահարն ապրեցաւ . . . իւր վիճակը մի՛ զրպարտեր .  
 Երբեւ արքայ մի յաղթական անհող թողուց նա զաշխարհն ,  
 Օսիանայ բազմազի քընարն ըզմահ նորա երգեց ,  
 Եւ ուրուսէն յափշտակուած փառքը նորէն հաստատեց :  
 Աւա՛ղ , չը կրցաւ նա մարդախոշոշ նետերուն տակ՝  
 Իւր որդւոյն , միակ յոյսին , մեռեալ ինչալը տեսանել .  
 Իւր որդւոյն , որ արութեամբն պարտեալ պետաց պալատին մէջ  
 Իրեն համար դեռ կը փայլին պայծառ , մաքուր , յստակ լոյսեր :  
 Ո՛վ զիւցազանց դու հրապոյր . զիտե՛ս եթէ՛ ես հայր էի .  
 Օքքար իրբեւ մի շուշան աչացըս տակ ծըլէր ծաղիէր .  
 Եւ այն ծաղիկ անուշաբոյր , որ այս վայրաց էր զարդարանք ,  
 Յիւր յայդուն ցամաքելով՝ հատիկ հատիկ փոշի եղաւ :  
 Անանձին եմ և լքեալ , անամուսին և անզաւակ .  
 Թերեւըս Մօրվէնի մէջ արհամարհանք , ըսպանանալք՝  
 Հալածեն իմ ծանրացեալ քայլերն քանի մի օր եւլս .  
 Ա՛լ իմ բաղուկն չպիտի կարէ այն ժայընութիւնն պատուհասել :  
 Եկո՛ւր ուրեմն , ո՛վ Սիւլմալա , եկո՛ւր նստէ՛ կառքիս վերայ .  
 Ո՛վ աղաւնեակդ անապատին , միմեանց նըման եմք աղետիւք .  
 Հետեւէ՛ ինձ Ֆէնկալի քով . ի միասին պիտի լամք մեք .  
 Դու գքաջազունն զկաթմօր , և ես գՕքքարն իմ սիրասուն :

# Տ Ա Ր Թ Ի Ի Լ Ա

## Ն Ի Ի Թ

Եթա թագաւորը Քլոմնալ՝ երեք տղայ ունեցաւ . Նաթօս , Արտան և Մորար : Ասոնք Խրլանտայի յախշտակչին՝ Քաերպարի վրայ յարձակեցան , և քանի մը պատերազմաց մէջ յաղթեցին զայն : Խլլիթի թագաւորին՝ Քոլլաի աղջկը՝ Տարթիւլա , Քաերպարէն սիրուեր էր . բայց Նաթօսը տեսաւ՝ սիրեց զայն , ու անոր հետ փախաւ : Մըրիկ մը անոնց նաւը նոյն այն ափանց վրայ ձգեց՝ ու Քաերպարի բանակը օթեւաներ էր : Երեք եղբարք բաւակաւ տեսն քաջութեամբ պաշտպանեցին ինքզինքնին , բայց վերջը թըշնամուցն շատութեան յաղթուելով՝ սպանուեցան : Թշուառն Տարթիւլա ինքզինքը զարկաւ իւր սիրելի Նաթօսի մարմնոյն վրայ :

## Պ Ս Ս Ի Ա Ն

Երբիկ ու մենաւոր երիտասարդ աղջկան մը պէս , Արծաթափայլ ամպոց ծոցէն խորհրդաւոր ելնէ լուսին : Ո՛վ երկնից դուստրը չքնաղ , ծանրը քայլուք և անշըռուկ Սահիս դու յօդոց պարուր , ուր քոյին սրակ շողուն շողայ . Գիշերային արեգականց խումբ փառաւոր պատէ քու անցքն : Ի՛նչ ընես դու մեզնէ հետի , երբ արշալոյս ճերմակաստիւռ Մեր ախար յաչաց սրբէ ըզքոյդ ժպտ և զաղտ լոյս : Դո՛ւ ալ երթաս , ինչպէս Օսիան , եղերական , հեծեծելով Քու նուազեալ գեղեցկութիւնն թաղել վշտաց ի բնակարան : Ո՛վ թագուհիդ գիշերոյ , դու ալ գիտե՞ս թշուառութիւն . Հիմայ , իւր լուսովը համակ պատեալ և ծանրատահ Քու կառք ակնապարար լերանց վրայէն զընայ հանդարտ . Բնդերկարէ՛ , եթէ կարես , զասպարիզին քում գընթացս , Եւ թափէ՛ ծովուց վերայ քու լուսալիր ճառագայթներն :

Նաթօս՝ ովկիանու հերձնու ըզլոյծ , ըղտնաւ ծոց . Արտան , Մորար եղբարքն ալ իւր քովը կեցեր , ահա՛ . Քրօմնալի երեք դստերը իբր վեղջերու ընթանալով Հզօր Քաերպարի խուսափէին ի նետերէն : Բայց ո՛վ է արդեօք սա նորաթի օտարուհին , Որ ծովուց արհամարհէ զկառաւ յալիս անոնց մօտիկ , Երկար մազերն իւր ալեկերպ թեթեւ մարմնոյն վրայ ծածանին . . . Նաթօսի սա սիրուհին է Տարթիւլա չքնաղագեղ . Քաերպարի ի գորովոյն խոյս տայ , նայուածքն իւր տխրալիւր Նուաղութեամբ թափառի իւր գեռաաթի քաջին վերայ : Ո՛վ ցաւոցս , հօլմ՝ անդուժք , պատրեն ըլլոյսդ , ամուք չքնաղք : Յաւիտենից սասոյցներով բեռնաւորեալ հսկայ լեռներ , Այն վրտակներն զորս նշմարեն ձերին փախուկ աչք սիրալիւր Անոյ անոյ ալիքներով , ս՛հ , չեն թանար ըզհոյն Եթայ : Քաերպարի աշտարակք այս եղերայ վրայ ծանրանան . Իչխանութեանն տակ էք նորին : Եւ դուք հոգմուք հարաւայինք , Որ զանոնց յոյս խաբեցիք , ի՛նչ ընէիք այն ժամանակ . Ինչո՞ւ եկքանն զրկելիք իւր սուր ծածկոյցէն եղերցս վերայ : Ինչո՞ւ դուք Նաթօսի առաջատներն շուռեցուցիք . Ինչո՞ւ թափառական անոր աչաց չըցուցուցիք Հայրենին զիւր բնակարան . և այս բըլբըք ծիծաղողինք , Յորս նորաթի իւր արութիւն քանիցս անդամ ի փորձ անկաւ : Ո՛վ Նաթօս , ս՛րքան հեշտեաւ տիրեցիդ դու փախուկ սրտին Այն չքնաղ կուսին որ գայ քու ետեւէն և լայ ըզքեզ . Քու դէմքըդ արշալուսոյ առջի շողից պէս անոյ էր . Քու մազերն Ինիթօրի ազաւաններուն թեւէն ալ սեւ . Վտակներու կարկաշիւն , և զեփեւուին զանոյ մրմունջ , Չեփեւուին , որ եղեգանց ի մէջ խաղայ թրթրաւով , Որսորդին , գետին եզերք նստած՝ ծծած օղն իրիկուան , Անոյ ձայնիդ չափ շունէին իչխանութիւն մարդոյս վերայ : Այլ յորժամ ի մարտագուս թագաւորներ հալածէիր , Նմանէիր յուզեալ ծովուն , որու ըզծոցն ընդարձակ Յուզնն հողմուք փոթորկալիք . ի ձայն գինուցրդ սրդպատեայ Գիւցազուն խոյս տայ . ամբոխն ահարեկ , երկիւղալի : Այսպէս տեսաւ քեզ Տարթիւլա , նստած հանց արտ հաւուցն սղաւտ . Յանկարծ հրով մը այրեցաւ . և արտասուք զորովանաց Չականողխորն թանային . . . բայց հոլմք ըզքոյդ պատրեցին իլլնս . Ո՛վ Քոլլայի դուստրըդ անոյ , ի միութեան մուրբիս դու :

Դադարեցէ՛ք, նսխանձոտ հողեր, մըթին ավեր, լուսեցէ՛ք .  
Թողէ՛ք դուք, որ ցաւալի հառաչանքներն իւր հաւաքեմ :

**Տ Ա Ր Թ Ի Ի Լ Ա**

Ի՞նչ լոյս աղջամղջին հետ մարտնչի ի մեծ կըռիւ .  
Նաթթօսի փրփրակոհակ հեղեղներու ձայնն է լուսեմ,  
Եթա՞ն է որ տեսանեմ . և դժնդակ աշտարակներս  
Արդեօք իմ նսխահարց աշտարակներն են մեծապանծ :  
Եւ Նաթթօս սլառասխանէ ինձ արտասուօք . . . ո՛րք ենք արդեօք . . .

**Ն Ա Թ Օ Ս**

Քայերպարի քով, յիւր երկիրն . մըթին գիւրերն ու դիպուած  
Նորանոր վաճառներու պիտ' ենթարկեն դեղեցիլութիւնդ :  
Ո՛չ, ո՛չ, Տարթիւլա, այս լոյս տըկար սլալըացօղ՝  
Մեր հանդէսներն լուսաւորող լոյսըն չըլլայ թէ կարծես :  
Վերտին տեսնենք ահա՛ զիւրէն, մըթին վայր մըրըրկաց .  
Ահա՛ Քայերպարի արքունիքը արհամարհեալ .  
Ո՛վ Արտան, և դու Մօրար երիտասարդ արի եղբարքս,  
Ի՞նչք ինձ հետ մէկտեղ . եկէ՛ք բնուանք մի ճամսպարհ  
Որ ըլմեզ այս մարդաստան մարտիկն ծածկէ կատ'ղութենէն :  
Գո՛ւ, ո՛վ Տարթիւլա, քու փախուկ սիրտ թո՛ղ ունենայ  
Յուսոյ նըլոյլ . քանզի դեռ եւս ասի ներեալ է քեզի .  
Բնդ հովանեաւ այս ժայռին, հեռի ի վատ մեր թ՛նամեաց  
Հանդչի՛ր խաղաղութեամբ, քեզ չուրջ սլառէ հատու իմ սուր :

Ըսաւ և մեկնեցաւ : Իւր սիրուհին տրամահայեաց՝  
Վշտացը հետ առանձին վայրի մամուռն նստաւ վերայ,  
Եւ իւր աչու աչիւնքն անոյշ դառն արտասուօք լեցուեցան :  
Գողգօղալով արիանց վերայ որոտացող ալեաց ձայնէն,  
Իւր անհանդիստ նայաւածները հեռու տեղերն շրջեցընէր .  
Ի ձայն անոյշ քաղցրագորով առ ինքն կոչէ ըզՆաթթօս .  
Այլ Նաթթօս չը կարէ եւս լսել ըզձայն իւր սիրուհւոյն,  
Արուհւոյն, ում աղաղակը համր ժայռերու բաղխեն և եթ :

« Խոր գիւրերուն սոսկմանն ատեն հսկեմ գալուկ, երկչոտ, մինակ :  
« Հողիս սրբան կը ճնշուի, ևս օգնութեանց կարօտ եմ յոյժ :

« Եւ սիրահարս փախչի յինէն . փախչի՛, սախայն ո՛ւր է արդեօք .  
« Ի՞նչ տագնապիչ հըրապոյր ինձմէ հեռու վար դընէ գայն .  
« Նաթթօս, օ՛ն, փութա՛ գալ . առանձին եմ, ե՛կ փարատել  
« Զիմ ըզտագնապս : Մրրիկն ահա՛ բըզզայ արդէն . և հողմուք  
« Սանձարձակը յօդոց պարոյր բաղխեն վիրար : Աւա՛ղ, գլուխըս  
« Ո՛ւր դընեմ, ա՛հ, ո՛ւր գտնեմ մի ապաստան յայս կըլլիմայս :  
« Լո՛ւսին, ցրուէ՛ մրրիկն . և դուք լուսանշոյլ լուսիկ աստղեր  
« Ամպոց թո՛ղ մէջուեղէն փայլին ճաճանչքդ դալկանըլոյլ .  
« Առաջնորդ եղէ՛ք քայլիցս մինչ ի կատար բարձըր լերան :  
« Բայց ահա՛ առ իմ ըզնա ածէ անդրէն սէր իւր սրտին .  
« Ո՛չ ինքն է, և սա հեռու եղած աղմուկն քայլիցն է ձայն :  
« Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ համար յանկարծ սոսկում պատեց դքեզ .  
« Պետըդ էթայ, արդեօք ի՞նչ վախ անդամոցդ մէջ եկաւ մտաւ : »

Նաթթօս տըխուր վերադարձաւ, ելանկին հառաչք բերնէն,  
Ատեղութիւն կար աչաց մէջ . դէմքը դալուկ էր և տըմոյն .  
Ինչպէս մրրիկէն պարտեալ արեւն մառախլոց մէջ ընկըղմած :

**Տ Ա Ր Թ Ի Ի Լ Ա**

Ո՛վ զիւցաղունդ . վերադարձիդ ըսպատէի, դու զիտես .  
Փախչելու բռնադատեալ, բան մը չունիմ բաց ՚ի սէրէդ :  
Ի՞նչ սոսկալի ճախատազրի ենթարկեցին զիս սլառերապը՛ք :  
Յախտեմից մի լուութիւն Ալլամայի (1) մէջ տիրէ :  
Գերեզման լախեց զիմ հայր . զայն այրող հոտը մարեցաւ .  
Եւ ծերունին այն ալեղարդ ցարդ փոչի մ' է հիմայ միայն :

Գիւրերոյն մըթին քօղերն ըզտիւկերը չուրջ պատէին .  
Խուժպոյղ ալիքներ, մըթութենէն քիչ մը իջած,  
Սողոկէին մամուռ ծածկած հսկայ ժայռից ոտից ներքեւ,  
Բուերն միայն իւրեանց մըթին որջերուն մէջ պահուրտած,  
Ըլլըութիւն խանդարէին օդոց՝ իւրեանց վո՛ւ վո՛ւներով .  
Իմ հինօրեայ պալատին աշտարակաց վըրայ նստած  
Խորհի արի եղբօս, այն վեհազուն Քօմարի վրայ,  
Որ մեզնէ հեռի Քայերպարի հետ մարտնչիր .  
Երբոր յանկարծ իմ նուաղեալ, մելամաղձոտ աշուրներուն  
Կերկայացաւ ծերունի հայրս, որ իւր ձեռքը սուր մ'էր բռնած .  
Իւ ստէպ հառաչանքներ արձակէր նա ծոցէն ի դուրս :

« Ո՛վ Տարթիւլա , ըսաւ ինձի , ընտանիքս ջնջուեցաւ .  
 « Քու սարարաղդ եղբայրն ալ քիչ մը յառաջ փրչեց զոգին .  
 « Այլ ծերութեանս սպառնայ աւելի եւս դաժան հարուած մ' ,  
 « Եւ իմ գորովն քեզի համար դառնահառաջ հեծեծէ :  
 « Քայերպար , յաղթանակօք , ետեւէն ալ իւր մեծ բանակն ,  
 « Դէպ յայս վայր յառաջանայ , և շղթայներ բերէ մեզի :  
 « Ո՛հ թո՛ղ գայ , ահա՛ հոս եմ . իմ արութիւնն վերարժարծեալ  
 « Պիտի կարէ մեր քաջած ազետիցը վըրէժն առնուլ :  
 « Այս սաղաւարտն ա՛ւ , ու զինուէ՛ քու նախահարց սուսերով .  
 « Վաղը , երբոր արեւն մութ ու թանձր մառախլօք վրայ  
 « Իւր առաջին ճառագայթից անոյշ փայլը արձակէ ,  
 « Մարտիկներնիս մեր հետ առած ի պատերազմ պիտի երթամք :

Արեւն ելաւ , մութն ցրուեցաւ : Ես փոխեցի զիմ զըրահ ,  
 իմ բազուկըն կըքէր ծանր ասպարի մը ներքեւ .  
 Եւ պղնձեայ սաղաւարտի ծանրութիւնը իմ սեւ վարսերն  
 ձընչէր . հայրս բացաւ ինձ ճանասարհ յառաջելու .  
 Քանի մի տարիներէ սառած՝ ծերուկ քաջազուններ  
 Յամր ու դանդաղ քայլերով իւրեանց պետին հետեւէին .  
 Երիտասարդ մեր մարտիկներն , իւրեանց ուժովը մատնուած ,  
 Հեռաւոր երկնքի մ' տակ ինկած էին մէկ մէկ դիակ .  
 Անոնց տըկարացեալ հարըն յառաջէն հազազ սուսաւ .  
 Նիզակըն ծանր է հիմայ իւրեանց բազկացն ուժաթափ ,  
 Եւ զեփուք , որք անորիչ թեւօց վերայ բազմեալ փչէն ,  
 Անոնց ձիւնասպիտակ վարսից թելերն թրթռացընէն :  
 « Ո՛վ վըկայք իմ տխրագին ծերութեանըս , ըսաւ Քօլլար ,  
 « Երբեմնն աւելի եւս աչգ սոսկալի տեսաք դուք զիս ,  
 « Որ երկաթեայ պատանէի մ' տակ , արիւնաներկ վտանդաց մէջ  
 « Չիմ ըզկորովն , զարիութիւն , զժպրհուրթիւն ցուցանէի :  
 « Աւա՛ղ . անցան սակայն իմ արութեան ժամանակներ .  
 « Դուք ալ լաք ինձի այն ձեր՝ զօրութիւնն անհետացեալ .  
 « Ո՛վ աւուրք փառաց , ներկայք մեր թախծադին յիշողութեան ,  
 « Թող հիմայ ձեր յիշատակն թո՛ղ արժարծէ մերին եռանդ : »  
 Ըսաւ . քաշեց սուրը և կատաղի յառաջացաւ :  
 Յանկարծ շքիթ աղմուկ մ' եկաւ զարկաւ մեր օղանջին .  
 Յառաջացանք , մէկ մ' ալ տեսանք հազար մարտիկ կարգաւ կայնած .  
 Կատաղութիւն , օտելութիւն մարտի նըշանն առած էին :  
 Բայց ի՞նչ օղուտ այն ցաւալի վայրկեանները նըկարողրել .

Տեսայ որ ինկաւ հայրս մահուան նետով մը զարնուած .  
 Վազէի այս ծերունուն վերջին շունչը ընդունելու .  
 Իմ ձեռքերն պիտ' փակէին արիւնթաթաւ արտեւանունքն ,  
 Երբ տեսայ առ իս վաղէր արիւնկըղակ վատ Քայերպար .  
 Երբ զիս տեսաւ նա թշուառական ուրախութիւն մ'  
 Կատաղի աչացը մէջ , կասար ճակտին վրայ փայլեցաւ :  
 Մինչ իսկ ժըտեց բարբառել ինձ իւր անողորմ սիրոյն վերայ .  
 Քաշեց զիս գրեթէ մեռած նոյն իսկ իմին պալատիս մէջ . . .  
 Մընացածը դու ալ գիտես : Անիծէի ես զիմ հէգ կեանք ,  
 Եւ ըզմահ իմ իղձերուն իրր կատարող մը կոչէի ,  
 Երբ յանկարծ գեղեցկութեամբ , փառօք , ուժով դու պանծալի  
 Երեւեցար հիզիս աչացն որոնք յապուշ էին կրթեալ .  
 Երեւեցար . և Քայերպար քու նիզակին տեսաւ փայլելն ,  
 Ու փախաւ քու առջեւէն թեթեւաքայլ այծեմին պէս :  
 Այլ սակայն , ըսէ՛ ինձի , արդ ի՞նչ բան քեզ վիշտ պատճառէ .  
 Մի՛ գուցէ , սէրդ իմ Նաթօս , կորած ըլլայ մեր ամեն յոյս :

Ն Ա թ Օ Ս

Ես չեմ վախնար պատերազմէ : Դեռ նոր կենացս ի գարուն ,  
 Յաղթութեան և փառաց հուրն ամբողջ մարմինըս սոչորէր .  
 Որդի դիւցազն արանց , և լի անոնց յիշատակաւն  
 Այրէի անոնց փառացն և ես ըլլալ հաւասարող .  
 Եւ նոյն այն էր մարտերու դուսն իմ դեռատի հոգւոյն համար  
 Ինչ որ է աստղըն տուընջեան հովտաց համար զովագին ,  
 Երբ՝ միջօրէին ճառագայթիւքըն պրտակեալ ,  
 Զեղու անոնց վերայ բոցերու յորդ մի հեզեղատ :  
 Ո՛վ յիշատակք , անսրտուղ վիշաք . քանի՛ցս անգամ նետեր էի  
 Կոտորածի դաշտին վերայ անխուսելի մահու նետեր .  
 Մինչ դեռ եւս երիտասարդ աւուրք տիօցս կորովութիւն  
 Բռնաւոր լուծի մ' տակէն չէր ազատած գեղեցկութիւնդ .  
 Գեղեցկութիւնդ որ զիչերուան ատեն յերկնից ի կամար  
 Դողըղզացող փայլուն ասաղին շափ անոյշ էր և սրտադրաւ :  
 Բայց ահա՛ ամպըն մերձեցաւ , գընաց քօզի մ' տակ մթապատ  
 Մածկել այն պայծառ աստղն , որ շողողար ինձի համար :  
 Ո՛վ Տարթիւլա . անդութ հողմունք զիմ ըզգորովըն պատրեցին .  
 Հօրըդ պալատն դեռ շատ հեռի է այս վայրի տեղերէն .  
 Առանձին եմք , գեղեցկութեանդ յափշտակէին բարիութեան որս :

Իմ եղբարքս , այո՛ , թէ եւ պիտի օգնեն իմ ճիգերուն ,  
 Եւ ի վրտանգ իւրեանց կենաց պիտ' պաշտպանեն հրրապոյրներդ •  
 Բայց աւանդ , ո՛րքան անգոր են մեր գէնքն ու գրրան ,  
 Այս եղբրքներն պաշտպանող հազարաւոր անգութից դէմ :

Ա Ր Տ Ա Ն

Նաթօս , չը կայ ալ յոյս , անխուսափ է մերին կորուստ  
 Տեսայ որ Էրէնի (2) գօրաւոր դրօշը ծածանէր •  
 Քայերպարի ճանչեցի ձայնն • իւր մարտիկներն հսկեն ի շատ :  
 Տե՛ս , ի լոյս արագասան փայլակներու , տե՛ս գըլտորին  
 Անոնց մթին գոււմարտակներն , տե՛ս , անոնց բիւր գէնքերն փայլին :

Ն Ա Ք Օ Ս

Այո՛ , ահա՛ տեսնեմ' բայց մի՛ վախնար բազմութենէն •  
 Ո՛վ դու ծովդ Իւլէնի , ինչո՞ւ այդքան աղըկայոյդ  
 Գլորես , գահավիժես քու ծոցոյդ մէջ ահեղ ալիքդ :  
 Որդիք օղոյ և եղեամի , ինչո՞ւ պարզէք դուք ձեր թեւերն •  
 Միթէ կարծէք թէ ձեր սին փայլերն , գուուս ու գոչումներ  
 Այս շոր վայրի ժայռին վերայ պիտ' շղթայեն ըզՆաթօս •  
 Ո՛չ , գինքն կեցընողն նոյն իսկ բազմին է արութիւն •  
 Նա փառաւոր ունի զայս յոյս թէ պիտ' սրբէ իւր նախատինքն  
 Եւ կամ իրբեւ արի պիտի մենուի մարտերու մէջ :

Ձայս ըսելով , հագաւ գրրան , գրրաւ ծանըր լանջադահակ •  
 Հայրենին նիզեց նիզակ անոր ջըլուտ հզոր բազուկն •  
 Փայլատակող մի սաղաւարտ ծածկեց անոր մետաքս մազերն ,  
 Եւ իւր անվախ աչացը մէջ նկարեցաւ կատաղութիւն :  
 « Մօրար , ըսաւ արին , վայրի ժայռին կողերուն մէջ  
 « Օճապրտոյտ կայ մէկ անձաւ • սիրուհիս հոն կարէ թաքչիլ :  
 « Գընա՛ , անոր ձեռքը ահա քեզի վտտահիմ ես :  
 « Իսկ մենք , արիդ Արտան , յառաջ խաղանք ի թշնամին •  
 « Եթէ բազուկն իմ անհաստասա՛ տեղութեանս շատուտ ըզլիւթ ,  
 « Եթէ իյնամ ես նետահար ու վիրտպատ աւաղին վրայ ,  
 « Մօրար , գու նաւ նստէ՛ , դընա՛ մէկէն յիմ արջունիս •  
 « Գընա՛ , տրխուր Գըրօմնալի աղէտները սփոփելու •  
 « Ըսէ՛ իրեն՝ սրպէս գի քիչ մը հանդարտին իւր վշտերը •

« Թէ սգաւոր Նաթօս խորհէր իւր ծերունի հօրը վերայ •  
 « Թէ մեռաւ նա ընկճեալ , և ոչ սակայն տրկարացած ,  
 « Եւ թէ , մինչեւ իսկ կենաց վերջի վայրկենին մէջ  
 « Իւր արիւնն 'ւ առաքինի ցեղին պատիւը չը պղծեց •  
 « Եւ դու , երբոր տխուր աշուն դալարամերկ անտառաց մէջ ,  
 « Թօշնած մարգաց վերայ իւր անպըտուղ փայլմամբ դալուկ  
 « Գայ բաղխել միւտ արտասուօք թացեալ զազու ըզքոյդ աչեր ,  
 « Ո՛վ Տարթիւլա դու սիրասուն , յաշտարակոս մեր հինօրեայ ,  
 « Քու խնջոյիցը սեղանակից ըրէ՛ արի արանց դուստրերն •  
 « Մեղամարձ ձայնն անոնց զանուէն անմահացնէ Նաթօսի •  
 « Բայց աւելի եւս երանի թէ բազմադի անոյշ քընար  
 « Օստիանայ մատերուն տակ իմ վիճակին վրայ արտասուէ •  
 « Այն ատեն , մէտ'որայի մ' ծոցը յածող իմ ուրուական  
 « Արբըլիւ պիտի ըլլայ երջանկութեամբ և բերկրութեամբ : »

Օ Ս Ս Ի Ա Ն

Այն գիւշերը մենք խնջոյից սրահին մէջ էինք նստած •  
 Եւ , մինչ փրփրադէզ հեղեղներու խրուով ձայնին  
 Միտնային թափառական ընդդայներու հառաջանքներն ,  
 Մեք Մօրվէնի թագաւորին յաղթութիւններն նուագէինք •  
 Մէկ մ' ալ հով մը կատաղի մահուան մէկ ձայն մը հնչեցուց (3)  
 Եղերական քնարիս վերայ • նոյն իսկ Ֆէնիկալ դեղնեցաւ • • •  
 Ձինքը պատող սոսկումն յայտնեց սա տխրագին խօսքերով •  
 « Այս վայրկենիս Մօրվէնի մէկ դիւցազնը , գիտցէ՛ք , ընկճի •  
 « Որդւոյս քնարն ամենեւին ի զուր տեղը չը հառաչէր •  
 « Ուրեմն անոր դերեզմանին վերայ տըխուր լուսին երգեր •  
 « Օստիան • անհամեմատ բարտդ ողբայ զանոր վիճակ : »  
 Լուեց նա : Եւ ճակատն հանդարտ ծածկէր սրտին գլուզումն •  
 Հնազանդեցայ , և իմ՝ քնարն սկսաւ զայս նուագ վշտաց •

« Խոնարհեցէ՛ք ամպոց ծոցէն ,  
 « Ո՛վ նախահարցս ըստուերք տըմոյն •  
 « Հեռացուցէ՛ք շուտով ձեզմէն  
 « Սոսկում , մըրրիկ , հուր ու արիւն :  
 « Գթալիր աչօք նըկատեցէք  
 « Ձայն որ մեռնի յայսրմ պահու •  
 « Եւ ձեր օգնող ձեռքն բացէ՛ք  
 « Ձհասատաութեան կամարն ազու •

- « Ո՛հ, պարզեցէ՛ք զիւր պարեգօս .
- « Եւ իւր մըթին սուրն՝ մըխեցէ՛ք .
- « Եւ իւր կառքին այն լուսայորդ
- « Երկու կայտառ ձի լըծեցէ՛ք :
- « Երբոր քունը մեզ ընկըղմէ
- « Հանոյալիր ի մի հանգիստ ,
- « Նա անուրջի թեւօք բերկրէ՛
- « Թէ մեր աչերն ու թէ մեր սիրտ : »

Սակայն մըրըկայորդ, ալմըկյարոյց ծովու մ' եզերքն  
 Անվեհերն Նաթօս հըսկէր, տըխուր, դեղնած ահուգողէն .  
 Տարթիւլա, անոր քովիկ, իւր վըշտերուն տակ նուածեալ,  
 Տըխուր ու լուռ կենայր, ու չէր յայտնեւր զահն ու երկիւղ .  
 Վերջապէս ծագի արեւ, և նորա լոյս դանդաշական  
 Յուցանէ անոնց աչաց արի արանց մեծ բազմութիւն .  
 Իւրաքանչիւրն էր ըզգեցեալ զըրահ հաստատ ու փայլուն .  
 Իւրաքանչիւրն գոռոզաբար երկուս նիզակըս ճօճէր .  
 Եւ Քայերպար այն մարտկաց մէջ բարձրագլուխ բարձրանայր  
 Նըման հըսկայ այն ժայռին որն որ իշխէ դաշտավայրին .  
 Չայնըն գոռայ, և իւր աչկունք, ատելութեամբ բոցավառեալ  
 Սոսկալի յակնակապիճս գալարէին մի սէգ հայեաց :

**Ն Ա թ Օ Ս ( Ա Քայերպար )**

Եկու՛ր, պետդ թէմօրայ, եկու՛ր, իջի՛ր ի ծովափունս .  
 Եկու՛ր, կըսուէ՛ հետս առարկային համար սիրոյս .  
 Ձեռ կարող ընդունել զայն մինչեւ որ զիս չը մեռցընես .  
 Եկու՛ր, երկուքնիս ալ կոտորածի ետք անօթի .  
 Երբեմն, դու առջեւէս ահաբեկեալ տայիր փախուստ ,  
 Երբ էի ի դաշտս Եթայ իմ բանակին առաջնորդ .  
 Արդ աւասիկ առանձին եմ, և զօրութիւն քո ըզգոյշ  
 Ի նոր մի հուր ծանօթ է ինձ, առաւել եւս արծարծեցաւ :

**Ք Ա Յ Ե Ր Պ Ա Ր**

Ո՛վ դեռատիդ սիգախրոխտ, չափաւորէ՛ քու եռանդն .  
 Չըլլայ կարծես թէ Քայերպար, սըրոյն արժէքն քիչցընելով  
 Անծանօթ մարտիկի մը արեանը մէջ թաթաւէ զայն :  
 Երբէք ես չեմ լրսած քու նախնեացը անուանն հըռչակ .  
 Միթէ երբէք անոնց փառօքն չըլացած է մի երկիր .  
 Միթէ նոքա թագաւորաց կարգը երբէք բարձրացան :

Իրենց արի բազկօք դիւցազներէ յափըտակուած  
 Չէն ու զարդեր պալատներուն պատերէն վար կախեալ գրուած ,  
 Անոնց անցեալ փառաց յիշատակը ցուցանեն :

Նաթօս կարմըրեցաւ . և իւր խոնաւ աչուրներէն  
 Արտասուլաց ինկան կայլակը . նա իւր երկաթը փայլեցուց . . .  
 Եւ եղբարքն իւր քաջազունք, քան զփայլակ արագ ու շոյտ  
 Արդէն զինուած էին իւրեանց հատու սուսերներով .  
 Քայերպար, ճիւղաղ անյագ, ըզսոսկալին տայ ըզնըլան .  
 Գեղարդներն սկսան սուլել ի սոյլ ահեղ յօդոց սրարոյր . . .  
 Նաթօս, և իւր եղբարքըն վիրաւոր, արիւնաթուրմ  
 Անկանէին տփգունացեալ յարիւն շիկնեալ աւազին վրայ .  
 Մահը փակեց զանոնց աչերն . ինչպէս, ջըրով չըջապատեալ  
 Երեք կաղնիք լերան մ' գագաթն հետըզհետէ ուսճանան .  
 Ճանապարհորդ, դաշտին մէջէն, զարմանալով չարիէ զանոնք .  
 Բայց գիշեր իւր կառացը ըզսոսկալի լըծէ մըրիկն ,  
 Հարաւոյ հողմն զիւր սոսկալի հնչեցընէ ըզմըռնչիւնն .  
 Եւ կաղնիք հողմոց ներքեւ իւրեանց գլուխըն խոնարհելով  
 Գալարին առ ոտս լերանց՝ որոց արքայքն էին երբեմն :  
 Տարթիւլա, համր ու անշարժ, աչքըն տըխուր, հերք ցիրոցան ,  
 Ի սոսկմանն խուլ ու հանդարտ ամենուրեք դարձնէ աչերն :  
 Այլ ընդ հուպ կըքին ծուռեգերն . նիդակ մ' պահուած է ձեռքին մէջ .  
 Չայն իւր սիրտը մըխէ ուսկից ցայտեն ալիք կուսին արեան :  
 Քայերպար վազէ, ի զուր . . . դառնագին վիշտք և խղճի խայթք  
 Պատառեն զանոր ըզսիրտ . և իւր մեռած զոհին վերայ  
 Խոնարհի նա և անիծէ զանագորոյն ճակատագիր :

**Օ Ս Ս Ի Ա Ն**

Ո՛չ եւս ես դու, ո՛վ դու չքնաղ : Յուրա գերեզման լաիէ ըզքեզ . . .  
 Նաթօսի ըզսիրուհին յաւիտենից ճընչէ մի քուն :  
 Ո՛վ դու փառքորդ Սէլմայի, ալ հօյրենի յարկին ներքեւ  
 Ձեռք չը պիտի կարես առնուլ դու ըզքընար թըրթըռացող :  
 Հանդիսաւոր մի սուգ պատէ ըզծովափունս իւլէնի :  
 Ո՛վ առարկայդ դու գորովոյն քանի քանի դիւցազանց ,  
 Ե՛րբ պիտի ելլես արդեօք անձուկ օթեւանէդ :  
 Աւա՛ղ, անշուշտ երբէք : Ո՛ր երբէք կարէ գիտնալ  
 Թէ ո՞ր ժամուն, ո՞ր վայրկենին տխուր հանդիսադ պիտ' աւարտի :  
 Երբոր արեւն, մըրըկալից մութ գիշերոյն յաղթականն ,

Գայ շողերովն ոսկեզօծել ըզբարձրաբերձ լերանց կատարս ,  
 Ըզքեզ պիտի գտնէ այն ճախճախուտ քարին ներքեւ ,  
 Գեղնած ու ցուրտ , և անզգայ ճառագայթիցն իւրոյ հրոյն :  
 Զարթիր, ո՛վ դուստր պաշտեցեալ զարթիր, վերցու՛ր գլուխըդ և տե՛ս,  
 Ահա՛ գարունն անոյշ սեւ ձըմեռան յաջորդ կանգնի .  
 Ծաղիկն , նոր ներկուած , առաւօտեան իւր հոտերովն  
 Մինչ ցհեռակայս հոտաւէտէ զօղն . ա՛ռ և դու քու աղեղն ,  
 Ահա՛ զարթնու որսորդն աշխոյժ . ահա՛ կապարճը զարնէ յուսն ,  
 Երթայ նետիւք խոցելու պայծեամն կայթոռդ , արագ ավազ . . .  
 Այլ քու աղեղն անզօր է և անօգուտ նետդ իրեն գէմ .  
 Քանզի երկուքն ալ քուկին քով , գերեզմանիդ մէջը ննջեն :

**Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ն Ք**

- (1) Տարթիւլայի իւլթէրի մէջ բնակած պալատը :
- (2) Էրէն , նախկին անուն իրանտայի :
- (3) Երբոր հռչակաւոր մարտիկ մը մեծ վտանգի մ' ենթակայ ըլլաբ , քնարներն ինքնիրեննուն եղերական ու մտրգարէական ձայն մը կը հանէին , ըստ Հիւսիսային գիցարանութեան :

**Մ Ի Ն Օ Ն Ա**

**Ն Ի Ի Թ**

Տիւրքաննայի թագաւորին՝ Անիրի աղջիկը Մինօնա , Ինխթօրի թագաւորին որդին , Սուարանը կը սիրէր : Անոնց հարսանեաց օրը որոշուած էր , երբ Յէնկալ հրաման զրկեց Սուարանի որ Մօրվէն դայ , որպէս զի արշաւանքի մը մէջ իրեն միանայ : Սուարան հնազանդեցաւ , բայց խոտացաւ Մինօնայի որ եթէ այս ձեռնարկութենէն ազատի , մէկէն պիտի վերադառնայ , և մինչ իսկ իւր վերադարձին օրն որոշեց . Միւս կողմէն Անիր , Լաթմօն որդւոյն հետ ընկերացած , ստիպուեցաւ պատերազմի համար մեկնիլ , և Մինօնա առանձին մտց Տիւրքաննայի պալատին մէջ : Ասկից առաջ Մինօնա , Թրօմաթօն կղզւոյն թագաւորին՝ Տիւրօմաթի սէրն արհամարհեր էր : Այս արհամարհեալ սիրահարն օգուտ քաղեց Անիրի և Լաթմօնի բացակայութենէն . յախշտակեց Մինօնան , և իւր կողմին տարաւ : Դիւցազներգութիւնդ կ'սկսի այն վայրկենէն՝ յորում Սուարան կը վերադառնայ ի Տիւրքաննա , և սիրուհին հոն չգտներ :



Մըթութիւն պատէր համակ ըզԼաթմօնի պերճ արքունիսն ,  
 Արեւմուտքի եզերց վերայ , որոնք դաւուկ էին և լուս ,  
 Լուսին երկրայական լոյս մը միայն փայլեցընէր ,  
 Եւ հողմն կէս գիշերուան հովիտին մէջ սուբար , սուլէր ,  
 Անվեհերըն Սուարան զաշտավայրին մէջ յառաջէր .  
 Զայն իւր սէրն Մինօնայի իւր սիրուհւոյն քով դարձընէր :  
 Բայց ի՛նչ տըխուր լըռութիւն տիրէ անոր պալատին մէջ :  
 Լերանց վերայ և ջրոց տակ , և օդոց մէջ ամեն ննջէ ,  
 Եւ սիրուհւոյ մ' անոյշ ձայնիկ խաղաղութեան այս պահուս ,  
 Փութով եկող գիւցազին ականջներուն , ո՛հ , չը բաղխեր :  
 « Ո՛ր ես դու , ո՞ր , ո՛վ սէրդ իմ . ի՛նչ խոչընդոտ դախանական  
 « Սուարանի նայուածքներէն դեռ եւս կարաց ըզքեզ ծածկել :  
 « Յիշէ՛ դու այն վայրկեանն , վայրկեան անոյշ նաեւ անգութ ,  
 « Յորում պատիւն՝ Ինխթօրի ծովուց վերայ քաչեց զիս .

« Եւ դու չքննա՛ղդ , զրպարտեցիր ըզզայրացում ճակատագրին .  
 « Տեսայ , երբ մեկնէի , որ արտասուք թանային աչքդ .  
 « Քու գեղեցիկ ծոցն բարախէր թէ՛ երկիւղէն և թէ՛ սէրէն .  
 « Եւ քու ձայնիկ նուաղեալ շփոթութիւնդ հասկըցուց ինձ . . .  
 « Եւ հիմայ չեո երեւի՛ր իմ վերագարձը երգելու : »

Բայց նայեցաւ որ պալատին դռներ բոլորն էին բաց ,  
 թօշնած տերեւք ծածկէին անոնց սեմերն արքայակոխ ,  
 Եւ Եւրոս , ամայացեալ գմբէթներուն տակ փըչելով  
 կարծես մինչեւ հեռուն տանէր անոր վտաց ազաղակներն :  
 Եւ ոչ մի լոյս փայլի անդ . այն սառնապատ ժայռին վերայ  
 Տխուր և մտախորհ նստի Սուարան տարաբաղբիկ :  
 Սեաւ նախազգացմունք երթան ու գան իւր մտաց մէջ ,  
 Եւ չփոթ ստուերադիրք իւր սրտին մէջ միմեանց բաղխեն .  
 Սակայն քունն ու յոգնութիւն , արդէն կըրած իւր նեղութեանցն  
 Եկան աւելցընել և ըզսոսկումն և ըզյուզում :  
 Եւ՝ երեք անգամ երազի մը սոսկալի տեսքն ,  
 Իւր մոլորեալ անդամոց մէջ վախն ու սոսկումն մտոյց անդրէն :  
 Տեսնէ անդրէն ըզՄինօնա , զոր իւր ոգին պաշտէ , սիրէ ,  
 Արտասուաց ամպ մի պատէր անոր աչերն չքնաղազեղ .  
 Անոր երկայն մետաքս մազերն ծովուն եղած են խաղալիկ ,  
 Եւ արիւնն մեծափրփուր կարմրցընէ մարմարեայ ծոցն :  
 « Ա՛հ , ժայռին վերայ ննջէ իմ գորովոյն առարկայն .  
 « Ննջէ՛ նա . և Մինօնա զոր երբեմնն այնքան սիրէր ,  
 « Անզոր աղաղակօք զայն օգնութեան կոչէ իրեն :  
 « Զարթի՛ր ուրեմն Սուարան , . . տե՛ս կատաղի ծով մ՛ մոլեզին  
 « Թրօմաթօնի բոլորտիքն հոսեցընէ իրեն ջրերն :  
 « Հոն անձաւի մը մէջ մըթին , որ նըմանի գերեզմանաց ,  
 « Հսկեմ , հիւծիմ , նուաղիմ , որս տխրութեանս և վըչտերուս :  
 « Բայց սոսկալին Տիւրօմաթ հոն իմ քովը հսկէ անքուն .  
 « Արհամարհէ իմ աղէտներն , արտ՛սուքս զինքն խնդացներն . . .  
 « Սուարան , եկ՛ուր , ա՛ռ զիս իւր գարչելի գրկաց մէջէն : »

Մէկ մ՛ ալ նայիս մըռնչեց հողմն այն մըթագին տերեւոց մէջ ,  
 Եւ սիրելի այն ուրուականն իբր ըզփայլակ տուաւ փախուստ :  
 Սուարան դողաց , զարթեաւ . և իւր սուրը շարժեց տեղէն .  
 Կատաղաբար բաղխէր անով և ըզհողմունս և զըստուերներ .  
 Յարեւերս կոյս մըթին նա զիւր աչերն յառէ անշարժ .  
 Անյուսութիւնն անիծանէ ըզյամրութիւն արշալուսոյ . . .  
 Վերջապէս , հաստատութիւն ոսկեզօծի անոյշ փայլով ,

Եւ ճառագայթն առաջին փրփրակոհակ ալեաց վերայ  
 Տեսնէ ինիսթօրի մարտկին նաւուն կայտուելն ուժգին :  
 Ովկիանու բուռնն ծոցէն երրորդ անգամը ըլլալով  
 Յառաջանայր ոսկեզըրահ տուընջեանըն թագաւոր .  
 Երբ կատաղի Սուարանի խոնջ նայուածոցն երեւեցաւ  
 Երկնակապոյտ ծովու մ՛ վերայ թրօմաթօն տարուբեր :  
 Մինօնա , ընդ եղերըս , զիւրն ողբայ զաղէտըս դառն .  
 Երբոր տեսաւ ըզմարտիկն , և նըլմարեց փայլն զէնքերուն  
 Ամօթ , ակնածութիւն տժգունեցին գեղեցկութիւն ,  
 Եւ իւր խոնաթի աչուըներէն հոսեցաւ գետ մը արտասուաց :  
 « Ուսկի՞ց ծընի , ասէ Սուարան , իմ սիրուհւոյն շփոթութիւն .  
 « Միթէ՛ իմ ճակտին վերայ ատելութիւն կամ մա՞հ կարդայ :  
 « Դու ճառագայթ մը միթէ՛ չե՞ս , որուն փայլը լուսաշողող  
 « Յայս անծանօթ ի ծովափունս լուսաւորէ զիմ ըզքայլերն .  
 « Զըլլա՞յ անարգ օտարական մ՛ քու աղետիցդ ըլլայ պատճառ :  
 « Արդէն , իւր տըմարդի գործն պատժելու ապահով եմ ,  
 « Եւ անհամբեր իմին սուսեր ձեռացըս մէջ դողդըղայ :  
 « Պատասխանէ՛ , դուստր Անիրի . . . ո՛հ , չե՞ս տեսներ իմ արցունքներն : »

Մ Ի Ն Օ Ն Ա

Ա՛հ , ինչո՞ւ ևս ալ դաշտի ծաղկին պէս չապրեցայ  
 Որ ամայի ժայռին վերայ ծընի , մեռնի անծանօթ :  
 Հազիւ մեր անտառաց վերայ ձգուած տեսան իմ աչք  
 Տասն և վեց հատ ծաղկազարդ գարուններու քօղն երփներանգ ,  
 Եւ ահա՛ զիս կուլ տալու համար բացուի ցուրտ գերեզման :  
 Ի՞նչ վիշտ , ի՞նչ ցաւ : Եւ իմ աճիւնք արհամարհեալք յամենեցունց  
 Դիւցազունին արցունքներովն ալ չը պիտի ուռզուին :  
 Սակայն թերեւս ի խոր սրտէ իմին զզջմանըս զգայուն ,  
 Թերեւըս իմ ակամայ ոճրոյս վերայ հեծեծելով ,  
 Սիրահարըս ի մենաւոր անդ գիշերի երբեմն երբեմն ,  
 Պիտի ցաւի և արտասուէ Անիրի հէգ դստեր վերայ :

Ս Ո Ւ Ա Ր Ա Ն

Ապահով լե՛ր . Սուարան պիտի առնու վրէժի մատնչէ մ՛ .  
 Ո՛ւր ծածկուի նա . ինչո՞ւ շուտով իսկ չերեւիր .  
 Արդէն զինքը մեռած տեսնեմ : Այլ թէ բաղուկն իմ անզոր  
 Անարժան մի յաղթութեան տեղի որ տայ յափշտակչիդ ,  
 Ո՛վ դու սէրըդ իմ միակ , գըթա՛ դու իմ փառացս վերայ ,

Որպէս զի ընկերանայ մահուընէն վերջն ալ ան ինձի .  
 կանգնէ՛ իմ ցուրտ շիրիմն սա սեպածեւ ժայռին վերայ ,  
 Եւ , երբ նաւակի մ' թիերն տեսնեն անոյշ աչերդ ,  
 Վազէ՛ , ծովուց որպւոյն իմ սուսերը վտահելու .  
 Թող մէկէն առնեն տանին զայն տխրագին Քօլտանայի .  
 Տարաբաղդիկ այն ծերունին իմին վիճակն խմանալով  
 Այն ծերունին սրու հոգին վերադարձիս կայ ու մընայ ,  
 Ծովուն վերայ ալ եւս անյադ նայուածք մի չըձրգէ :

### Մ Ի Ն Օ Ն Ա

Եւ դու կամի՞ս , և կարծե՞ս քու զօրութեամբն յարթել անոր .  
 Ո՛չ . հպարտութիւնս մեռնելով իսկ պիտ' շատանայ .  
 Մենք երկուքս մեկ դադաղի մէջ քով քովի պիտի ննջենք ,  
 Իմ սիրտըն վայրի ժայռի մ' բեկորներովը չէ շինուած ,  
 Եւ իմ հոգին թափառական սա կոհակաց չի նըմանիր ,  
 Որք մըրրկաւ ուռնալով հանդարտութեամբ օրորուելով ,  
 Անտարբեր վայսն երթան խութ ժայռերու մէջտեղներէն :  
 Իմ հոգին արդէն հոգւոյդ հակառակորդ է ակոյտան :  
 Իյնանք , սիրելիդ իմ , միեւնոյն նետիւ խոցուելով :  
 Կղզիդ Թրօմաթօնի , կղզիդ որ միշտ ես դըժընդակ ,  
 Առ յաւէտ չպիտ' թողում քու անտառներն արիւնաթուրմ .  
 Իմ եղբայրն (1) յօտար յափուսն պատրաստէր հօրս հետ մէկտեղ .  
 Ես ասանձին պալատիս մէջ տըխուր տրտում հըսկէի .  
 Եւ խիստ հոգմըն հիւսիսային , յառաջընթաց մըրրկաց ,  
 Խուրթին չնչէր , սուլէր եղեւիններու մէջտեղէն :  
 Յանկարծ իմին քովէն զէնքերու ձայն մը լրսեցի ,  
 Երկաթ բաղխէր զերկաթ . և նծոյգներն վըրընջին . . .  
 Այս ձայնովս իմ սրտին մէջ սպրդեցաւ անոյշ մի յոյս .  
 Ո՛վ դիւցազնդ իմ . կարծէի թէ ալ ըզքեզ պիտ' ատնէի . . .  
 Բայց ոչ . սոսկապիթխարըն Տիւրօմաթ նշմարեցի .  
 Իւր սուրէն կաթիլ կաթիլ բարեկամաց վազէր արիւն .  
 Չյարգելով զիմ անուն , չը գըթալով աղաղակացս ,  
 Քաշեց զիս իբրեւ յիմար , իւր նաւերուն մէջ տարաւ զիս .  
 Ինչ կրնար բնել անոր դէմ Մինօնա տկար , անգոր :  
 Ի զուր ըզքեզ կոչիի . . . բայց ահա՛ ինքն . . . ահա՛ ինքն  
 Որ բոցափառ այն խիստ ծոցին փրփրակոհակ պատուէ զպիս :  
 Նայէ՛ ո՛հ , տեսանե՞ս իւր անհամար բանակն 'ւ ամբոս .  
 Փախի՛ր , թշուառ մարտիկ , այս բարբարոս բռնաւորէն :

### Մ Ո Ւ Ա Ր Ա Ն

Ե՞ս , ե՞ս փախչիմ իւր առջեւէն . ե՞ս , անկըսիւ յազմուլմ .  
 Թո՛ղ մէկ մը մըրըրկայոյդ Ո՛վէանէն ի դուրս ելնէ ,  
 Հայրենի այս սուրն հատու ոտիցս առջեւ պիտ' ձրգէ զայն .  
 Մուարանի հոգւոյն համար երկիւզ ըսուածն օտար է ,  
 Իջի՛ր դու սիրելիս , իջի՛ր ի մութ սա քարանձաւ .  
 Դուք , հաւատարիմ ընկերք թշուառ իմ վիճակին ,  
 Տիւրօմաթ պէտք է քաւէ եղեոնական այն նախատինք .  
 Թող ձեր աղեղք վըրիժականք թըռցընել տան ըզյուրտ մահ :  
 Ըսաւ . Եւ Մինօնա սեաւ և մութ գըմբէթի մ' տակ  
 Ընկըղմի . ալ հառաչանք անոր փախուկ սիրտն չեն յուզեր .  
 Վարդակարմիր երմին անուշակ իւր դախուլութեանն յաջորդեց .  
 Ինչպէս երկար մի փայլակ օձապըտոյտ չըրջի յըստուերս :  
 Եւ սակայն յառաջանայր վատ Տիւրօմաթ հրակայաքսյւ .  
 Բարկութիւնըն էր կնճուտած նորա դէմքս գարչիլի .  
 Եւ մահուն պատգամաւոր երկու սեաւ յօնից ներքեւ  
 Արիւնալիր , կատաղալստ ցասկոտ աչերն գալարէին :  
 « Օտարականք , ըսաւ անոնց , չըլլայ թէ բուռն հօրմուք  
 « Բզճեղ ըլլան մըղած ի դիչերի յայս ծովեզերս :  
 « Կամ մի՛ գուցէ սընուցանէք ձեր սրտին մէջ յոյս սընտար ,  
 « Որ բազուկներէս կարէք խըլել զայս գէրի կոյս :  
 « Մինօնա կղզոյս համար աստըղ մի է լուսաճաճանչ .  
 « Ս'րտըս կարծես բացուի անոր անոյշ լուսոյն տոջեւ .  
 « Հակառակորդդ դեռատի , միթէ սիրուն այս իմ գանձէն  
 « Չրկե՞՛ կամիս զիս , ըսէ՛ . ա՛յս է միթէ քու նըստակ .  
 « Այո՛ . բայց ապահով ես թէ պիտ' ատնես հօրըդ պալատ :

### Մ Ո Ւ Ա Ր Ա Ն

Մոռցա՞ր ուրեմըն դու Քօլտանարի արի որդին .  
 Ալ չե՞ս յիչեր արդեօք այն օրն աղետարեր յորում իմ սուր ,  
 Ըզքեզ իմ առջեւէն վանէր իբըր այժեամն երկչոտ ,  
 Չոր հալածէ դամիլըս արի օձապըտոյտ ժայռին վերայ :  
 Ի զուր քու բուրբախքն հազար հազար հսկեն մարտիկք .  
 Իմ սիրուհին , Քիչ ատենէն քու սուրերէն ազատելով ,  
 Ինձ հետ մէկտեղ պիտի մտնէ անդր յարքունիս Արիի :  
 Այս խօսքերուս փայլակի մ' պէս յառաջացաւ անխիւյ :  
 Վատազգին ցած Տիւրօմաթ իւր գունդերուն մէջը մըտաւ .

Սուարան գայն հալածեց , բռնեց խոցեց իւր նիզակովն -  
 Եւ անոր արեան կաթիլը ուսողեցին ըզդաշտն համակ :  
 Իւր զինուորներըն երկչոտ , օրհասական յայտ տեսարան  
 Յրուեցան , արձակելով ողբանըւադ աղաղակներ .  
 Մօրվէնի սուր սուր նետերն մընացորդը հալածեցին .  
 Եւ ընդ հուպ ի թընամեաց մաքրուեցան մեր ծովափունք :  
 Սուարան վազէ մէկէն առ քարանձաւն նըստատուոր ,  
 Ուր Մինօնա կայր աղատ ի վըսանդէ և հանդարտիկ :  
 Բայց ս'րախի տխուր անտիլ դարիաւ աշացն տարարողին .  
 Երիտասարդ ոք հաւաչէր աւաղներուն վերայ ինկած ,  
 Եւ արիւնն փրփրակոհակ հոսէր սրտէն իւր վիրաւոր :  
 Սուարանի մեծահոգի սիրան յայտ յառաջը շարժեցաւ .  
 Մօտեցաւ , և ձեռընտու ձեռն կարկառեց վիրանորին ,  
 Եւ շրիթ յուղեալ ձայնիւ այս բառերը արտասանեց .  
 « Վստահիր , ս'վ անծանօթ խընամակալ իմ հողերուն .  
 « Գնա քու հողին յուսոյ նըշոյ մ' կարէ ունել փողփողուն .  
 « Գիտես աւողջարար տունկերուն դուն դազդեցութիւն . (2)  
 « Ես իմ ձեռօքն փորձեցի զանոնք խել մը քաջաց վերայ ,  
 « Եւ փոխարէն՝ Սուարանի երախտագէտ եղան անոնք :  
 « Ո՛րքան անոյշ պիտի ըլլայ ինձ քու տաղնապը հանդարտել :  
 « Ո՛ր կիկոնայ արդեօք եղաւ ականատես աւճի փառացդ :  
 « Անշուշտ քայն նախնիք թաղաւորաց մէջը փայլին :  
 — « Այո՛ , բայց անծանօթը , իմ հարքն էին հոչակաւոր .  
 « Ամաշեն պիտի , ախտո՛ս , հիզիս վերայ արտասուելու .  
 « Իմ փառքը օրհասարեւր անադատիս մէջ մարեցաւ ,  
 « Ինչպէս լուսոյ մի ճառագայթ թանձըր ու մուխ շողւոյն մէջ :  
 « Տիւրմանայի ծովափունքը , այն հինօրեայ ժայռից վերայ  
 « Չորս ժամանակը սըսակեց յեղեւինըս սըգաւոր ,  
 « Հինաւորոց պալատ մը կայ , ում մերձակայ փրփրուն հեղեղը  
 « Ի հետուստ ցոլացրնեն աշտարակներն մեղամաղձոտ .  
 « Հոն իմ եղբայրն ինձ սպասէ , միշտ անհանդիստ բաղդիս վերայ . . .  
 « Օ՛ն , իրեն տուր այս սաղաւարա , մահուանս լուրն ալ տուր մէկտեղ :  
 Ըսաւ . և Սուարան զոր գրբաւեն անոր աղօժք . . .  
 Մինօնա . . . ա՛հ , ի՞նչ վայրկեան : Քարանձաւին նա իւրում մէջ  
 Պատերազմի մի զրահ հագած էր , և զէնք ձեռք առած ,  
 Եւ զինուորաց հետ միասին մարտնչեր էր նա անվեհեր :  
 « Ո՛վ որդիդ Քօլտանարի . պէտք չէ այդպէս տըկարութիւն ,  
 « Ըսաւ նա . ահա՛ ցուրտ մահ իմ անդամոց մէջ սըտըրդի :

« Գիտեմ , որ ալ եւրս ես քու սիրոյն չունիմ իրաւունք .  
 « Այլ հաճէ՛ , ազիտորմ վերջին խօսքերս ալ հաւարել :  
 « Մորիկ մը յորձանապտոյտ վերիասարգ եհար զիմ գին :  
 « Ինչո՞ւ չը մընացի ի պարիսպը Տիւրմանայի :  
 « Անիք ի ծերութեանն՝ իմոյ սիրոյն ոչ անդգայ ,  
 « Գոնէ ըզբարեբաղդ պիտի օրհնէ ըզՄինօնա : »  
 Փչեաց զողին : Եւ Սուարան անոր անձուկն ի յօթեւան  
 Մահուն պաղ պաղ շունչէն սառած մարմինը ընկըզմեց .  
 Գերեզմանին վերայ ինկած լացաւ երեք օր անընդհատ :  
 Գարձաւ ապա Մօրվէն . տեսանք նորին ըզտխրութիւն :  
 Իմ ձայնիկ , որ Մինօնայ հանէր հըրչակ գեղեցիկութեանն ,  
 Անոր հողւոյն մէջ բերկրութեան մի ճառագայթ գէթ փայլեցաւ .  
 Սակայն անոր յուզեալ տըխուր սրտին հեծեծանքներն  
 Սոկպ անոր մէջի խորին վերքը հանեն ի վեր :  
 Ինչպէս , երբոր հանդարտութիւն նորէն տիրէ յողոց պարոյժ ,  
 Երբոր նորոգ արեւ գայ զաշխարհըս լուսաւորել ,  
 Հեռուն հեռուն փայլին քանի մի սեաւ փայլատակունք :

Ծ Ա Ն Օ Թ Ո Ի Թ Ի Ի Ք

(1) Մինօնա իւր յախշտակուիլը կը պատմէ :  
 (2) Այն դիւցազնական ժամանակաց պատերազմիկներուն շատե-  
 րը այն աւողջարար տունկերուն յատկութիւններն գիտէին , զորս  
 բնութիւնը կը շուայէ Միովտիոյ հիւսիսային լեռներուն : Մանա-  
 ւանդ Ֆենկալ հոչակաւոր եղաւ իւր բժշկական հմտութիւններովն :

# ՔՕՄԱԼԱ

ԳԻՒՅԵՐԳ ԳՈՒՍԱՆԱԿԱՆ

## ՊՕՍՄԻՆԱ

Ֆեշերն իջնէ . մըթին քօղերն  
 Պատեն ահա՛ սառած դալիս .  
 Եւ բարկացայտ սեւ ճիւղներ  
 Խուլ ճիւղերով լնուն զերկինս :  
 Նըջանակ են ասոնք մահուան .  
 Արքայի մը վերջանան կեանք .  
 Անկանի նա ի գերեզման  
 Մատնեալ բաղդէն իւր դըժընդակ :  
 Ո՛վ դիւցազանց դուստր , Քօմալա՛ ,  
 Ե՛կ , հաղո՛րդ լեր մեր արտասուաց .  
 Յը յաւիտեան հանդի ահա՛  
 Նա՛ որ ըզգեղըդ նուաճեաց :  
 Աւա՛ղ , դեռ օրն չեղած իրկուն ,  
 Ֆէնկալ՝ փառօքն իւր պանծալի ,  
 Պիա՛ ընծայէր քուկին սիրոյն  
 Ըզյաղթութեան պըտուղն առջի :  
 Սակայն քօղեց զերկինս զիւեր .  
 Ֆէնկալ դեռ եւրօ չերեւիր .  
 Չըքնա՛ղ , վերցո՛ւր քոյին աչեր ,  
 Մէտ՛որայիս նայէ՛ փայլիլ . . .  
 Ֆէնկալ գըտաւ զիւր նախնիքներ :

## ՔՕՄՕԼԱ (Ձեռք հեղին ուղեւթ .)

Որդիդ լերանց ու մըրըրկաց  
 Արենախառն ինչո՛ւ գընաս .  
 Արդեօք վերայ քու եզերաց  
 Գաղթեցուցին մեր քաջք ըզփառս :  
 Ննչէ՛ իմն դիւցազն անյաղթ .  
 Լուսնակ այն սեւ ամպերն պատռէ ,  
 Պատեն որք գունտդ արծաթապատ ,  
 Այս եզերաց վերայ փայլէ՛  
 Ի լոյս անոյդ ու մեղրակաթ :

Պե՛տդ արքայից , օ՛ն , երեւէ՛  
 Պայծառ փողփող շողին նըման .  
 Որ ընդ ամսըս օճածեւէ  
 Թաց արտասուօքն առաւօտեան :

## ՀԻՏԱԼԼԱՆ (Ֆէնկալն կողմէն զիւրսն ընդ Կալուստը Քօմալայէ կողմէն համար :)

Իմ դառըն վիշտն , ո՛ն , ո՛ւր տանիս՝  
 Ո՛ւր իմ ցաւերն , ճիւղերն ամբաւ .  
 Մեր պետերը փոյի խածին ,  
 Ասպարակրաց արքայն մեռաւ :

## ՔՕՄԱԼԱ

Ո՞ր թագաւորն կորոյս ըզկեանք .  
 Է՞ր արդեօք նա ճիւղաստիտակ ,  
 Իրըր զեղեամն մարդ ազեանին  
 Կամ ըզկարասլ , սէրն որսորդին .  
 Աներկի՛ւղ էր միթէ իւր աչք ,  
 Ի պատերազմս մահահրաւէր ,  
 Արագասահ տէգն իրը կըրակ ,  
 Թըջնամիները ըսպառէ՞ր :

## ՀԻՏԱԼԼԱՆ (Ձեռք Քեանցիւթ .)

Ո՛ն , չը լեւմ իւր սիրուհին ,  
 Առ ոտս վայրի ժայռին շատած ,  
 Կոչէ ի ձայնն իւր սիրային ,  
 Չայն քաջ զոր արդ է կորուսած .  
 Որդի՛դ գարնան , զեփու թրթռակ ,  
 Բարձ՛ դու զոսկին անոր հերաց ,  
 Յուցո՛ւր ինձ իւր սիրտն ըսպիտակ  
 Եւ ըզկապոյտն ծաւի աչաց :

## ՔՕՄԱԼԱ

Պատասխանէ՛ , ո՛վ գուժարեր ,  
 Ֆէնկալ նընթէ՞ ի քուն հանդարտ .

Այն որ վըտանդն արհամարհէր ,  
Անդգայ չ՞ւր մ' է միայն արդ :

### Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն

Սնկաւ գըլուխ ժողովորդեան ,  
Իւր մարտիկներն չափեն ըզդաշտ .  
Մերձ մահու մը ի խըստութեան  
Մահն զիս ըրաւ միայն ազատ :

### Ք Օ Մ Ա Լ Ա

Ամենուրեք մահ պատէ քեզ ,  
Քեզ՝ վատազգի՛դ դու դասալիք .  
Քանզի արխուր յուզումներէս  
Բերկրին քոյին ախանդիք :  
Մաղթեմ կուսան յուսակըտուր :  
Արդար մահուանդ ախանաուես ,  
Գերեզմանիդ ինկած բոլոր ,  
Դառն արտասուօք անխձէ քեզ :  
Անդ ո՛ւրի՛ք , ինչ որ բարբառեցար  
Ի՞նչ վիճակին լըցո՛ց սոսկումն .  
Դեռ անբոսոյդ կրնար մընալ ,  
Առանց քեզ , իմ թշուառութիւն :  
Շառ մը , ժայռ մը , և կամ ամպեր ,  
Աչերս թերեւըս պատրկին .  
Իմ փառաւոր քաջին պատկեր ,  
Ինձի թերեւս ցուցնելին :

### Պ Օ Ս Ս Ի Ն Ա

Ի՞նչ գըրօջ է յօղըս պարզի ,  
Ի՞նչ ձայն լրսեմ Արփէնի վրայ .  
Քօմալա թո՛ղ նորէն բերկրի ,  
Ձի Մօրփէնի քաջերն ահա՛ :

### Ֆ Ի Ն Կ Ա Լ

Աւանդադա՛հք դուք պերճ փառաց ,  
Ըսկըսեցէ՛ք : քա՛րտք , նուագներն .

Ի ձայն երգոց յաղթականաց  
Ոյս ամայի թընդան վայրերն :  
Ո՛հ Քօմալա , դուստր գեղեցիկ ,  
Նկո՛ւր փառքերս փառաւորել .  
Լըսեմ քու ձայնն սըրտազդեցիկ .  
Այդ ժայռերէն , սէրդ իմ , դո՛ւրս ել :

Ք Օ Մ Ա Լ Ա ( կործելի թէ ֆենիլիս ուրախ-  
նէն ներ կը ետէ . )

Ձիս ալ ամպոցըդ ծոցը տա՛ր ,  
Ո՛վ սիրելիդ ինձ ուրուական :

### Ֆ Ի Ն Կ Ա Լ

Մըրըրկաց և հողմոց ֆէնկալ  
Ձի բընակիր սեւ յօթեւան .  
Նորէն տեսաւ իւր սիրելին ,  
Սեղմէ զանի վերայ սրտին . . .  
Քօ՛մալա , ո՛ն , անձիդ եկո՛ւր ,  
Ժըպտէ ֆէնկալն առ փառաւոր :

### Ք Օ Մ Ա Լ Ա

Դիւցաղնս է սա . . . ձեռքս դողողովուն  
Անկաղթելի ձեռքին դըսչի .  
Ահա՛ իւր դէմքն , ճակատն չողուն ,  
Եւ սեւ մազը որ ծածանի  
Ի շունչ անոյշ հողմոց այգուն :  
Բայց ի՞նչ ըլլամ . . . ո՛հ , նուաղիմ . . .  
Երջանկութեանս շեմ դիմանար .  
Արդէն աչերըս խաւարին ,  
Սեւ ու թանձըր շողում պատեալ :

### Հ Ի Տ Ա Լ Լ Ա Ն

Փըշէ՛ զոգին . . . անտղան յա՛ւ .  
Ինչո՞ւ երկշտ մէկ սիրուհւոյ  
Չանյուսութիւն զարթուցի . բնաւ  
Չերկչոտ գեղնիկն ի փախըստոյ  
Ձր պիտ' բռնեն գամփռուհըն սեաւ .

Եւ ի խաղաղ յերեկոյն  
Բէ որ պիտ' ականջէ ձայնին :

**ՅԷՆԿԱԼ**

Երիտասարդ վայրագակնարկ .  
Հեռացի՛ր շուտ , ասկից փախի՛ր .  
Թո՛ղ ու գընա՛ դիմ դըրօշակ ,  
Գրնա՛ ծերոց մէջ թուլացիր ,  
Յամօթ լուծեան , և միայնակ ,  
Բա՛րտք , զայն չքնաղ կոյսն երգեցէ՛ք ,  
Հեղեղիս քով երգեցէ՛ք զայն .  
Հանդիսապէս ըստփեցէ՛ք  
Թափառացած զայս ուրուական :

**ՐԱՐՏՔ**

Ո՛հ , Քամալա ննջէ անկեան .  
Մարեցան աչքն վասն յաւիտեան ,  
Մահն ըստուերով մ' թընամական ,  
Պատանք եղաւ գեղեցկութեան :  
Ե՛րբ պիտ' բանաս աչքիդ բիրեր ,  
Ո՛վ գեղեցկաց դեղեցկադոյն .  
Ե՛րբ պիտի գաս ի թանձր մէգեր  
Ընկճեւ զայծեամըն ահամոյն :  
Յոգնատըխուր երբոր գիշերն  
Չկապոյտն երկնից սեւացընէ ,  
Ե՛կ հիացո՛ւր մերին աչերն ,  
Եւ ըստ զիպաց զու ծածանէ՛  
Գիշերային քօղիդ ծալքերն ,  
Որ քեզ ի զարդ պիտ' ծառայէ :

**ՕԼԿԱՐ ԵՒ ՍԻՒԼՄԻՆԱ**

Գիշեր խաւարչըտին մըրըրկալից է և տըխուր .  
Արմատախիլ սարոյներ լերանց բարձէն գլորին վայր .  
Եւ ծածանուտ մէտէորայն իրեն տըղար ճառագայթիւքն  
Մըթութեան մէջ մըռնչող լուսաւորէ զալիս միայն :  
Հեռաւոր հորիզոնին ծայրն ու ցամաք թաւուտին վրայ ,  
Ստուեր մը ներկայանայ ահա՛ աչացս իմ ծերացեալ :  
Հառաչէ . գլուխն վայրահակ է և թուի նա թաղծագին .  
Հիւսիսոյ հողմն նորա թանձըր վարսիցն լուծէ հանգոյցներ .  
Եւ այն մէգը , որ գօտւոյ տեղ անոր մէջքին ծառայէ ,  
Թուչելով հանէ ի վեր անոր կողերն այերական :  
Միտ գընենք . . . ա՛հ , այն ի՛նչ ձայն . . . ո՛վ սիրելիդ միշտ ինձ ստուեր ,  
Ազնիւ արիդ Օլկար , ո՛հ , ո՛վ ածէ ըզքեզ իմ քով :  
Միթէ գաս իմ յաչխարհէ մեկնի՛րս ինձի իմաց տալու :  
Աչացս լոյսն , որդիս Օսքար , ըսէ՛ միթէ քու քո՛վն է :  
Ի գագաթունս Արվէնի բնակեալ երկչոտ եղնիկներով  
Որսորդութեան արի զաւակն քու քայլերուն ընկերանար :  
Ա՛հ , չըլլայ թէ արագասահ հողմոց թեւին վերայ նստած  
Երկուքդ ի միասին իջնէք միգոց օթեւանէն :

**ՕԼԿԱՐԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ**

Նընջէ , նընջէ այո՛ անոյչ երգիչն մեծ մեծ փառաց .  
Նընջէ նա , և մըտերիմըն ի գերեզման արդ պարփակեալ ,  
Սպասեն որ Օստիան փառաւորէ զիւրեանց դանուն . . .  
Եւ անոր քընարըն , աւա՛ղ , ահա՛ քակուած մընայ :  
Ի ժայռըս Ղօբէնի , մահն եկաւ հասաւ յիմ ի վերայ ,  
Դու լաւ եւըս դիտես , բարէ՛ , օտարականըն փառասէր ,  
Չգիտելով զիմ անուն , կոխէ 'նդ ոտամբ իմ ածիւններ .  
Օլկար չպիտ' երթայ իւր նախահարցն միանալու :

**ՕՍՍԻԱՆ**

Ա՛հ , թէ կարէի գրկել ըզքեզ գէթ անգամ մ' ալ . . .  
Բայց խոյս տայ նա : Հողմն վըռնաէ անոր մարմինը խաբուսիկ .  
Ինչպէս անօր մի շոգի ցնդի յօդըս յանապատին

Արշալուսով լուսաւորեալ : Ընդ հուսւ մէջէն մթութեան  
 Դուրս պիտի գայ արեգակ , ճառագայթիւքն իւր շողողուն .  
 Մինչեւ նորէն գայ երեկոյ , դաւրանական ուրուականներ  
 Չերկնից զականապարար կապոյտն պարապ պիտի թողուն .  
 Բայց իմ սրտին գիշերը աղջակալին սիւտ՝ ըլլայ միշտ .  
 Եւ դ՛ո՛ւ , դ՛ո՛ւ , ո՛վ թշուաւ , որ հարուածոց ներքեւ ինկար ,  
 Ձոր սիրէի եղբօր մը պէս . ի՞նչ ուրեմն , անզայրոյց  
 Օրհասական քու վէրքըդ իմ հէգ աչացըս ցուցընես :  
 Տակաւին ցայտէ արիւն քոյին կողէն վերաւորեալ :  
 Ազնիւդ Օլկար , ո՛հ , ես եղայ , որու բազուկը մոլեգնեա . . .

Խաւարչըտին անտառէն անցնէի ես դանդաղաքայլ  
 Այն անտառէն որ Օլկարի արքունիքը շրջապատէ .  
 Գեղեցիկ կոյս մը , անոր գորովանացը առարկայն ,  
 Սիւլմինա , քան զարշալոյսըն լուսասփիւռ՝ կանխեւրով ,  
 կապարճն ի յուս , և սաստկալար աղեղն ի ձեռն բռնած ,  
 Թեթեւաքայլ հալածէր և զայծեամբն և զեղըն  
 կարապին փետուրները և նորաէջ ըսպիտակ ձիւնն  
 Անոր ծոցոյն ճերմակութեանն չէին լինէր բնաւ հաւասար .  
 Անապատին նորափթիթ ծաղիկ , եկո՛ւր , սէրս քեզ կոչէ .  
 Գոչեցի . . . Օսիան քու գեղեցկութեամբդ եղաւ արբշիւ . . .  
 « Ո՛վ դիւցազանց պետող ազնիւ , պատասխանեց ինձ այն չքնաղն .  
 « Իմ սիրտը քոյին սրտին հետ միանալ ոչ կարէ .  
 « Սիրեմ ես . — Ո՛հ , երանի՛ անոր ում դու հաւատարիմ .  
 « Ի՞նչ է անունն . գիտէ՞ արդեօք Մօրվէն անոր յաղթութիւններն .  
 « Արժանի՞ է միթէ սիրոյն զոր ծընեցոյց ի քոյդ հոգի .  
 « — Իմ սիրահարն ի յարենէ արքայից է և դիւցազանց .  
 « Ձէն ի ձեռին հաւասարի թերեւըս քեզ , ո՛վ դու արիւ : »  
 Հագիւ ըսաւ այս խօսքերն , աներեւոյթ եղաւ յաչացս .  
 Հէգ սրտիկըս անոր չքնաղ պատկերովը համակ լի ,  
 Մինչ յայնժամ յորում գիշերն գայ սեւցընել զերկնից կամար ,  
 Թափառական յածեցայ յարահետըս մութ անտառին .  
 Մէկ մ՛ ալ յանկարծ գիշերային հանդարտութեան միջոցին . . .  
 Ո՛հ , չեմ սըխալիւր . Սիւլմինա էր որ յառաջէր :  
 Տեսայ զանի , բայց մարտիկ ոք նորա քայլիցը հետեւէր .  
 Լուսնեկին մի ճառագայթն անոր նիզակը փայլեցուց :  
 Լցուած սիրով , ում հրապոյրն մտրեցուց զիս ըզթշուառս ,  
 Խենթի մը պէս վագեցի առ չքնաղ կոյսըն Սիւլմինա :

Դա ծանեաւ զիս . . . ձիջ մ՛ արձրկեց . . . և հետեւողն իրեն մարտիկ  
 Ձինեց զիւր ձեռն ի սուրն հատու և ի նիզակըս մահադաւ :  
 Երկուքնիս ալ պահելով անագորոյն մի լրուութիւն՝  
 Մարտնչեցանք . և լոց հրոյն երկարափայլ , հատանէր  
 Պողպատեայ մեր գէնքերը . և Սիւլմինա աղետաբեկ ,  
 վշտագին հառաչանօք լցուց զանտառն վայրի .  
 Այլ յաղթութիւն ամենուրեք հաւատարիմ է միշտ ինձ .  
 Ոտիցս առջեւ՝ ոյժասպառ և անբարբառ իբրը դիակ ,  
 Մահացու դառն հարուածով մը վիրաւոր , ալ եւս անկար ,  
 Անկաւ այն անծանօթն . և ընդ բեռամբ իւր ծանրութեանն  
 Մինչ ի հեռուստ դղրդեալ սասանեցաւ համակ անտառն .  
 « Մեռնիմ , ըսաւ , և իմ արիւնն սառի , ալ եւս չպիտի հալի .  
 « Բայց գոնէ , երբ ես ըղկեանս իմ թողում , մեծապանծ փառքս  
 « Յաւիտենից նախատանօք մը չհալածուի ամենուրեք :  
 « Հոչակաւո՞ր դիւցազն է որ կորդէ յինէն զիմ կեանս անմեղ .  
 « Բարեկամիս թողում ես որ իմ վըրէժն աւնու . Օսիան . . . »  
 Փըչէ զոգին . . . և ես թշուառըս յուսահատ աղէսորով  
 իմ արտասուօքն ոռոզեցի անոր ճակատը տօգունեալ .  
 Իմ մանկութեան բարեկամըս , արի , ազնիւ Օլկարն էր նա .  
 Եւ ո՛վ կարէ Սիւլմինայ նըկարագրել ըզցաւս սրտին :  
 Իւր բերանն ալ չէր խօսեր , իւր աչքը չէր արտասուեր .  
 Անչարժ էր արձանացեալ . և հրապոյրը գեղեցկութեանն  
 Ո՛հ , թօչնէին ընդ մըթագին մի դալկութիւն քօղարկեալ .  
 « Ո՛վ դու , ում աղետիցն եղեւ պատճառ սիրոյս գորով  
 « Ա՛ն զայս երկաթ , լե՛ր հնազանդ քոյին արդար բարկութեան ,  
 « Բի իրեն . ազատէ՛ զիս աղետալից այս կեանքէն .  
 « Օսիան , ինչպէս որ քեզ նոյնպէս և ինձ թուի զագիր :  
 « Կամ թէ բազուկ քո տըկար չիչխէ վրիժուցըդ ծառայել ,  
 « Մի՛ բառնար յինէն ըզյոյս սիրտեւու քուկին վշտերն :  
 « Եկո՛ւր , նո՞ր որմովք Սէլմայ . Ֆէնկալ , հայրն իմ , իւր բարութեամբն  
 « Եւ մեր կուսանք՝ իւրեանց երդօքն ի վըշտաբեկ քոյին սիրտ  
 « Աճեն թերեւըս առողջարար հանդարտութիւն մ՛ :  
 « Գիտցի՛ր , այո՛ , գիտցի՛ր , իմ ոճիրը էր յակամայս :  
 « Պիտի տեսնես որ ընդ բեռամբ խղճի խայթից պիտի հիւծիմ .  
 « Պիտի տեսնես զանյուսութիւնս , որ հաճելի պիտ՝ ըլլայ քեզ .  
 « Քանզի այն սիրահարին պիտի լինի մահուանն փոխան : »  
 Լըռեցի . այլ Սիւլմինա ալ ոչ եւս կարէր ինձ ականջել .  
 Քնքուչ բազկօքն էր գրկած զարիւնաթուրմ՝ ըղհէգ Օլկար .

Կենաց շունչը արդէն , ո՛հ , թողած էր ըզսրտիկն  
 Սիւլմինայ հաւատարիմ , քաղցրագորով և չքնաղ .  
 Ամբողջ գիշերն արտասուելով անոնց զարթմանն սպասեցի ,  
 Չկարելով վանել յինէն սին մընացորդ սին յուսոյ .  
 Եւ երբ լերանց գլխէն այգուն ելնելը տեսայ ,  
 Նոցա վերայ սփռեցի ըզհող ննջման յաւիտենից :  
 Երգեցի քո մեծապանծ փառաց ներքող յիմ քընար ,  
 Օղկար , սիրելիդ իմ , գոհ լեր և մի՛ վախեր բընաւ  
 Թէ երբէք ելլէ մտքէս քու յիշատակըն ցանկալ՛ :  
 Մի՛ ալ եւս ըզՄօրվէնի չփոթեր ծերոյն ըզհանգիստ :



## Ֆ Է Ն Կ Ա Լ Ի

Ե Ի

## ԼՕՏԱՅԻ ՈՒՐՈՒՍԿԱՆԻՆ

Կ Ռ Ի Ի Ը

Արդեօք ե՞րբ պիտի դառնայ երիտասարդ առոյգ հասակս .  
 Ե՞րբ արդեօք իմ պողպատեայ զինուցըս տակ փայլ ի փայլ ,  
 Պիտի երթամ ի պատերազմս ցուցընելու զիմ արութիւն ,  
 Եւ թագաւոր մը պատժելու իւր եղեռանցըն համար :  
 Ո՛վ Սէլմա , ահա՛ նորէն տեսնեմ բլուրքըդ գեղածիծաղ ,  
 Ներկայանայ Ֆէնկալ աչացս , զոր շուրջ պատեն դիւցազուկը ,  
 Որք յաղթողք վերադառնան իւրեանց դրացի տկար ազգաց .  
 Իմ հայրն , ախոյեանիցըս մէջտեղն է , բարտերուն ,  
 Որք երգեն յաղթութիւններն , քաղցրագորով բարի սիրտն ,  
 Եւ զիւր բազկին զարութիւն յորմէ մեռեալք իսկ երկնջին .  
 Եւ արքայն Մօրվէնի իւր նիզակին վերայ յենած ,  
 Ժպտելով մըտիկ ընէ անոնց երգոցը ռազմական .  
 Ի՞նչ նայուածներ նետէր նա իւր բարկութեան աւուրցը մէջ ,  
 Եւ ո՛րչափ քաղցր էին աչկուքն սպտերազմէ վերադարձին .  
 Բայց , աւա՛ղ , ոչ եւս է մարտիկ արի խնամակալ .  
 Ոչ մէկ աչք կարէ գտնել ալ եւս անոր ոտից դրողմըն .  
 Մօտեցի՛ր , ո՛վ Մալվինա . երեկոյեան փոսփորներ  
 Տե՛ս , յանոյշ ի լոյս լընուն ըզթանձրախիտ զիմ անտառս :  
 Եկո՛ւր նստինք երկուքնիս մէկ՝ սա թաւուտին վերայ տժգոյն ,  
 Երգերով թմրեցընենք մեր վշտերը երկուքնիս ալ .  
 Սէլմայէն ա՛ռ ու բեր իմ բազմազի քնարս մըխիթար .  
 Միացո՛ւր թեթեւ ձայնիկդ իմ տխրագին երգերուն .  
 Յիշատասաց արժանի կռիւ մ՛ պիտի երգէ հիմա բարտն .  
 Տե՛ս թէ Ֆէնկալ ի՞նչ էր ի ծաղիկ տիս կենացն իւրոց :

Մթութիւն քողակէր և՛ ըզերինս և՛ ըզբաշտերն .  
Արին ննջէր հանդարտ ի ճամբարըս թշնամոյն .  
Եւ քընացող մարտիկներուն սաղաւարտները ոսկի  
Ճառագայթներ արձակէին ի պըլլըուն լոյս՝ կաղնիներու .  
Իմ հայրն և եթ , համակ պատեալ վշտիւք և հալ ու մաշ  
Խոյս տայր տակաւին յանոյշ քընոյ հանգստեանէն ,  
Եւ զանստոյգ տարտամ ակնարկն յածեցընէր ըստ դիպաց՝  
Ինիսթօրի պերճ արքունեացն աւերակացը վերայ .  
Արդէն Ֆթիւն եղեամնաչէն անկողնոյ մը ի վերայ  
Բազմած՝ ժպտէր յանոյշ ժըպիտ յաշխարհ յընդհանուր  
Ի խորս մըթին և ամայի սոսկավիթխար անտառին  
Ֆէնկալ զիւր ըզքայլերն ղեկավարէ ղէպ յանոր լոյս .  
Մէկ մ՝ ալ հողմուքը միմեանց բաղխեն և մըռնչեն յողոց պարոյր .  
Լուսաւորք հաստատութեան յանկարծակի մըթանան .  
Եւ կիսահերձ սեւ ամպի մը մըթին ու թանձրը ծոցէն  
Աղվայարոյց հեղու ի վայր մարդախոշոջ մի ուրուական  
Համակ ծածկեալ ի հուր , յարին , և ի սոսկումն մահասարսուռ .  
Սուր հըրաբորբոք զինէր զիւր ձեռն կապարագոյն .  
Կայծակն ցայտէր գրգըռեալ անոր յաչացն արենալից .  
Մահն տարածուէր անոր տժգոյն և գարշելի դիմաց վերայ .  
Եւ՝ դամբանական անոր ձայնին սուր հնչումներ  
Մինչ ցհեռակայս որոտային յարձագանաց կրկնուելով .  
Ֆէնկալ այս սոսկալի տեսարանիս վերայ ժպտի ,  
Եւ յառաջեալ առ ուրուականն նախանձոտ ասէ ցընա .  
« Որդի՛դ դու գիշերոյ , վերադարձի՛ր ի քոյին ամպ .  
« Եւ հողմոցըդ ի վերայ , չո՛ւտ խուսափի՛ր բարկութենէս .  
« Ինչո՞ւ այդպէս վազիր երեւութովդ ներկայանաս .  
« Յուսաս միթէ՞ ատանկով կարե՞ս իմ սիրտն ահ արկանել .  
« Բաշ՛ ինձ , առ ի՛նչ կարող եմ քու նիզակն միգապատ ,  
« Չիւնեղէն քու աղեղն , և քոյին սուր խաբեպատիր .  
« Խաղալիկ եղեալ հողմոց ի միջոցի թաւալգըրիս ,  
« Եւ յուսաս՞ ներշնչել ահ և սոսկում յիմում սրտի . . .  
« Սընտի՛դ դու ուրուական , փախի՛ր շուտով և ծածկուէ՛  
« Այն պատժէն՝ զոր կ'սպառնայ քեզ իմ բազուկըն կաշմբուռն :  
« Չե՞ս գիտեր որ այս անտառաց մէջ մեծապատիւ  
« Ամբողջ ժողովուրդ մ՝ ինձ երկրպագէ և պաղատի .  
« Միթէ՞ ձրգե՛մ այն վայրերը որոց մէջը պաշտեն զիս ,  
« Եւ յորս ամեն խոնարհի նուիրական հրամանիս տակ :

« Իմ ձայնէն գայ ի դուրս և՛ պատերազմ և՛ մահու գոյժ .  
« Իմ ձեռքերն կարգադրեն ճակատագիր հանուրց ազանց ,  
« Իմ առջեւէն անհետանան իբրեւ շոգի անոնց արքայքն .  
« Մինչդեռ ես իմ կապուտակ դահին վերայ հանդարտ բազմած  
« Լըսեմ աշխարհի ամպրոպներու գոռում գոչումն ,  
« Աշխարհի որ իմին ներքեւ իրըր սեւ մէգ մը ծածանի :  
« — Հանգի՛ր ուրեմն քու դահին վերայ շարժական ,  
« Եւ թո՛ղ որ իմին նպատակներս շարունակեմ ,  
« Ֆէնկալ երբէք խոռվե՞ց քու օդային բնակարան .  
« Գընա՛ , ի դուր եմ քոյին ձրգուքը նորա դէմ .  
« Թշնամոյն ըսպառնալից որդիք , թոռուք և համայն տոհմն  
« Չայն երբ տեսնեն դողդըղան անոր առջեւ ի յարգանաց .  
« Մանօթ եմ քոյին անզօր զէնք և զըրահ՝ Ֆէնկալի ,  
« Խընայէ՛ գոնէ իրեն քու տեսիլիդ ըզսոսկումն .  
« — Արքայ՛դ Մօրվէնի , վերադարձի՛ր ի հայրենիսդ .  
« Եւ ես պիտի զսպեմ ըզկատաղի ուժգին հողմերն .  
« Նաւ հեծի՛ր . և կատաղի աղմկայարոյց կոհակաց  
« Պիտ՝ խաղաղէ կատաղութիւնն բազուկն իմ ամենազօր .  
« Քու հակառակորդն է՛ Սուրայի մեծ թագաւորն .  
« Երկար ատենէ՛ վեր անոր փառացն հսկեմ վերայ .  
« Այս վայրկենիս նա պաշարած է ըզլօրս հոյակապ ,  
« Եւ իմ օգնութիւն յաղթութիւնը անոր պիտ՝ տայ :  
« Փախի՛ր ուրեմն , եթէ՛ ո՛չ , վախցի՛ր արդար բարկութենէս : »  
Ուրուականն այս խօսքերով խոնարհելով գլուխըն տըճեւ ,  
Ֆէնկալի դէմ անհեղեղ մըղէ նիզակն իւր միգապատ .  
Այլ դիւցազնըն Մօրվէնի առ ինքն կոչէ զիւր արութիւն .  
Յօդոց պարոյր փայլեցընէ զիւր սոսկալին ըզսուսեր .  
Հարկանէ հատու պողպատն ձեղքէ զմարմինըն խափուսիկ ,  
Ուրուականըն պարտեալ հանէ մի ձիչ հահու սոսկման .  
Յօդըս թաւալգըրէ ըզսոսկալին զիւր զանգուած ,  
Եւ ցրուի , անհետանայ , իբըր շոգի խոնաւ և նուրբ :

# ԱՐՄԷՆ ԵՒ ԿԱԼՎԻՆԱ

Քաջագոյն մարտիկներն իսկ ի խառնուրդըս ճակատուց՝  
Սառած և անկենդան յոտս Արմէնի անկանէին .  
Եւ մութ ու թանձրք անտառաց մէջ Սկանտինափեան՝  
Արջըն հանէր զոգին իւր մահատու նետիւքն խոցեալ .  
Հարիւրաւոր աղբիւրներու վախստական այլքներն  
Այն անտառաց մէջ սընեալ թեթեւաքայլ եղնիկներու  
Հօտերուն թափառական՝ անցընէին ըզծարաւն .  
Եւ անոր կատաղի դամիւռներուն անդր ի հաչիւն՝  
Խաւարչտին և խոր անձաւք որոտընդոտս թնդային :  
Արին՝ անվախն Արմէն այրէր ի սէր Կալփինայի ,  
Կալփինայի՝ այն տըխուր եղերքներու սիրուն ծաղկին .  
Եւ նոյն այն գորով Արմէնի քովն էր քաշած  
Ըզգեղեցիկ դայն կուսան արհամարհոտ և վայրենի :  
Եղեամով ճերմկցած լայնատարած դաշտերուն մէջ ,  
Ի կատարս բարձր լեռանց , ի սլալատըս հոյակապ  
Նա չէր երեւեր իւր ընկերացն ալ եւրս քով :  
Ամեն ոք հիանայր գեղեցկութեանն անոր վերայ :  
Այն աղեղն անձրեւական , որ ոսկեգոյն ամպերու մէջ  
Փայլեցընէ եօթնակամար իրեն շարժուն աղւոր գոյներն ,  
Աստղըն երեկոյեան ում ճառագայթքըն սլալալոււն  
Որք մարած տուընջեան տարածութիւն մըխիթարեն ,  
Չունին անոր չափ սրտագըրաւ և մաքուր փայլ .  
Նորա չընաղ աչերն յանոյշ ծաւի փայլէին .  
Նորա մագերն ի սեւ օղակըս ծածանէր ուսոց վերայ .  
Երբոր արշալոյս իւր նորածին ճառագայթիւքն  
Ձղալարիս զովացընէր , լուսաւորէր և գմեր երկիրն ,  
Աղեղն ի ձեռն , գահավիթէր յանդգնութեանն վրկայ յանտառս ,  
Վարազին հեաքերուն ըզհեա գընայր միշտ աներկիւղ ,  
Եւ առ այն արձակէր հըզօր ի ձեռն մահուան նետեր :  
Այրէր նորուն ի սէր և Կըրիւմալ սեւաթորմին .  
Այլ Կալփինա անոր ըզձիցն չըկամեցաւ պատասխանել .  
Նորա աչկուըք հրապուրեցան ի մի և եթ տեսք Արմէնի .  
Եւ ո՞ր մարտիկն անոր չափ ունէր շընորհ , գեղ , արութիւն :

Օր մը երկուքին ալ , ալ եւրս խոնջ յորտորութեան ,  
Ճակատուընն ծածկուած մարգարտահոս ի քիրտն աղնիւ ,  
Հանդարտութիւն և զովութիւն վայելելու համար մէկուեղ ,  
Նստած էին խաւարչտին քարանձաւի մը ի մէջ ,  
Քարանձաւ ամայի , այլ սիրելի իրենց համար .  
Հոն՝ մըթութեան մէջ ճառագայթներ արձըլկէին  
Այն ասպարներն զորըս երբեմնն կոյեցին իւրեանց նախնիք .  
« Աներկիւղ հանգի՛ր դու աստ , սիրոյս հատոր , առէ զիւցաղնն »  
« Սա սեւագոյն ժայռին վերայ տես թեթեւոտն յաճի այժեամ մ՝ »  
« Օն , երթա՛մ . . . » — Բայց չընաղ կոյսն սլատասխանէ կարմըրելով .  
« Արմէն ինչո՞ւ համար զիս անսպաշտպան թողու՛ս աստ »  
« Չե՞ս գիտեր որ Կըրիւմալ երբեմն յոգնած յանդըթութեանց ,  
« Այս ծառին նստի ներքեւ ըզլուութիւն գտնելու :  
« Ո՛հ , գոնէ հսկէ , սիրեցեալդ իմ , իմ հանգստեանս »  
Արմէն հեռանայ . և Կալփինա , կուսանն երկշտ ,  
Հետեւել կամի դիւցաղին որ հալածէր արդէն զայժեամն :  
Պողպատեայ հագնի զըրահ՝ տըկար ձեռքը առաւ մերկ սուր մ՝ ,  
Ձերեսապան խոնարհելով յանտոյգ քայլ մեկնի արդէն :  
Մէկ մ՝ ալ Արմէն թաւուտներու մէջէն տեսնէ սըրոյն փայլելն ,  
Լի կտտաղութեամբ , ահիւ , սոսկմամբ լարէ զաղեղն .  
Նեաղն թըռի և միտի ի սիրտ մարտիկն խաբեպատիր .  
Թշուա՛ռն յորպիսի՛ցաւ սլալի քաւէ զայս յաղթանակ .  
Ուրախանայ թէ ըզյոխորտ հակառակորդն փրուեց յերկիր ,  
Այլ ինչ արեամբ կարմրցուց զերկիր թշուառըն յուսահատ ,  
Այն արիւնն սեւ , ծըխաշունչ շուշանափայլ ցայտէ ծոցէ մ՝ . . .  
Կալփինա , որ մահամերձ , ներկայանայ սիրահարին :  
Արմէն իրեն հնձած մատաղ ծաղկին վրայ խոնարհած ,  
Ձկարէ թըռիչ տալ վշտացն . . . սուր աղաղակ մ՝ արձըլկէ . . .  
Չօրութիւն թողու ըզնա , և մահ սըմուտի դիմացն վերայ :  
Նընջեցէ՛ք ի նինջ անոյշ այդ վայրենի վիմին ներքեւ ,  
Նորասի սիրահարներ , ոյց արժան էր բաղդ լաւագոյն .  
Նընջեցէ՛ք խաղաղութեամբ ի շընչումն հիւսիսոյ ,  
Ի շըչուն մըրըրկայոյզ և կատաղի մահշող ալեաց .  
Այլ յօղոց սլարոյր սիրեցէք զիրար , և մերթ ընդ մերթ  
Մառախոց զերկինց երես շըջապատած լըռիկ ժամուն  
Խորհրդաւոր և ի ստուերըս ելնելով մերին քով  
Ձեր հառաչանօքն այս վայրերը հիացուցէ՛ք :

# ՕՍՍԻԱՆՈՒ

## ՎԵՐՋԻՆ ԵՐԳԸ

Ո՛վ Միթայ՝ որտաղոջ հեղեղդ , գլորէ՛ թաւաղըլոր  
 կտալուտակ քու ալիքներն հանդարտաւէտ ձորին մէջ ,  
 Անտառք , մեր ծածանուտ հովանիներն հեղէք վերան ,  
 Եւ տօթակէզ տուընջեան ճառագայթներն մեղմացուցէ՛ք .  
 Ոչինչ հեռի ածի ծաղիկըն մենաւոր և երփներանդ  
 Որ , իրեն խոնաւ աղւոր գլուխն դարնանային  
 Ի շունչ սիւզին տատանեցնէ , հառաչանօք թուի ըսել .  
 « Ո՛վ գեփիւտըդ նախանձաւ , թո՛ղ զիս , թո՛ղ որ ցօղին ի մէջ  
 « Կենդ անացնեմ գեղեցկութիւնս որ թօշնելու վերայ է .  
 « Ընդ հուղ բունըս կտարելով ևս հողմերու պիտ' ըլլամ խաղն .  
 « Այսօր սրտորդն լինի արբշխ իմ ի ծոցէս բուրած հոտովս . . .  
 « Ափսո՛ս , պիտի դայ վաղն . . . և ևս վաղը պիտի թօշնիմ : »  
 Վաղը նաև Երբոր գիշեր անտառներու վերայ ձրգէ  
 Լայնատարած իւր դօտին , արի որսորդը այն ատեն  
 Օտիանի անոյշ ձայնն , ո՛հ , ալ եւրս չը պիտ' լըսէ .  
 Լըռութենէն ստակալով , պիտի ուղղէ իւր քայլերը  
 Դէպ յօթեւանն արքայից . և իմ քնարն այրի , անլար ,  
 Իմ բընարն , որուն երգերն զինքը քանիցս յուզեցին ,  
 Ներկայանայ պիտ' իւր աչացն , և յորդահոս արտասուք  
 Անակընկալ իւր տխրութեանն պիտ' սփոփեն ըզձանբութիւն .  
 Եկո՛ւր ուրեմն , Մալլինա , սա հինաւուրց կաղնւոյն տակ ,  
 Այն կաղնւոյն գոր չըջապատեն հողմունք , ամպրոպք և ալիք .  
 Եկո՛ւր քոյին մեռօքն կանգնէ շիրիմ խաղաղական  
 Ուր քիչ ատենէն պիտի հանգչի վերջին դիւցազն .  
 Եկո՛ւր . . . բայց իմ ձայնիս մայրեայ ողին (1) և եթ պատասխանէ :

## ԱԼՊԷՆԻ ՈՐԴԻՆ

Օտիան , Միթայի պարխպներուն քովէն անցայ .  
 Մահասարուտ մի լըռութիւն չըջապատած է գանոնք . . .  
 Մալլինան պիտ' փնտռէի . . . բայց ամբօխըն սրգազգեայ

Պալատի աղջիկներուն իմ աչացըն ներկայացաւ .  
 Նոցին արտ'սուք հոսէին տարաբաղդի մը ի վերայ . . .  
 Աղնիւ որդւոյդ ամուսինն իւր նախահարցը միացաւ .

## ՕՍՍԻԱՆ

Ո՛վ դու , զոր լան ընկերքդ , հանգի՛ր ուրեմն խաղաղութեամբ ,  
 Հանգի՛ր դու անվըրդով այս մըթապատ անտառաց մէջ .  
 Աստղը չքնաղ , քու ճառագայթք տարփատենչիկ և լուսայորդ .  
 Ընդ երկար չփայլեցան ի դագաթունըս լերանց ,  
 Քու հրրատքն իմ ծերացեալ աւուրցն անկումն տաքընէին .  
 Բայց դու զիս մինակ թողեր աղջամղջին խաւարին մէջ .  
 Հառաչանօքս , հեծեմանօքս , դամբանական գանդատներով  
 Մօտիկ լերանց արձագանքներն տաղակացընեմ պիտի ո՛չ .  
 Ո՛չ եւս ես դու . և ի մեր դաշտ մէտէորայն փայլի և եթ . . .  
 Աստղը չքնաղ քու ճառագայթքն տարփատենչիկ և լուսայորդ ,  
 Ընդ երկար չփայլեցան ի դագաթունըս լերանց :  
 Հանգի՛ր դու անվըրդով այս մըթապատ անտառաց մէջ .  
 Բայց գեղեցիկ , փայլակնապատ , լուսաչաւիղ առնուտ թրոփէ  
 Եւ կապուտակ յօթեւանիդ բազմիս ի դահ սակեհու :

Ի դագաթունս Արվէնի թանձրանայր ամպ սեւաթորմն .  
 Որուն կողերն արծաթագոյն ցերկից կամար բարձրանային .  
 Անդ ծածանի հողմոց վերայ պերճ արբունիքըն մըրըրկին .  
 Անդ գահերէց կան բազմեալ , Ֆէնկալ , 'ւ արի իւր նախնիքներ .  
 Իմ հայրն , փայլակնացայտ շողիներով չըջապատեալ ,  
 Ի տըկար ունէր մեռին այերական մի սուսեր .  
 Անոր շուրջը ծածանող պերճ զիւցապանց ուրուականներ  
 Դեռ եւրս յիշէին իւրեանց մարտերըն հինաւուրց .  
 Ականջեր նա իւլլէնի մեղամաղձոտ ողորմ ձայնին .  
 Ալեգարդ բարուն , համագումար այն զիւցազանց ի վերայ  
 Իւր մատերուն ներքեւ ընկճէր դեռ ըզքնարն դանդաչական  
 Եւ անցած գացած դարուց անոյշ երգերը նուագէր :  
 Մալլինա յառաջէ . և հաճելի մի շիկութիւն  
 Ներկէ անոր ճակատըն լուսացող . ըզկայ առնու .  
 Եւ լըռիկ նըկատէ իւր նախահարցն անծանօթ դէմքն .  
 « Ինչո՞ւ համար , ասէ Ֆէնկալ , յիմ քթեւանըն գաս դու .  
 « Ինչպէս առանց խրվճի կրցար զորդին իմ լըքանել .  
 « Քու խոնամըն իւր մըթին կենացն վերջին ժամն պիտ' անուշքէր .

« Ինչ սուգ յանոր պալատն . Իջէ՛ք ի վայր , ո՛վ գեփիւոք .  
« Գացէ՛ք , տարէ՛ք անոր մեր ցաւադին հառաչանքներն : »

Բայց դալկադոյն յարեւմտից , ոսկի ամպի մ' վերայ բազմած  
Ինչ ուրուախան ներկայանայ Մալփինայի աչերուն .  
Ուրախութեան մի ժըպիտ նորա դէմքը ողբերէ ,  
Այն դէմքը՝ զոր մըթին մահն թօշնեցուցած էր երբեմն :  
« Ո՛վ աստղըդ դու սիրոյ , ծանիր անդէն ըզհայրըդ ծեր .  
« Թօղքարն եմ ես : Ո՛հ , արդ եօք ի՞նչ մահատարուեա շունչ դառնաշունչ ,  
« Գու նորատի դեղեցկութեանդ ճառագայթները մարեց .  
« Դուստր իմ , Օսիանի թշուաճութի՛ւնը արտասուես : »  
Ո՛հ , Թօղքար քու վեհ հողին պահէ՛ ի յուշ ըզհէգ Օսիան .  
Օր մը հըր չախն արագա՛նիս իւր թեւերովը թըռչելով  
Մեր յաղթութիւններն ծանուցանէ պիտ՝ ապառնեոյն .  
Եւանդուն մեր ասոյդ տին յայս յանապատս հըռչակեցաւ .  
Մեր ստից տակ մեռանէին շատ դիւցազունք վիրաւորեալ ,  
Իւրեանց խուռըն արեանցը մէջ շաղախեալ բըրբերներն  
Սասանեալ գըրքըդէին արագավաղ մեր քայլից տակ . . .  
Փառք քու անուանդ , սըրայդ սըրոց , գերադ այն պետդ պատերազմաց :  
Ընդ հուպ մեր հողիններն ի նոյն պտղատ պիտ՝ թըռչտին :  
Ըզգամ նուազի ոյժս վատաց ցաւոց 'ւ ամաց ներքեւ :

Առաջնորդէ՛ , Ալպինի որդիդ , յանտուըս ծերունին ,  
Լըծին մըթին այլքն գորբս յուղէ մըրըրկածինն՝  
Ալպիայոյդ անկանին փրփորադէզ եզերց վերայ . . .  
Բարան դամբանամերձ յետին նուագ պիտի երգէ :  
Հեղեղին վերայ շարժի կաղնի մի կին և հաստարուն  
Չոր ձրմուռնք ձերմկցուցին ի վըշուռն սառնաշնչոյ .  
Իմ քընարն ի վայր կախեալ է մերձակոյ անոր ճիւղէն .  
Լըսեմ որ դողոյ այն անապատացըս ի ծոց . . .  
Հո՛ղմն արդեօք , ո՛վ քընարդ իմ , կամ սընտաի մի ուրուական  
Դամբանական հանեն ծայնիս քուկին թեւերը շարժելով :  
Ինչ յուզումն խանդավառէ զիս և յուզէ սրտիս թեւերն .  
Ե՛րբ , որդիդ Ալպինի՝ ո՛վ երգերս , ընկերացէ՛ք  
Յօդոց պարոյր , իմ հօգուոյն յայս աշխարհէս հեռանալուն :  
Մահն երկարատեւ իմ վշտերուն պիտի տայ վերջ :  
Մոնչեցէ՛ք , հիւսիսոյ հօգմք , և պարդեցէ՛ք ձեր թեւերն .  
Յնէնկալ տակ՛ք տարէ՛ք իմին վշտերն հանգիսական :

Ո՛վ Յէնկալ , ահա տեսնեմ ըզքեզ նստած շոգւոց վերայ .  
Դու ա՛լ եւս բանտիներու ահն ու ստսիւմը չես բնաւ .  
Բոցավառ քու բիրբերն ալ չեն ցայտեր մահու նետեր . . .  
Ո՛րչափ տըկար է այժմո՛ւ նա՛ որ երբեմն էր այնքան հզօր :  
Բայց դու վայրակնազուարճոյ , ձեռացըդ մէջ սպահես մըրըրկին .  
Եւ զանի քու քայլերուձ վերայ ցանես ամենուրեք .  
Ի քոյ ծայնն՝ սըտուումն ահեղադոջ դուայ յերկինս ,  
Եւ զայս կըլիմայս զրկես երբեմն դու ի լուսոյ :  
Այլ յորժամ քում բարկութեան ցածնուն զայրուցք , զո՛վ զե՛  
Առաւօտեան գգուէ զառուս , և ի ճակատըս թուփերու  
Խոնաւ ցօղըն դողողոյայ ի կաթիլըս մարդ սրտանման :  
Գարնանայրն արեգակըն հրատներով պահուի .  
Ելլուրն հոտաւէտեալ անուշադոյն բուրումներով՝  
Տեսնէ զայժեամն որ ցաթկաէ նորաթիթիթ մարդաց վերայ .  
Բայց լ'է մըրըրկածինն . շրթոթ ալուսի մը և խուլ՝  
Թաւուտներէն բարձրացաւ , թանձր կաղնեաց մէջը կորեաւ . . .  
Գիւցաղն մի երեւի ինձ , բազմեալ ի կառըս լուսեղէն .  
Կոչէ զիս և հրախրէ որ դէպ առ ինքըն սըլանամ :  
« Օսիան , ասէ նա ինձ , քու վերջին օրը ծագեցաւ .  
« Այ՛նչ պահի իմ համբաւոյն . քու երկերն որք մառք են Սըմայի ,  
« Փողաքչեալ իմ սկանջին վաշուց ի վեր է բաղիտն :  
« Միայնիր , ո՛վ որդեակ իմ , բոլոր զքեզ սիրողներուն .  
« Եկ՛ուր . . . » Այս խօսքերուն կառքն յիմ աչացս եղեւ անհետ  
Եւ իրր անօտըր մի բոց սըացեալ ելաւ ի ծոց ամպոց :  
Դու՛ զոր այնքան սիրելի , դու՛ զոր այնքան արտասուեցի ,  
Ո՛վ մեծագոյնըդ յարգայից . նորէն զքեզ պիտի տեսնեմ ,  
Եւ իմ այնքան ըզձացած հանդստութիւնս պիտ՝ վայելե՛մ :  
Երեկոցեան մըրըրկուտ հողմունք , ձերուկ բերանս պաշատի ձեզ .  
Դադրեցուցէ՛ք ձեր սաստիադոջ միտնչիւններն , օ՛ն ուրեմն .  
Օսիան պիտի ննջէ . . . ջըլայ զանի զարթուցանէք . . .  
Գիշերն երկար պիտի ջըլայ . . . բայց ի՛նչ խորհուրդ դամբանական  
Տրէ՛ հօգուոյս և թուի թէ՛ զայն համակ թօշնեցընէ :  
Ըսէ՛ , որդիդ Յէնկալի , միթէ՛ վախե՛ս դու մահուանէ .  
Չըզիտե՛ս դու տակաւին թէ՛ հոշակաւոր պատերազմիկն  
Եւ մարտիկն անհամբաւ երկուքն ալ պէտք է որ մեռնին :  
Ինչո՛ւ համար ըզքեզ համակ պատող վըշտերուն  
Քանրութիւնը աւելցընես դու վատագոյի ստսիւմներով :  
Ո՛վ տկարըդ ձերուկի . մարդիկ միմեանց յաջորդեն


Մովսէսն ալիքներուն և անտառին տերեւոցն պէս :  
Մի՞թէ զանողոր մահն կակղեցուցի՞ն սակաւիկ մի  
Հըրասդոք Ռի՛նցի և Օսթորի բաղկինքն ոյժ :  
Ֆիլան իբր ծաղիկ մը իւր բունն կորցուած ,  
Մի՞թէ չը թօշնեցա՞ւ Վիւգարի սեւ եղբրցն վերայ :  
Եւ դու , բա՛րաղդ անմիտ , կամի՛ս խոյս տալ գերեզմանէն :  
Վոչուաց և ամաց տակ ա՛նս՝ ընկճի տըկարութիւնդ :  
Մեռի՛ր . փառքդ պիտի աղբի . և մեր վերջի յաջորդներ  
Պիտի տեսնեն որ բարձրանայ նա կաղնւոյ մը պէս վայրի ,  
Որ մըրըրկին որստագոչ յարձակումներն արհամարհէ ,  
Եւ առանց ծերանալոյ հաչուէ օրերն ու տարիներն :

---

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

(1) Հին Միովտիացիք կը կարծէին թէ արձագանքն ողի մ' էր որ անտառաց մէջ կը բնակէր , և արաստանուած խօսքերը կրկնելով կը զուարճանար :

Վ. ԵՐԶ



978 104

« Ազգային գրադարան



NL0359077

